# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

35ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 33 (1733) ՇԱԲԱԹ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 12, 2015
VOLUME 35, NO. 33 (1733) SATURDAY, SEPTEMBER 12, 2015

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## Թուրք-Քրտական Ընդհարումներուն Հետեւանքով Վնասուած է Տիարպէքիրի Սուրբ Կիրակոս Եկեղեցին



Սուրբ Կիրակոս եկեղեցիի կոտրուած ապակիները

Թրքական «Հիւրիէթ» թերթը կը հաղորդէ որ, Տիարպէքիրի Սուրբ Կիրակոս հայկական եկեղեցիի մօտակայքը Քուրտիստանի Բանուորական Կուսակցութեան մարտիկներուն կողմէ տեղադրած ռումբի պայթիւնէն կոտրուած են եկեղեցւոյ ապակիները: Պայթումին յաջորդած հրազէնային կրակոցներէն վնասուած է նաեւ եկեղեցւոյ մուտքի մօտ գտնուող ցուցանակը:

Սուրբ Կիրակոսի սպասաւորներէն Արմէն Տէմիրճեան «Ազատութիւն» ռատիոկայանին պատմած է, որ Երկուշաբթի օր տեղի ունեցած պայթիւնէն եկեղեցին բաւական վնասուած է եւ հիմա ժամանակաւորապէս փակ է: Տէմիրճեան ըսած է, որ պայթիւնի թիրախը հայկական եկեղեցին չէ եղած: Ան նաեւ չհաստատեց տեղեկութիւնները, թէ պայթումը քուրտ զինեալներու կողմէ իրագործուած է. - «Այսօր գացած էինք եկեղեցի: Մաքրեցինք ապակիները, հաւաքեցինք գիրքերը: Այս պահուն բախումները նորէն սկսած են, մենք ալ փակեցինք եկեղեցին եւ դուրս ելանք: Այժմ այն դատարկ է»:

Տիարպէքիրի մէջ տեղի քուրտ երիտասարդներուն եւ թրքական իրաւապահ մարմիններու միջեւ բախումներու հետեւանքով զոհուած է 2 ոստիկան: 11 վիրաւորներէն 8-ը ոստիկաններ են: Կան բազմաթիւ ձերբակալուածներ:

Թուրք-քրդական բախումները հասած են նաեւ Հայաստանին սահմանամերձ Իգդիրի նահանգ:

Թուրքիոյ սահմանին տեղի ունեցած պայթիւնները կը լսուին նաեւ Հայաստանի տարածքին:

## Թուրք Ազգայնամոլները Մահակներով Յարձակած Են «Քամփ Արմէն» Մանկատան Վրայ




Հայ երիտասարդներ պաստառներ պարզած կը շարունակեն հերթապահութիւնը «Քամփ Արմէնի» շուրջ

Պոլսոյ Թուզլա թաղամասի հայկական «Քամփ Արմէն» որբանոցի դէմ Սեպտեմբերի 7-ի գիշերը մահակներով յարձակում տեղի ունեցած է:

Որբանոցի քանդումին դէմ շուրջ հերթապահութիւն հաստատած «Նոր Զարթօնք» շարժումը կը տեղեկացնէ որ, Սեպտեմբեր 7-ի գիշերը մահակներով զինուած 6 հոգի մօտեցած են որբանոցին եւ փորձած են բանալ դարպասները, սակայն հերթապահութիւն իրականացնողները յաջողած են ետ մղել յարձակողներուն:

«Քամփ Արմէնի» հերթապահողները կը զգուշացնեն, որ նմանատիպ յարձակումներ կրնան կրկնուիլ ու անոնք կը խնդրեն աջակցիլ իրենց ու համերաշխութիւն յայտնել:

## Փութին-Սարգսեան Արդիւնաբեր Հանդիպումը Մոսկուայի Մէջ 200 Միլիոն Տոլար Վարկ Զէնք Գնելու Համար



Վլատիմիր Փութին ընդունեց Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանը

Սեպտեմբեր 7-ի երեկոյեան Ռուսաստանի նախագահ Վլատիմիր Փութին ընդունեց Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանին: Հանդիպման մեծ եւ կարեւոր մասը անցած է փակ դռներու ետեւ, սակայն հրապարակուած պաշտօնական հաղորդագրութեան համաձայն, ձեռք ձգուած արդիւնքները եղած են դրական Հայաստանի համար: Ռուսական կողմը 200 միլիոն տոլարի վարկ տրամադրած է Հայաստանին եւ նուազեցուցած է գազի գինը:

«Այսօր էներգետիկայի նախարարութեան հետ համաձայնագիր ստորագրեցինք, որը թոյլ կը տայ գազի գինը 25 տոլարով նուազեցնել՝ հասցնելով 165 տոլարի: Ստորագրուել է նաեւ Հայաստանին 200 միլիոն տոլար արտօնեալ վարկ տրամադրելու համաձայնագիր, եւ դա թոյլ կը տայ թարմացնել հայկական Զինուած ուժերի զինանոցը», - Փութինի հետ հանդիպման մասին ըսած է Սերժ Սարգսեան:

Հայաստանի նախագահը շնորհակալութիւն յայտնած է Ռուսաստանի նախագահին՝ գիւմրեցի ընտանիքի 7 անդամներու սպանութեան մէջ մեղադրուող ռուս զինծառայող Վալերի Փերմեակովի քրէական գործը հայկական արդարադատութեան յանձնելու համար:

Սարգսեան շնորհակալութիւն յայտնած է նաեւ անձամբ Փութինին՝ ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման ուղիներու որոնման ուղղութեամբ իր թափած ջանքերուն համար: Հայաստանի նախագահը իր մտահոգութիւնը յայտնած է Հայաստանի եւ Ատրպէյճանի սահմանին տիրող լարուածութեան կապակցութեամբ:

«Վերջին երկու շաբաթներին սահմանում շատ լարուած է. ատրպէյճանական կողմը բացի խոշոր տրամաչափի զինատեսակներից կիրառում է նաեւ հրետանային զէնք: Իհարկէ, մենք ստիպուած ենք պատասխան տալ: Ես դրա մասին աւելի մանրամասն կը խօսեմ Տուշանպէում՝ ՀԱՊԿ գագաթաժողովի ժամանակ», - ըսած է Սարգսեանը:

Փութին նախ ողջունած է իր հայաստանցի գործընկերոջը ու շեշտած է, որ անոր հետ յաճախակի կը հանդիպի: Ռուսաստանի նախագահը ըսած է, որ Ռուսաստանը կը մնայ Հայաստանի յառաջատար առեւտրային գործընկերը, սակայն անոր հետ մեկտեղ արձանագրած է, որ ընթացիկ տարուայ առաջին կիսամեակին երկու երկրներու միջեւ ապրանքներու շրջանառութիւնը նուազած է:

Շար.ը էջ 4




## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Ինչ է բացայայտել զօրավարժութիւնը

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ

Հայաստանում իրականացուող «Շանթ 2015» համապետական հրամանատարաշտաբային զօրավարժութիւնը, որի անցկացմանը ներգրաւուած է ամբողջ հանրապետութիւնը, ըստ պաշտօնական հաղորդագրութիւնների անցնում է կազմակերպուած, իրականացւում է ըստ ծրագրուածի եւ սահմանուած նպատակների, պետական կառավարման կառոյցները լիովին կատարում են իրենց վրայ դրուած պարտականութիւնները:

Դժուար է պատկերացնել, որ զօրավարժութեան ընթացքում ի յայտ եկող անհարթութիւններն ու խնդիրները կազմէին պաշտօնական հաղորդագրութիւնների մաս: Ի վերջոյ կան մի շարք հանգամանքներ, որոնք այդօրինակ անհարթութիւնների առումով կարեւոր են համարւում ոչ թէ դրանց հրապարակումը, այլ՝ արձանագրումը եւ դրանց շտկմանն ուղղուած քայլերը:

Զօրավարժութեան ընթացքում առանցքային խնդիրը, որ պէտք էր պարզել, հանդիսանում է Հայաստանի տնտեսութեան վիճակը՝ որքանո՞վ է Հայաստանի տնտեսութիւնը պատրաստ ռազմական մասշտաբային գործողութեան:

Ի՞նչ պատկեր է պարզուել «Շանթ 2015» զօրավարժութեան ընթացքում, կամ ինչ պատկեր է պարզւում: Պատրա՞ստ է Հայաստանի տնտեսութիւնը ռազմական մասշտաբային գործողութեան: Ընդ որում, խնդիրը իհարկէ լոկ ռազմական գործողութիւնը չէ: Հայաստանը փաստացի գտնւում է նաեւ տնտեսական պատերազմի մէջ, կամ, պատերազմ հասկացութիւնը միշտ էլ ու առաւել եւս ժամանակակից աշխարհում, լինի լոկալ, լայնամասշտաբ, հիբրիդային, դանդաղ, թէ արագ, անխուսափելիօրէն ենթադրում է նաեւ տնտեսական բաղադրիչ:

Թոյլ տնտեսութեամբ պետութիւնը չի կարող լինել մարտունակ, պաշտպանունակ: Ընդ որում, այստեղ չափազանց էական է մի հարց, յատկապէս Հայաստանի տնտեսութեան պարագայում, որի զգալի մասը ստուերային է:

Տնտեսական ի՞նչ մեխանիզմներով են լուծւում Հայաստանի պաշտպանունակութեան խնդիրները: Մի առիթով, դեռեւս պաշտպանութեան նախարար եղած տարիներին՝ երբ Ատրպէյճանը յայտարարում էր Հայաստանի ամբողջ պետական պիւտճէի չափ միայն ռազմական պիւտճէ ունենալու մասին, Սերժ Սարգսեանը յայտարարեց, որ Հայաստանի ռազմական ոլորտի ծախսը չի լինի Ատրպէյճանից ոչ մի լումա պակաս:

Այդ յայտարարութիւնն արւում էր լոկ հանրութեան հանգստութեան համար եւ ունէր միայն քարոզչական նշանակութի՞ւն, թէ իսկապէս այդպէս էր, պարզ չէ: Բայց, այդ յայտարարութիւնը եւ ընդհանրապէս իրերի այդօրինակ վիճակը չի կարող լինել հանգստացնող, որովհետեւ հասարակութեան համար շատ կարեւոր է իմանալ, թէ ինչպէս է ֆինանսաւորւում պետութեան պաշտպանունակութիւնը: Աւելին, այդ պաշտպանունակութիւնը պէտք է ֆինանսաւորի հենց հասարակութիւնը, որովհետեւ դա է անվտանգութեան եւ պաշտպանունակութեան առանցքային բաղադրիչներից մէկը՝ երբ հանրութիւնն ինքն է իր կեանքի կազմակերպման միջոցով հոգ տանում իր անվտանգութեան ու պաշտպանութեան մասին, որը ժամանակակից աշխարհում պետական մեխանիզմն է:

Հակառակ դէպքում միշտ հարց է առաջանում, թէ ո՞վ կամ ի՞նչ աղբիւր է ֆինանսաւորում այն, ինչ չի կարողանում կամ չի բաւականացնում հանրային ռեսուրսից: Որովհետեւ այդ դէպքում նշանակում է, որ պետութեան պաշտպանունակութիւնը կախուած է տուեալ աղբիւրից, ոչ թէ հասարակութիւնից:

Լիովին հասկանալի է, որ ռազմական ոլորտը, ինչպէս նաեւ անվտանգութեան հետ առնչուող մի շարք մասնագիտացուած ոլորտներ ունենում են այսպէս ասած «ստուերային պիւտճէներ»: Բայց դա լիովին այլ խնդիր է: Առաջին հերթին, հանրային ռեսուրսներով պէտք է ապահովուի պաշտպանունակութեան նուազագոյն անհրաժեշտ մակարդակը, իսկ այլ ռեսուրսները կարող են լինել ընդամէնը յաւելեալ խնդիրներ լուծող ռեսուրսներ:

Ահա այդ տեսանկիւնից շատ կարեւոր է, որպէսզի Հայաստանի անվտանգութեան ու պաշտպանունակութեան խնդիրները առաւելագոյնս սպասարկուեն Հայաստանի հանրային միջոցներից: Իսկ դրա համար անհրաժեշտ է տնտեսութիւնում ստուերի եւ կոռուպցիայի դէմ պայքար, միաժամանակ տնտեսութեան զարգացում եւ աճ: Դրանք ընդհանուր առմամբ փոխկապակցուած հանգամանքներ են՝ կը լինի ստուերի եւ կոռուպցիայի դէմ պայքար՝ կը լինի զարգացման ու աճի էական նախադրեալ:

Գրեթէ վստահաբար կարող ենք պնդել, որ այդ իմաստով «Շանթ 2015» զօրավարժութեան արձանագրած պատկերը չի կարող լինել գոհացուցիչ: Հայաստանի տնտեսութեան ներկայիս վիճակը խիստ անհամարժէք է թէ զինուած ուժերի պատրաստուածութեանը, թէ այն գործառոյթին ու առաքելութեանը, որ ունեն նրանք կարճաժամկէտ ու երկարաժամկէտ առումով: Աւելին, տնտեսութեան այդ վիճակը պատկերացնելու համար ամենեւին չկայ զօրավարժութեան կարիք, քանի որ տնտեսական վիճակը հանրութիւնը անմիջականօրէն զգում է իր մաշկի վրայ:

Ըստ երեւոյթին, զօրավարժութեան նպատակը եղել է այն, թէ ինչ է հնարաւոր տնտեսութեան ներկայիս վիճակի պայմաններում: Բայց դա պարզելն էլ թերեւս աւելորդ է, որովհետեւ տնտեսութեան ներկայիս վիճակի պայմաններում ամէն օր սահմանուած հնարաւորը, ամէն յաջորդ օր կարող է արդէն դառնալ անհնար: Հայաստանում հարկաւոր է հրատապ անել հնարաւորն ու անհնարը տնտեսութեան վիճակը փոխելու համար:

«ԼՐԱԳԻՐ»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժներ հոն արտայայտուող բոլոր միտքերը

# Իսկ ովքե՞ր են Սերժ Սարգսեանի թիմում

ՄԱՐԿ ՆՇԱՆԵԱՆ

Ռոբերտ Քոչարեանը երեւի կարգին բարկացած է Սերժ Սարգսեանի վրայ: Մարդը պարզ ասում էր՝ քանի Սերժը կայ, ինքը մեծ քաղաքականութիւն չի վերադառնայ, որովհետեւ «երկու ղարաբաղցիների միջեւ մրցակցութիւնը» մի քիչ սիրուն չի նայուի:

Այսինքն՝ ինքը կը վերադառնայ միայն 2018-ին, երբ Սերժ Սարգսեանն այլեւս իր թեկնածութիւնն առաջադրելու իրաւունք չի ունենայ, եւ «երկու ղարաբաղցիների մրցակցութեան» հարցը մէջտեղից դուրս կը գայ: Բայց Սերժ Սարգսեանը «դաղալութիւն արեց»՝ որոշեց փոխել Սահմանադրութիւնն ու պահպանել իշխանութիւնը: Ու հիմա Քոչարեանը բարկացած է՝ ոչ միայն Սերժ Սարգսեանի, այլեւ ինքն իր վրայ: Որովհետեւ ժամանակին չի անդրադարձել ու այդ տրիւկն ինքը չի արել: Համ էլ՝ ՀՀԿ-ն չի վերցրել, որպէս անպէտք մի բան տուել է Սերժին, իսկ ինքն աջուձախ յայտարարել է, թէ «իմ կուսակցութիւնը ժողովուրդն է», ու բաւարարուել է նրանով, որ ՀՀԿ նախընտրական ցուցակը, միեւնոյն է, ինքն է հաստատում: Պարզ ասած՝ հաշուի չի առել «ոհմակի ուժը» (սխալ չհասկանաք, բնորոշումը Սերժ Սարգսեանի բառապաշարից է):

Ու հիմա հանրապետականները տեսախցիկների առջեւ յայտարարութիւններ են անում, թէ Ռոբերտ Քոչարեանը չի վերադառնայ, որովհետեւ «թիմ չունի»: Իսկ ահա Սերժ Սարգսեանը, պարզւում է, թիմ ունի, եւ այդ թիմն իրենք են: Աւելի լաւ է փորձենք հասկանալ, թէ ի՞նչ է իրենից ներկայացնում Սերժ Սարգսեանի «թիմը», եւ ովքե՞ր են ընդգրկուած այդ թիմում:

Սկսենք ՀՀԿ-ի «հին գուարդիայից»: Այստեղ հաւաքուած են մարդիկ, ովքեր ճամբարափոխ լինելու հարցում որեւէ կոմպլեքս չունեն՝ Լեւոն Տէր-Պետրոսեանի օրօք էլ են իշխանական համակարգում եղել, Ռոբերտ Քոչարեանի օրօք էլ, Սերժ Սարգսեանի օրօք էլ: Սրանց մէջ ե՛ւ «մի գիշերուայ մէջ» երկրապահ դարձածներ կան, ե՛ւ Սերժ Սարգսեանի հրաժարականը պահանջածներ ու յետոյ նրա թրի տակով անցածներ: Խօսք չկայ, շա՛տ ամուր յենարան է:

Թիմի միւս «սեկտորը» դեռեւս խորհրդային տարիների կուսակցական կարիերիստներն են՝ նրանք, ովքեր Հայաստանի անկախացումից յետոյ յաջողութեամբ մտան ՀՀՇ, յետոյ ճիշտ ժամանակին դարձան հանրապետական, Քոչարեանի օրօք անպայման բասկետբոլ էին խաղում, իսկ հիմա՝ շախմատ, բայց հոգով-սրտով մնացել են նոյն սովետական չինովնիկները՝ ցանկացած եղանակի «կաստում-շըլըւարով», «պադաւատ 24-ով» ու ընդյատակեայ լիմոնադի ցեխով: Սրանց համար բացարձակապէս միեւնոյն է՝ շէֆը հանրապետական կը լինի, սոցիալ-դեմոկրա՞տ, թէ՝ նացիոնալ-ֆեմինիստ: Ինչ էլ լինի՝ նրանք նաղդ «շէֆի թիկունքին կայնած են»: Բայց հենց որ նոր շէֆ յայտնուեց՝ անմիջապէս կը կանգնեն նրա կողքին:

Թիմի անդամներ են նաեւ օլիգարխները, թաղային, քաղաքային ու մարզային մասշտաբի «աւտարիտետները», միշտ օրուայ իշխանութիւնների գովքն անող մտաւորականները եւ այլն: Բայց սրանք նոյնպէս եղել են բոլոր իշխանութիւնների օրօք ու շարունակելու են լինել, այսինքն՝ սրանց նոյնպէս «թիմ» անուանել չի կարելի: Այլ հարց է, որ բազմաշերտ այս խառնամբոխն ինքն իրեն թիմ է համարում, ու իբր դա քիչ է՝ հիմա էլ փորձում է երկիրը տանել դէպի «թիմային կառավարում»:

Բայց արդե՞ք այդ թիմն ընդհանրապէս որեւէ կապ ունի պետական կառավարման հետ: Վերցնենք Սերժ Սարգսեանի «ամենահաւատարիմ թիմակիցներին»՝ Գալուստ Սահակեանին, Շմայսին, Էդուարդ Շարմազանովին, գեներալ Մանուկեանին, Սամուէլ Ալեքսանեանին, Սուրիկ Խաչատրեանին եւ այլն: Սրանցից ո՞ր մէկը կապ ունի պետութեան համար կարեւոր որոշումներ կայացնելու հետ: Բացարձակապէս ոչ մէկը: Սրանք ընդամէնը շէֆի գոյութիւնն են ապահովում՝ մէկը փողով, միւսը ձայներ ապահովելով, երրորդը ճառեր ասելով, եւ այդպէս շարունակ: Ու առաջին իսկ հնարաւորութեան դէպքում այդ ամէնը կ'ապահովեն մէկ ուրիշի համար: Այնպէս որ, պնդումը, թէ իբր Ռոբերտ Քոչարեանը (կամ մէկ ուրիշը) թիմ չունի, կոպիտ սխալ է: Այդպէս պնդողները՝ «նուիրեալ հանրապետականները եւ միւսները, հենց իրենք են Քոչարեանի (կամ իշխանութեան յաւակնող մէկ ուրիշի) թիմը:

Ու հիմնական պրոբլեմը հենց դա է:

«ՉՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

Մասիս
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in
US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

# Րաֆֆի Յովհաննիսեանն ու Լեւոն Տէր-Պետրոսեանը միասի՞ն են պայքարելու Սահմանադրական բարեփոխումների դէմ

*Սահմանադրական բարեփոխումների դէմ պայքարում հնարաւոր է «Ժառանգութիւնն» ու ՀԱԿ-ը համագործակցեն: Այս մասին NEWS.am-ի թղթակցին ասաց «Ժառանգութիւն» կուսակցութեան փոխնախագահ Արմէն Մարտիրոսեանը:*

*«Մեր միաւորումը ոչ միայն հնարաւոր է, այլեւ անհրաժեշտ է: Մենք համագործակցելու ենք արտախորհրդարանական այլ ուժերի հետ նոյնպէս: Սա ոչ թէ քաղաքական ուժերի կամ անձերի խնդիր է, սա պետութեան ընդհանուր խնդիրն է դարձել: Չեմ կարծում, որ նախկին համագործակցութեան ձախողումն ինչ-որ պատճառ կարող է լինել, որ չհամագործակցենք: Մենք ՀԱԿ-ի հետ համագործակցել ենք 2008թ., եռեակի ձեւաչափով»,- ասաց Արմէն Մարտիրոսեանը:*

*Նրա խօսքով՝ առաջիկայում արդէն միաւորման գործընթաց է սկսուելու, միասնական ճակատ է ձեւաւորուելու, որից յետոյ պայքարի ձեւերը կը մշակուէն եւ կը կատարուեն:*

*Դիտարկմանը, թէ Հայաստանի երկրորդ Նախագահ Քոչարեանն էլ է, ըստ տարբեր լուրերի, պատրաստուում միանալ «Ոչ»-ի ճամբարին, «Ժառանգութեան» փոխնախագահը նշեց. «Կարծում եմ, սա իշխանութիւնների կողմից նետուած խայծ է՝ հասարակութեանն ընդդիմութիւնից հետ պահելու համար: Քոչարեանը չի խօսել, նրա պաշտօնական ներկայացուցիչը չի խօսել, բոլորը խօսում են»:*

*Յիշեցնենք, որ «Ժառանգութիւնն» ու ՀԱԿ-ը խորհրդարանական միակ ուժերն են, որոնք Սահմանադրական բարեփոխումներին յստակ դէմ են արտայայտուել: Նշենք, որ այս ուժերը ժամանակին միասին պայքարում էին եռեակի ձեւաչափով՝ ԲՀԿ-ի հետ: Սակայն Գագիկ Ծառուկեանի՝ ԲՀԿ-ն լքելուց յետոյ եռեակը մասնատուեց:*

# «Չէ՛նք Անցկացնի» Շարժումն Աւարտել է Բանակցութիւնները Քաղաքական Ուժերի Հետ

*Սերժ Սարգսեանի նախաձեռնած սահմանադրական փոփոխութիւնների դէմ պայքարող «Չէ՛ք անցկացնի» շարժումն աւարտել է բանակցութիւնները քաղաքական ուժերի հետ՝ պատրաստուելով առաջիկայ համաժողովին, որտեղ հրապարակելու են «Ոչ»-ի միասնական ուղերձը:*

*Նախաձեռնութեան անդամ Արշակ Մուսախանեանի փոխանցմամբ, իրենց հետ պայքարելու պատրաստակամութիւն են յայտնել Լեւոն Տէր-Պետրոսեանի գլխաւորած Հայ ազգային կոնկրէսը, Ստեփան Դեմիրճեանի՝ Հայաստանի ժողովրդական կուսակցութիւնը, Ժիրայր Սէֆիլեանի նախաձեռնած Հիմնադիր խորհրդարանը: Պատասխանի են սպասում նաեւ փոփոխութիւնները մերժող Հրանդ Բագրատեանի «Ազատութիւն» եւ Րաֆիի Յովհաննիսեանի գլխաւորած «Ժառանգութիւն» կուսակցութիւններից: Նախաձեռնութեան հաւաքին մասնակցելու են նաեւ փաստաբաններ, քաղաքացիական շարժումներ, դրական պատասխան կայ «Ո՛չ թալանին»-ից, գուցէ միանայ «Ոտքի՛ Հայաստան»-ը:*

*Համաժողովը, Մուսախանեանի փոխանցմամբ, կենտրոնանալու է ոչ թէ հրապարակուած նախագծի բովանդակութեան, այլ այն քաղաքական մթնոլորտի վրայ, որում իշխանութիւնները ուզում են անցկացնել հանրաքուէն. - «Ընտրութիւնները կեղծուել են, եւ ընտրութիւնների նկատմամբ չկայ վստահութիւն հանրութեան մօտ: Սահմանադրական փոփոխութիւններ նշանակում է հանրաքուէ եւ ընտրական պրոցէս: Ոչ լեգիտիմ իշխանութիւնները իրաւունք չունեն ոչ մի առումով նախաձեռնել սահմանադրական փոփոխութիւններ: Սերժ Սարգսեանը իր գործիչների հետ կազմակերպում է ֆոտոսեսիա, մենք էլ փորձելու ենք իսկապէս ընդդիմադիր ուժերի եւ միաւորների հետ դիմադրութեան ճակատ ստեղծել»:*

*Հռչակելով «Ոչ»-ի շարժման մեկնարկը՝ երիտասարդները օգտուելու են պայքարի տարբեր միջոցներից: Այցելելու են մարզեր, առաջին հանրահաւաքը ամենըմբոստ քաղաքի համբաւն ունեցող Գիւմրիում կլինի, ապա ցոյցեր խորհրդարանի դիմաց:*

# ՀՀԿ-ին «Ոչ»-ի Շարժումը Չի Անհանգստացնում

*Հայաստանի Հանրապետական Կուսակցութիւնը սահմանադրական բարեփոխումների դէմ պայքարող «Ոչ»-ի շարժումն արտառոց չի համարում ու անհանգստութեան պատճառ չի տեսնում: Այս մասին NEWS.am-ի հետ զրոյցում ասաց ԱԺ ՀՀԿ խմբակցութեան պատգամաւոր Յովհաննէս Սահակեանը:*

*«Ինչպէս Սահմանադրութիւնը, այնպէս էլ միւս օրէնքները, կարող են ունենալ կողմնակիցներ կամ ոչ կողմնակիցներ, որոնք չեն կիսի այդ տեսակէտը, կ'ունենան այլ մօտեցումներ: Այլ մօտեցումներ ունեցող մարդիկ այս դէպքում «Ոչ»-ի կողմակիցներն են: Որեւէ արտառոց բան չեմ տեսնում դրա մէջ, որ մեզ մտահոգի: Մտահոգիչն այն է, որ պէտք է ամէն ինչ անենք, որ կարողանանք «Ոչ»-ի կողմնակիցներին համոզել մեր տեսակէտը»,- ասաց Յովհաննէս Սահակեանը:*

*Անդրադառնալով հարցին, որ «Ոչ»-ի շարժմանը քաղաքական ուժեր են միանում, Յովհաննէս Սահակեանի նշեց, որ ինքը խնդիր չի տեսնում դրանում. «Այս կամ այն հարցի շուրջ հանրութեան մօտ կայ խնդիր, ակտիւիստները փորձում են այդ խնդիր լսելի դարձնել, իսկ եթէ կան այնպիսի տեսակէտներ, որ քաղաքական ուժերը կիսում են, թող միանան»:*

*Հարցին՝ արդեօք «Ոչ»-ի շարժմանը կը յաջողուի տապալել Սահմանադրական բարեփոխումների անցկացումը Յովհաննէս Սահակեանը նպատակայարմար չհամարեց պատասխանել:*

# Օմբուդսմենը Սահմանադրութեան Փոփոխութիւններում Ականներ է Տեսնում



**Հայաստանի Մարդու իրաւունքների պաշտպան Կարէն Անդրեասեան**

*Հայաստանի Մարդու իրաւունքների պաշտպան Կարէն Անդրեասեանը, Սահմանադրութեան նոր նախագծում բազմաթիւ դրական փոփոխութիւններ տեսնելով հանդերձ, նշում է՝ կան ականներ, որոնք կարող են պայթել:*

*Օմբուդսմենը եզրակացութիւն է հրապարակել՝ մարդու իրաւունքների, դատական իշխանութեան ու մարդու իրաւունքների պաշտպանի մասին գլուխներում առաջարկուող փոփոխութիւնների վերաբերեալ:*

*«Ցաւալի մի ճշմարտութիւն կայ այս ամբողջ գործընթացում: Ո՛չ լաւն է, ո՛չ վատն է, որովհետեւ ընդհանրական որեւէ գնահատական տալը միայն քաղաքական կողմնորոշման նշան է», - ասում է Անդրեասեանը:*

*Մարդու իրաւունքների մասին գլխում, օրինակ, օմբուդսմենը դրական է համարում այն, որ դատական սխալի պատճառով պատժուած անձը իրաւունք կ'ունենայ պետութիւնից փոխհատուցում ստանալ: Նաեւ ճիշդ է համարում Սահմանադրութեամբ ամրագրելը, որ կանայք եւ տղամարդիկ իրաւահաւասար են:*

*Կարէն Անդրեասեանը, սակայն, մտահոգուած է, որ նախագծից դուրս են մնացել գործող Սահմանադրութեամբ ամրագրուած՝ պետութեան պարտաւորութիւնները մայրութեան ու մանկութեան հովանաւորման, գիտութեան, կրթութեան, մշակոյթի, առողջապահութեան, սոցիալական ապահովութեան եւ բնութեան պահպանութեան բնագաւառներում:*

*«Այսինքն, մենք նորից պնդում ենք, որ կան խնդիրներ, որոնք դու, այսօր սահմանելով քո Սահմանադրութեան մէջ, ուղենիշ ես տալիս քո հանրութեանը, որ դու ձգտում ես դէպի այդ բարձունքը: Այլ բան է, որ կարելի է ասել՝ հանենք, որովհետեւ դրանք խաբուսիկ բարձունքներ են եւ մարդիկ հիասթափւում են. գրուած է, բայց դա չկայ», - պարզաբանում է օմբուդսմենը:*

*Նա նաեւ մտահոգութիւն ունի, որ այս նախագծի ընդունման դէպքում Սահմանադրութեամբ չեն ապահովուի անհիմն խուզարկութիւնից պաշտպանուելու երաշխիքները. - «Հանուել է այն դրոյթը, որը լրացուցիչ երաշխիք էր բոլորիս համար: Հիմա այդտեղ համարել են, որ այլ կարգաւորումով դա կը լուծուի»:*

# Փոստանջեանը Պատրաստ է Նպաստել «Ապազգային Ծրագրի Տապալմանը»



**«Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւոր Զարուհի Փոստանջեան**

*Ընդդիմադիր պատգամաւորը կարեւորում է հասարակութեան մոբիլիզացիան Սահմանադրութեան փոփոխութիւնների դէմ պայքարում:*

*«Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւոր Զարուհի Փոստանջեանը, սահմանադրական փոփոխութիւնների գործընթացը որակելով «փորձանք» եւ «ծուղակ» ժողովրդի համար, պատրաստակամութիւն է յայտնում նպաստել, իր բնորոշմամբ, «ապազգային» այս ծրագրի տապալմանը:*

*«Ազատութեան» հայկական ծառայութեան ղեկավար Հրայր Թամրազեանի հարցազրոյցում ընդդիմադիր պատգամաւորը կարեւորեց հասարակութեան մոբիլիզացիան այս պայքարում:*

*«Պէտք է դու ունենաս յստակ, լուրջ քաղաքական գործողութիւնների ծրագիր, իսկ դա պէտք է անի ողջ ժողովուրդը, ոչ միայն մի հասարակական խմբի խնդիրն է, ոչ միայն մէկ կուսակցութեան խնդիրն է, այլ պէտք է լինի մոբիլիզացիա ողջ հասարակութեան կողմից: Ես դրան նպաստելու եմ», - ասաց Փոստանջեանը:*

*Խորհրդարանական ուժերից սահմանադրական փոփոխութիւնների դէմ պայքարում փաստօրէն մնացել են երկուսը՝ «Ժառանգութիւն»-ն ու Հայ Ազգային Գոնկրէսը. Փոստանջեանը համագործակցութիւն պատկերացնում է:*

*Սահմանադրութեան փոփոխութիւնների նախագիծը պատգամաւորը համարում է դէպի կառավարման աւտորիտար համակարգ տանող փաստաթուղթ, ինչը հնարաւորութիւն կը տայ Սերժ Սարգսեանին ու «Նրա խմբին անընդմէջ վերարտադրուել». - «Ոչ միայն այդ մէկ անձն է վերահսկելու, մէկ կուսակցութեան է վերապահուելու այդ հնարաւորութիւնը: Որը եղել է, օրինակ, սովետական ժամանակաշրջանում: Սա մեզ տանելու է 25 տարի առաջուայ մոդելին»:*

*Դիտարկմանը, թէ, այդուհանդերձ, նախագահի աշխատասենեակում թեժ քննարկումներ են ընթանում, ընդդիմադիր պատգամաւորն արձագանգեց. - «Սերժ Սարգսեանը Հայաստանի Հանրապետութեան նախագահը չէ: Նա Կրեմլի յաճախորդն է, եւ նոյն այս յաճախորդի սկզբունքով էլ իր մօտ գնացել են քաղաքական ուժերի ներկայացուցիչներ, որոնք չեն ներկայացնում հանրութեան կարծիքը»:*

*«Ազատութեան» դիտարկմանը, թէ նախագահական այցելողների թւում էին նաեւ «Ժառանգութիւն» խմբակցութեան անդամները, Փոստանջեանն այսպէս արձագանգեց. - «Դա մասնաւոր հանդիպում է, որը չի ներկայացնում մեր կուսակցութեան կարծիքը»:*

## ԼՈՒՐԵՐ

### «Ատրպէյճանը Չպէտք է Ռազմական Գերակայութիւն Զգայ». Փորձագէտ

Շատ կարեւոր է, որ Ատրպէյճանը ռազմական գերակայութիւն չզգայ: Այս իմաստով պէտք չէ չափազանցնել ռազմական ոլորտում Ռուսաստանի եւ Ատրպէյճանի մերձեցումը:

Այս մասին «Ռուսաստան-Հայաստան. յարաբերութիւնների ներկայիս վիճակն ու հեռանկարները» թեմայով Երեւան-Մոսկուա տեսակամուրջի ժամանակ յայտարարել է ԱՊՀ երկրների ինստիտուտի Կովկասի բաժնի ղեկավար, ռազմական փորձագէտ Վլադիմիր Եւսէեւը:

Նա յիշեցրել է, որ Հայաստանի եւ Ռուսաստանի նախագահների հանդիպման արդիւնքում Մոսկուան 200 մլն դոլարի վարկ է տրամադրել ժամանակակից սպառազինութիւններ գնելու համար: «Այս սեպտեմբերից նոր լարուածութիւն է սկսուել: Ինձ՝ որպէս ռազմական փորձագէտի, դա դուր չի գալիս: Օգտագործուող զինամթերքի մակարդակը գնալով բարձրանում է: Մենք տեսնում ենք, որ մահանում են ոչ միայն ճակատի գծում գտնուող մարդիկ, հակամարտութիւնը ծաւալւում է:

Ռուսաստանը կողմ է իրավիճակի կարգաւորմանը եւ դէմ է լարուածութեան սրմանը: Պէտք է բարձրացնել ծանր զինամթերքը որոշակի հեռաւորութեան վրայ հետ քաշելու հարցը: Իրավիճակը սրւում է, եւ այդ մասին պէտք է բացայայտ ասել»,- նշել է փորձագէտը:

Հարցին, թէ կարելի է ենթադրել, որ սպառազինութիւններ գնելու համար Ռուսաստանի տրամադրած գումարը վկայում է այն մասին, որ բանակցային գործընթացը զիջում է իր դիրքերը, Վլադիր Եւսէեւը պատասխանեց. «Ռուսական վարկը ուժերի բալանսը վերականգնելու հնարաւորութիւն է տալիս: Դրանից յետոյ բանակցութիւնների պայմանները կը բարելաւուեն: Եթէ շփման գծում ուժերը հաւասարակշռուած են, կարելի է բանակցել ծանր սպառազինութիւնները հետ քաշելու շուրջ»:

### Թուրքիային Անհրաժեշտ է Լաւ Յարաբերութիւններ Հայաստանի Հետ




Հայ- թրքական յարաբերութիւններու վերաբերեալ քննարկման մասնակիցները

Հայաստանի ու Թուրքիայի յարաբերութիւններում փոփոխութիւնների կարելի է սպասել Նոյեմբերի 1-ին տեղի ունենալիք խորհրդարանական ընտրութիւններից յետոյ: Ասում է ազգութեամբ չերքեզ վերլուծաբան Օզգյուր Ունլուհիսարչիկլին՝ հայ- թուրքական յարաբերութիւնների վերաբերեալ քննարկմանը:

«Եթէ էրդողանի կուսակցութիւնը կոալիցիա կազմի ազգայնական ուժերի հետ, դա կարող է որոշակի խոչընդոտ հանդիսանալ Հայաստանի հետ աւելի բաց յարաբերուելու համար: Իսկ եթէ կոալիցիան կազմուի հանրապետականների հետ, կարելի կը լինի յարաբերութիւններն աշխուժացնել»:

Ըստ նրա՝ Թուրքիան այժմ յայտնուել է բարդ իրավիճակում. մեկուսացուած է արտաքինից, գոյութիւն ունի նաեւ ներքին հակամարտութիւն ու այդ երկիրը զգում է կայուն հարեւանի կարիք:

«Թուրքիային անհրաժեշտ է լաւ յարաբերութիւններ Հայաստանի հետ, եւ երբ գայ բանակցութիւնների յաջորդ փուլը, անհրաժեշտ կը լինի ապակապակցել հայ-թուրքական յարաբերութիւնները ղարաբաղեան կոնֆլիկտից եւ Ատրպէյճան-Հայաստան յարաբերութիւններից»:

Քաղաքական գործիչ Դաւիթ Շահնազարեանն էլ նշում է. «Որդեգրելով զրօ պրոբլեմներ հարեւանների հետ՝ Թուրքիան կարծես թէ մնաց առանց հարեւանների»:

Դաւիթ Շահնազարեանը լաւատես չէ երկու երկրների միջեւ յարաբերութիւնների մերձեցման առումով: Նրա համոզմամբ՝ այս իրավիճակում Հայաստանն ու Թուրքիան պէտք է փորձեն յարաբերութիւնները պարզել առանց միջնորդների, քանի որ ոչ բոլոր երկրներն են ցանկանում աջակցել յարաբերութիւնների բարելաւմանը:

Լիովին չեն օգտագործուած երկու երկրների բիզնես յարաբերութիւնների հնարաւորութիւնները: «Թուրքիայի տնտեսական քաղաքականութեան հետազօտութիւնների հիմնադրամի» հետազօտութիւնների համաձայն՝ Թուրքիան Հայաստան ներմուծում իրականացնող 39-րդ երկիրն է: Կազմակերպութեան ներկայացուցիչ Ուսալ Սահբազն ասում է. «Թուրքիայի համար հետաքրքրական կարող է լինել Հայաստանի տեղեկատուական ոլորտը: Հայաստանում գործում է տեխնոլոգիական այնպիսի ընկերութիւն, ինչպիսին Picsart-ն է: Թուրքական կապիտալն այստեղ հնարաւորութիւն ունի դրսեւորուելու»:

Ըստ փորձագէտների՝ անկախ նրանից, թէ ինչպիսին կը լինեն Հայաստանի ու Թուրքիայի քաղաքական յարաբերութիւնները, պէտք է անխուսափելիօրէն տեղի ունենայ հասարակութիւնների մերձեցումը:

### Թուրք-Քրդական Բախումները Արդէն Հայաստանի Սահմանին Են Հասնում

Թուրք-քրդական բախումները հասել են Հայաստանին սահմանամերձ Իգդիրի նահանգ:

Պայթիւնի հետեւանքով 14 թուրք ոստիկան զոհուել է, 2-ը՝ վիրաւորուել: Իգդիր է մեկնել Թուրքիայի ներքին գործերի նախարարը:

Թուրքիայի սահմանին գրանցուած պայթիւնը լսուել է նաեւ Հայաստանի տարածքում: Տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարարութեան հաղորդմամբ՝ առաւօտեան ժամը 09.46-ին ահազանգ է ստացուել, որ Արարատի մարզի Ռանչպար գիւղում պայթիւնի ձայն է լսուել: Պարզուել է, որ պայթիւնը տեղի է ունեցել Արարատի մարզի Նորամարգ գիւղից 5 կմ հեռաւորութեան վրայ՝ Թուրքիայի տարածքում:

Նախօրէին Թուրքիայի հարաւարեւելեան Հաքյարի նահանգի Դաղլըջա շրջանում 16 զինուորի մահուան պատճառ դարձած յարձակումից յետոյ Թուրքիայի նախագահ Թայիփ Էրդողանը նախագահական նստավայրում անվտանգութեան նիստ է հրաւիրել: Շուրջ մեկուկէս ժամ տեւած ժողովին մասնակցել են վարչապետ Ահմէտ Դաւութօղլուն, Մեջլիսի նախագահ Իսմէթ Եըլմազը, Գլխաւոր շտաբի պետը, նախարարներ եւ բարձրաստիճան այլ պաշտօնեաներ: Նիստի ժամանակ քննարկուել են ահաբեկչական յարձակումներն ու անվտանգութեան միջոցառումները:

Հաքյարիից Հիւսիսային Իրաք անցած քուրդ զինեալների ոչնչացման համար սկսուած ռազմաօդային գործողութիւնները շարունակւում են: Հրադադարի խախտման համար հակամարտող կողմերը փոխադարձաբար մեղադրում են միմեանց:

«Մենք այս ժողովրդի ապագան 3-5 ահաբեկչի ու դաւաճանի չենք թողել եւ չենք թողնելու: Մինչեւ օրս Թուրքիան բազմաթիւ դժուարութիւններ է յաղթահարել, կարող է լուծել նաեւ ահաբեկչութեան հարցը», - յայտարարել է Էրդողանը:

Մի շարք վերլուծաբաններ Թուրքիայում արտահերթ ընտրութիւնների անցկացման որոշումից յետոյ կանխատեսել էին երկրում այսօր ստեղծուած ներքաղաքական պատկերը: Նրանք պնդում են, թէ վերջին ամիսներին յաճախակի դարձած թուրք-քրդական բախումները, որոնք օրէցօր աւելի են սաստկանում, սպառնում են խափանել Նոյեմբերի 1-ին նշանակուած խորհրդարանական ընտրութիւնները: Մասնաւորապէս երկրի քրդաբնակ շրջաններում, որտեղ քրդամէտ Ժողովուրդների դեմոկրատական կուսակցութիւնը ձայների մեծամասնութիւն էր հաւաքել, անվտանգ ընտրութիւնների անցկացումը հարցականի տակ է:

«Արդարութիւն եւ զարգացում» կուսակցութեան մրցակից քաղաքական ուժերը, քննադատելով նախագահ Էրդողանի գործողութիւնները, նրան մեղադրում են բախումներ հրահրելու եւ գալիք ընտրութիւնների անվտանգութեանը սպառնալիք ստեղծելու մէջ: Ընդդիմադիր Ժողովրդա-հանրապետական կուսակցութեան փոխնախագահ Հալուք Քոչը օրերս յայտարարել էր, թէ Էրդողանին չի յաջողուելու համոզիչ յաղթանակ տանել Նոյեմբերի 1-ի արտահերթ ընտրութիւններում, եւ որ այդ քուէարկութիւնը վերջ է դնելու նրա քաղաքական կեանքին:

### Ռուսաստանը Ստեղծում է Հակաօդային Միասնական Համակարգ Հայաստանի, Ղրղըզստանի Եւ Տաճիկստանի Հետ



Ռուսաստանը ծրագրում է Հայաստանի եւ ՀԱՊԿ երկու այլ դաշնակիցների՝ Ղրղըզստանի եւ Տաճիկստանի հետ ստեղծել միասնական հակաօդային պաշտպանութեան համակարգ:

Ինչպէս հաղորդւում է, հայ-ռուսական համաձայնագրի նախագիծը՝ Կովկասի տարածաշրջանում միասնական համակարգի ստեղծման վերաբերեալ անցել է ներպետական համաձայնեցման փուլը եւ պատրաստւում է ստորագրման:

«Յոյսով եմ՝ այս տարի կ'աւարտուի համաձայնեցումը», - ասել է ՌԴ գլխաւոր շտաբի պետ, Օդատիեզերական ուժերի հրամանատարի առաջին տեղակալ, գեներալ-լեյտենանտ Պաւել Կուրաչենկոն:

Նմանատիպ համաձայնութիւնները Ղրղըզստանի եւ Տաճիկստանի հետ գտնւում են ներգերատեսչական համաձայնեցման փուլում:

Յիշեցնենք, որ ԱՊՀ մասնակից պետութիւնների Պաշտպանութեան նախարարների խորհրդին կից ՀՕՊ հարցերով համակարգող յանձնաժողովի հերթական նիստը տեղի կ'ունենայ 2016թ. Ապրիլին:

### Թուրք Ազգայնամոլները

Շարունակուած Էջ 1-էն

Յայտնենք, որ Պոլսոյ «Քամփ Արմէն» մանկատունը 1987-ին գրաւուած էր թրքական իշխանութիւններուն կողմէ, այնուհետեւ վաճառուած էր թուրք գործարարի մը: Այս վերջինս ալ որոշած է քանդել մանկատունը եւ բարձրարժէք տուներ կառուցել: Հասարակական ճնշման հետեւանքով՝ մանկատան քանդումը ժամանակաւորապէս դադրած է:

Այս մանկատան մէջ մեծցած են նաեւ Հրանդ Տինք եւ անոր կինը՝ Ռաքէլ Տինք:

## ՔՈՊԱՆԻԷՆ ԹՈՒՐՔԻԱ ՏԵՂԱՓՈԽՈՒԱԾ ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԷՆ ԵՐԵՔԸ ԱՐԴԷՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՆ



*Սուրիոյ Քոպանի քաղաքի երեք ընտանիքներ Սեպտեմբեր 3-ին մեկնեցան Հայաստան, մօտաւորապէս տարի մը շարունակ Թուրքիոյ գաղթականներու ճամբարին մէջ բնակելէ ետք:*

*Հայաստան ժամանած Քոպանիի բնակիչ Սօսի Թովմասեան պատմեց, որ Քոպանիէն Թուրքիա տեղափոխուած են դէպքէն ետք, երբ Սուրիոյ մէջ զինեալ ահաբեկիչներու կողմէ սպաննուած էր իր հօրեղբայրը: «Ատկէ ետք մեր կեանքը անտանելի դարձաւ: Մենք մինչեւ հիմա այդպիսի ցաւ չէինք ապրած: Հօրեղբօրս մահէն ետք որոշեցինք որ պէտք է փախչինք»,- ըսաւ Սօսի:*

*Ան պատմեց որ Թուրքիա տեղափոխուելէ ետք ատեն մը ապրած են դպրոցի մը սենեակներուն մէջ, իսկ յետոյ վրանային ճամբարի մը մէջ: «Մենք Քոպանիէն փախանք եւ Թուրքիոյ սահմանը անցանք, տարի մը Թուրքիոյ մէջ մնացինք: Մեզի հետ հոն շատ աղէկ կը վարուէին, ոչ մէկ անգամ նեղութիւն ապրեցանք»,- ըսաւ ան:*

*Սօսի Թովմասեան դիտել տուաւ որ Հայաստան տեղափոխուելու առաջարկը իրենց ըրած էր Թուրքիոյ Պատրիարքական Փոխանորդ Արամ Սրբազան ու ան օգնած էր, որ իրենք Հայաստան փոխադրուէին:*

*Սօսի նաեւ նշեց որ Քոպանիի մէջ կ՚ապրէին հինգ հայ ընտանիքներ, որոնք բոլորն ալ լքած են քաղաքը: Միւս երկու ընտանիքներէն մէկը մնացած է Սուրիա՝ Թուրքիոյ վրանային ճամբարներէն մէկուն մէջ, իսկ միւսը մեկնած է Ֆրանսա: Երեք ընտանիքները, որոնք 13 անդամներ ունին, պիտի բնակին Կիլիկիա Թաղը, վարձու բնակարաններու մէջ:*

## Ալեքսանդր Մանասեան. «Բաքուն եւ Անգարան Ստուգում են Երեւանին եւ Մոսկուային»

*Կրեմլում նախօրէին Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը հիւրընկալեց Սերժ Սարգսեանին: Ընթացիկ տարում սա նրանց երրորդ հանդիպումն է: Հանդիպումը յաջորդեց Բաքւում Ատրպէյճանի նախագահի եւ Ռուսաստանի ԱԳ նախարարի բանակցութիւններին, որոնք կայացան սահմանագծին իրավիճակի թէժացման ֆոնին, սակայն, ինչպէս սպասւում էր, սանձող բնոյթ չունեցան:*



*Քաղաքագէտ Ալեքսանդր Մանասեան*

*«Ինչի՞ մասին է խօսում այդ սրացումը: Ռուսաստանը կը ցանկանայ Ատրպէյճանին ունենալ որպէս հարեւան, դա հասկանալի բան է, բայց այդ բոլորը չպէտք է ուղղուի հենց ռուսական շահերին Անդրկովկասում: Ռուսաստանն Անդրկովկասում ունի շահեր, եւ եթէ Ատրպէյճանը տանում է այնպիսի քաղաքականութիւն, որն իր շահերին է հակասում, Ռուսաստանը պէտք է իմաց տա դրա մասին»,-ասում է քաղաքագէտ Ալեքսանդր Մանասեանը:*

*Իրավիճակին աւելի սուր գունաւորում տուեց հայկական «Շանթ 2015» զօրավարժութեան անցկացումը, թէեւ այն աւելի շատ ոչ ռազմական բնոյթ էր կրում: Դրանց աւարտից յետոյ Ատրպէյճանը յայտարարեց լայնամասշտաբ զօրավարժութիւնների անցկացման եւ 65 հազար հոգու մոբիլիզացիայի մասին:*

*Ալեքսանդր Մանասեանի խօսքով՝ լարելով մթնոլորտը՝ Անգարան եւ Բաքուն ստուգում են ոչ միայն Հայաստանի դիմացկունութիւնն, այլեւ Կրեմլի հնարաւոր արձագանքը. «Թէ՛ Բաքուն, թէ՛ Անգարան ցանկանում են ստուգել մեզ եւ Ռուսաստանի վարքը՝ ինչքա՞ն արժանի հակահարուած կ՚ստանան: Ռուսաստանն ունի այստեղ ռազմավարական շահեր: Հայաստանին մենակ չի թողնի. Վրաստանն ու Ատրպէյճանն իրենը չեն: Մեզ ստուգում են, եւ ինչքան տեսնեն, որ թոյլ ենք, այնքան ագրեսիւ կը լինեն»,-ասում է քաղաքագէտը:*

*Միւս կողմից Հայաստանը լուրջ բացթողումներ ունի տեղեկատուական եւ քարոզչական պայքարում: Մինչդեռ Ատրպէյճանը մեծ գումարներ է ծախսում սեփական քարոզչութեան տարածման եւ համաշխարհային հանրութեան առջեւ Հայաստանը որպէս ագրեսոր ներկայացնելու համար:*

*«Քարոզչութիւնը գիտութիւն է, եւ այն պահանջում է հետեւողականութիւն: Մենք թերանում ենք: Մենք քարոզչական տեխնոլոգիաների գծով բարձրակարգ մասնագէտների կարիք ունենք, մեր քարոզչութիւնը ճիշդ չենք տանում՝ առաջատար կայքերից սկսած: Արդէն երբ լուել ենք, այդ խնդիրը ճիշդ չենք ներկայացրել, Ատրպէյճանին խաղաքարտեր ենք տուել մեր դէմ արդարացի պատերազմ վարելու. դա շատ վատ բան է»,- ասում է պարոն Մանասեանը:*

## ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ՃԱՆՉՑԱԾ ԹՈՒՐՔ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԴԷՄ ԴԱՏԱԿԱՆ ԲՈՂՈՔ



*«Կիւնտեմ քիպրիս» լրատուական կայքը գրած է, թէ Հայոց Ցեղասպանութեան մասին յայտարարութիւն կատարած Թուրքիոյ քրտամէտ Ժողովուրդներու Ժողովրդավարութիւն կուսակցութեան անդամ ու Եւրոմիութեան հարցերով Նախարար Ալի Հայտար Քոնճայի դէմ դատական բողոք ներկայացուցած է Իզմիր նահանգէն Ճոշքուն Քըլըճ անունով քաղաքացի մը: Դատական հետապնդում պահանջող իր դիմումին մէջ, Քըլըճ գրած է, որ Քոնճայի յայտարարութիւնը «թշնամանք կը սերմանէ» եւ չի նպաստեր Թուրքիոյ մէջ տիրող ներկայ անկայուն իրավիճակը կայունացնելու ջանքերուն:*

*Յիշեցնենք, որ Թուրքիոյ ժամանակաւոր կառավարութեան նշեալ նախարարը, պատասխանելով Ցեղասպանութեան վերաբերեալ իրեն ուղղուած հարցումին՝ ըսած էր. «Յստակ է, որ կոտորած եղած է: Այս իրողութիւնը բոլորն ալ կ՚ընդունին»:*

*Քոնճայի յայտարարութիւնը քննադատած են նաեւ իշխող Արդարութիւն եւ բարգաւաճում, ինչպէս նաեւ գլխաւոր ընդդիմադիր՝ Հանրապետական ժողովրդային կուսակցութիւնները: «Թայմթիւրք» լրատուական կայքը կը գրէ, թէ՝ իշխող կուսակցութեան խորհրդարանական խմբակցութեան նախագահի պաշտօնակատար Ահմետ Այտըն այդ յայտարարութիւնը «անպատասխանատու» որակած է, իսկ հանրապետականներուն խորհրդարանական խմբակցութեան ղեկավարի պաշտօնակատար Էնկին Ալթայ, ժխտելով Հայոց Ցեղասպանութեան փաստը՝ ըսած է, որ Համաշխարհային Ա. պատերազմին «ցաւալի դէպքեր» տեղի ունեցած են, եւ աւելցուցած, որ Քոնճայի յայտարարութիւնը «սխալ է եւ ծանր դրութեան մէջ կը դնէ Թուրքիան»:*

*Յայտարարութիւնը թրքական մամուլին մէջ եւս մեծ աղմուկ բարձրացուցած է եւ արժանացած է քննադատութեանց:*

## Հռոմի Պապ. «Հայերին Հալածում Էին Միայն Այն Պատճառով, Որ Նրանք Քրիստոնեայ Էին

*Հայերն աշխարհում առաջինն են ընդունել քրիստոնէութիւնը՝ որպէս պետական կրօն եւ հալածանքների են ենթարկուել միայն այն պատճառով, որ քրիստոնեայ են: Այս մասին յայտարարել է Հռոմի Պապ Ֆրանցիսկոս Առաջինը Սեպտեմբերի 7-ին Հայ կաթողիկէ եկեղեցու նորընտիր պատրիարք Գրիգոր Պիէռ Գաբրոյեանի հետ անցկացրած համատեղ պատարագից յետոյ:*

*«Հայ ժողովրդին հալածում էին, վտարում հայրենի հողից՝ անօգնական թողնելով անապատում»,- նշել է պոնտիֆիկոսը:*

*Ողջունելով հայ պատրիարքին, հոգեւորականներին եւ հաւատացեալ հայ ժողովրդին՝ Հռոմի Պապը նշել է, որ ուզում է յիշել այդ հալածանքները, յիշել բոլոր այն մարդկանց, ովքեր խոշտանգումներից, քաղցից եւ ցրտից մահացել են միայն այն պատճառով, որ քրիստոնեայ են:*

*Առօթքի ժամանակ պոնտիֆիկոսը անդրադարձել է նաեւ մեր օրերում քրիստոնեաների հալածանքներին՝ նշելով, որ դա տեղի է ունենում աշխարհի ուժեղների թողտուութեամբ:*

## ԹՈՒՐՔԻ ՄԸ ԳՈՂՑԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԿԻՊՐՈՍ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԱԾ Է

*Հայկական ձեռագիր Աւետարանը, որ գողցուած էր Թուրքիոյ կողմէ հիւսիսային Կիպրոսի բռնագրաւումէն ետք, այժմ Կիպրոս վերադարձուած է:*



*Ըստ «Ֆամակուսթա» թերթին՝ ընդհանուր առմամբ 173 մասունք վերադարձուած է Կիպրոս: Անոնք վերադարձուած են, երբ Գերմանիոյ վերաքննիչ դատարանը վերջնական որոշում կայացուցած է Թուրքիոյ կողմէ բռնագրաւուած Կիպրոսի շրջաններէն Թուրք մաքսանենգներու գողցած գանձերուն մասին:*

*Գանձերը, որոնց մէջ կային եկեղեցիներու որմնանկարներու կտորներ, սրբապատկերներ, հայկական ձեռագիր Աւետարանը եւ նախապատմական հնութիւններ, յայտնաբերուած էին 1997-ին, Միւնիխ ապրող Թուրք մաքսանենգի մը բնակարանին մէջ:*

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

## ՖՐԱՆՍԱՀԱՅԵՐԸ ԿԸ ՄԻԱՆԱՆ ՆԵՐԳԱՂԹԵԱԼՆԵՐԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԱԶՆԱՒՈՒՐԻ ԿՈՉԻՆ



Ֆրանսայի հայկական կազմակերպութիւններու համակարգող խորհուրդը կը միանայ աշխարհահռչակ հայազգի շանսոնիէ, Զուիցերիոյ մէջ Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Շառլ Ազնաւուրի՝ Եւրոպա ժամանող ներգաղթեալներուն Ֆրանսայի հեռաւոր գիւղերուն եւ քաղաքներուն մէջ ընդունելու կոչին:

«Արցախփրես»-ը կը հաղորդէ՝ վկայակոչելով Nouvelles d'Armenie-ն, «Սուրիան, որ Հայոց ցեղասպանութեան տարիներուն դարձաւ բազմաթիւ հայերու ապաստան, այսօր կը տեսնէ, թէ ինչպէս իր ժողովուրդը բռնած է աքսորի ուղին:

Չկայ օր մը, երբ սուրիացիները չփորձեն ապաստան գտնել եւ վերակազմել իրենց բնականոն կեանքը Եւրոպայի մէջ: Շառլ Ազնաւուր Սեպտեմբեր 1-ին կոչ ըրաւ Ֆրանսային իր ներդրումը բերելու փախստականներուն ապաստան տալու գործին: Փախստականները վտանգի եզրին են, սակայն այդ տղամարդիկ եւ կանայք ունին մեծ ներուժ՝ իրենց հմտութիւններով ու աշխատուժով: Ֆրանսայի հայ համայնքը, հաւատարիմ ըլլալով համերաշխութեան ոգիին Սուրիոյ ժողովուրդին հետ, որոնք իրենց դռները բացին 1915-1916 թուականներուն հայերուն առջեւ, չի կրնար անտարբեր ըլլալ անոնց նկատմամբ: Այսօրուան ներգաղթեալները կրնան Ֆրանսայի համար դառնալ այցեքարտ եւ անոնց հնարաւորութիւն տալու պարագային յաջողութեամբ ծառայել Ֆրանսային՝ տարբեր ոլորտներու մէջ: Ատոր համար ալ Ֆրանսայի հայկական կազմակերպութիւններու համակարգող խորհուրդը կը միանայ Շառլ Ազնաւուրի կոչին, որպէսզի իր ներդրումը բերէ փախստականներուն օգնութիւն ցուցաբերելու եւ գոյութիւնը պահպանելու գործին», - ըսուած է յայտարարութեան մէջ:

Շառլ Ազնաւուր հանդէս եկած է Եւրոպա ժամանող գաղթականներուն օգնելու կոչով: «Ես ծանր տառապանք կ'ապրիմ, երբ կը տեսնեմ այդ մարդոց բազմութիւնները, որոնք կը թափառին իրենց երեխաներուն հետ: Բարեբախտաբար, ես անձամբ չեմ ճաշակած նման վիճակի դառնութիւնները, բայց վստահ եմ, որ անոնք բաժին հասած են իմ ներգաղթեալ ծնողներուս: Հարկաւոր է հոգ տանիլ անոնց ապագայի մասին, բարելաւել անոնց վիճակը»,- ըսած է Ազնաւուր:

Այդ առնչութեամբ ան յիշեցուցած է իր կողմէ արդէն առաջադրուած գաղափարին մասին, այն է՝ գաղթականները բնակեցնել Ֆրանսայի հեռաւոր բնակավայրերու, փոքր քաղաքներու ու գիւղերու մէջ, որոնք գործնականօրէն լքուած են տեղի բնակիչներուն կողմէ:

«Այդպիսով, այդ բնակավայրերը կը համալրուին նոր ուժով: Այդ գաղթականներուն մէջ կան ամենատարբեր մասնագիտութիւններու տէր մարդիկ՝ բժիշկներ, մեքենագէտներ, հացթուխներ: Անոնց ջանքերը թոյլ կու տան այդ աւաններու մէջ վերաբանալ դպրոցները, նամակատնային բաժանմունքները» - նշած է աշխարհահռչակ շանսոնիէն:

www.massispost.com

## ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՒ ԳՐԻԳՈՐ ՋԱՆԻԿԵԱՆԻ «ՔՍԱՆՆԵՐԸ ԵՒ ՔՍԱՆ ՀԱԶԱՐՆԵՐԸ» ՎԷՊԻՆ ՇՆՈՐՀԱՀԱՆԴԷՍԸ



Հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ Ս.Դ.Հ.Կ. կեդրոնական վարչութեան անդամ ընկերներու, 7 Օգոստոսին «Աւետիք Իսահակեան»ի անուան կենդրոնական գրադարանի հանդիսասրահին մէջ տեղի ունեցաւ հայրենի լրագրող եւ վիպասան Գրիգոր Ջանիկեանի «Քսանները եւ Քսան Հազարները» վէպին շնորհահանդէսը: Նշենք, որ հանդիսութեան բացման խօսք արտասանեց կեդրոնական գրադարանի տնօրէնուհի, ՀՀ մշակոյթի վաստակաւոր գործիչ՝ Յասմիկ Կարապետեան: Տեղի ունեցաւ գինեձօն մասնակցութեամբ Պէյրութի «Արարատ» պաշտօնաթերթի տնօրէնուհի Տիկ. Անի Եփրեմեանի:

Ապա նորալոյս հատորին մասին զեկուցում կարդաց Հայաստանի Գրողներու Միութեան քարտուղար, բանասիրական գիտութիւններու թեկնածու՝ Տիար Պետրոս Դեմիրճեան: Ձեռնարկին երկրորդ զեկուցողն էր Լիբանանի խորհրդարանի նախկին անդամ, պատմաբան ընկ. Եղիա Ճէրէճեան: Նշենք, որ հանդիսութեան նոյնպէս ելոյթ ունեցան Հայաստանի լրագրողներու միութեան նախագահ տիկ. Աստղիկ Գէորգեան եւ ազատամարտիկ, կամաւորական 2-րդ վաշտի փոխհրամանատար, պատմաբան տիար Յակոբ Ասլանեան: Հանդիսութեան աւարտին շնորհակալութեան խօսքով հանդէս եկաւ վէպին հեղինակը՝ Տիար Գրիգոր Ջանիկեան: Նշենք, որ հանդիսութեան ներկայ եղան Ս.Դ.Հ.Կ. պատասխանատու ընկերներ, ինչպէս նաեւ խումբ մը հայրենի եւ սփիւռքահայ մտաւորականներ եւ գրողներ:




ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ՀԵՌԱՁԱՅՆԵԼ (626) 797-7680

Bedros S. Maronian 818/500-9585
Siamanto B. Maronian 818/269-0909
SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs
6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048
805 East Broadway Glendale, CA 91205
300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101
• Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability
• Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning
• Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B
A.B.A. INSURANCE SERVICES
New York Life, Anthem, BlueShield, Aetna, Health Net, CIGNA, Kaiser Permanente
Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits
Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Անհրաժեշտ Է
Coverage & Protection should be on the top of your priority list.



# ԱՐՄԷՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԵԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԲԱԶՄԱԲԵՂՈՒՆ 60-ԱՄԵԱԿԸ

«Երեւան, Երեւան, իմ միակ օթեւան,
Ես կ'անցնեմ կը գնամ, դու ապրիր յաւիտեան»:

Խօսք՝ ԱՐԱՄԱՅԻՍ ՍԱՀԱԿԵԱՆԻ
Երաժշտ. ԱՐՄԷՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԵԱՆԻ

**ԽԱՉԻԿ ՃԱՆՈՅԵԱՆ**



Շաբաթ, Սեպտեմբեր 19-ին, երեկոյեան ժամը 7-ին, Սփիւռքի եւ Հայրենիքի ողջ հայութիւնը Արմէն Մանդակունեանի պատուաբեր անունին եւ բազմամեայ հարուստ վաստակին վայել ձեռնարկով մը, պիտի նշէն եւ մեծարեն հայ ժողովուրդի թանկագին զաւակներէն, մեր ժողովուրդի երգարուեստի անկրկնելի մեծութիւններէն Արմէն Մանդակունեանի բազմաբեղուն եւ բազմերես ծառայութեանց 60-ամեակը:

Հանդիսութիւնը տեղի պիտի ունենայ Փասատինայի Նազովրեցի եկեղեցւոյ "Paz Naz" ընդարձակ սրահին մէջ, _ 3700 E. Sierra Madre Boulevard, Pasadena, CA 91107:

Իր օրհնաբեր ներկայութեամբ, այս եզակի ձեռնարկը պիտի պատուէ Թեմիս արուեստասէր Առաջնորդ՝ Գերշ. Տէր Յովնան Արք. Տէրտէրեան: Նմանապէս, այդ օր ներկայ պիտի ըլլայ ՀՀ Լոս Անճելըսի գլխաւոր հիւպատոսը, գնահատանքի նամակներ ղրկած են հայրենի պետութեան Սփիւռքի եւ Մշակոյթի ազնուափայլ նախարարուհիներ՝ Դոկտ. Հրանոյշ Յակոբեանը եւ Յասմիկ Պօղոսեանը, ինչպէս նաեւ Հայաստանի երգահանները միութիւնը եւ Հ.Բ.Ը.Միութեան Կեդր. պատկառելի վարչութիւնը:

Մեծարանքի այս ձեռնարկը կազմակերպուած է Սփիւռքի եւ Հայրենիքի բարեսիրական մեծագոյն միութեան՝ Հ. Բ. Ը. Միութեան Փասատինայի մէջ գործող «Սաթամեան» Թատերախումբի վարչութեան կողմէ:

Գնահատանքի յատուկ խօսք մը ունինք Հայ Բարեգործական ազգապարծան միութեան ղեկավարներուն, որոնք միշտ ալ Թիկունք, գնահատողը եւ քաջալերողը եղած են մշակոյթի մեր գործիչներուն, քաջ գիտնալով, որ առանց հայ մշակոյթին եւ հայ եկեղեցիէն մեզի հասած հոգեւոր սնունդին, տարբեր պիտի ըլլար մեր ժողովուրդին կեանքը եւ ճակատագիրը:

Այդ օր ելոյթ պիտի ունենան գաղութիս փառք ու պարծանքը հանդիսացող երգիչներու հոյլ մը, որոնք պիտի երգեն Մանդակունեանի յօրինած եւ իր բառերով գրուած երգեր: Ինչպէս նաեւ գաղութիս Վարդան եւ Արմինէ Աղաճանեաններու «Զուարթնոց» պարախումբը իր մասնակցութիւնը պիտի բերէ գեղարուեստական յայտագրին:

Արմէն Մանդակունեան ծնած է Յունուար 19, 1934-ին, Երեւան: Ծնողքը արծուաբոյն Վանէն գաղթած են Երեւան: Արմէն Մանդակունեան մանուկ տարիքէն մօր ձեռքէն բռնած երաժշտութեան դպրոց կը դրուի՝ ջութակի դասեր առնելով:

Այդ Թուականէն եւ տարիքէն սկսեալ, Արմէն Մանդակունեան կը նուիրուի հայ երաժշտութեան եւ իր ամբողջ կեանքը կը նուիրէ հայ ժողովուրդի երգարուեստին: Ան բազմաթիւ երգեր յօրինած է եւ հեղինակն է այդ երգերու բառերուն: Ղեկավարած է ժողգործիքներու նուագախումբեր, հիմնած է երգչախումբեր: Հայաստանէն ներս ու մանաւանդ Հայաստանէն դուրս բազմաթիւ շրջապտոյտներու շնորհիւ հայ ժողովուրդը եւ անոր երգն ու երաժշտութիւնը աշխարհի ժողովուրդներուն ծանօթացնելով, Հայաստանի եւ Սփիւռքի մէջ սերունդ աճեցաւ Արմէն Մանդակունեանի հայրենասիրական եւ ռոմանտիկ երգերու ոգեշնչող ազդեցութեան տակ: Ո՞վ չի յիշեր Մերանկուլեանի անուան Պետական անսամբլի նուագախումբի ղեկավար՝ Արմէն Մանդակունեանի հոգեխռով, սրտաշարժ եւ սրտառուչ երգերը եւ նուագները, այդ երգերու զուլալ ու ջինջ, հոգեգրաւ ու հայրենատրոփ խօսքերը:

Մանդակունեանի հայրենասիրական երգերը, սիրոյ, կարօտի, վշտի եւ ուրախութեան երգերը երիտասարդներու կողմէ կ'երգուէին մեծագոյն ոգեւորութեամբ: Մանուկներու, չափահասներու եւ ամէն տարիքի յատուկ երգեր յօրինած եւ գրած է մեր այսօրուան սիրելի Յոբելեարը՝ «Երեւան», Երեւան», «Ղարաբաղ»,

«Յոյսի նաւակ», «Հայեացքդ երկնային», «Ով այգեպան», «Հայրենիք», եւ բազմաթիւ այլ երգեր ապրեցան եւ կը շարունակեն ապրիլ մեր ժողովուրդի յիշողութեան մէջ եւ շրթներուն վրայ:

Այս բոլոր յաջողութիւնները եւ հայրենասիրական երգերու գտած ժողովրդականութենէն ետք, 1974-ին Արմէն Մանդակունեան Լոս Անճելոս տեղափոխուեցաւ եւ այստեղ եւս մեծ նուիրումով ու սիրով իր գործը շարունակեց՝ ծառայելով հայ երգին ու երաժշտութեան, յօրինելով 40-է աւելի երգեր եւ միաժամանակ գրելով այդ երգերուն բառերը:

Աւելին, Արմէն Մանդակունեան Լոս Անճելոսի մէջ գրեց սիմֆոնիաներ, հիմնեց երգի դպրոցներ, նուագախումբեր, կազմակերպեց կամ մասնակցեցաւ յոբելենական հանդիսութիւններու, հրատարակեց երգի ալպոմներ, ձայնապնակներ, նօթագրուած երգարաններ եւ այլն:

Այդ տարիներուն, Փասատինայի մէջ հիմը դրուեցաւ Թ.Մ.Մ.ի Կլենտէյլ-Փասատինա մասնաճիւղին: Մասնաճիւղի հիմնադիրներէն, ազգային երկարամեայ բեղուն գործիչ՝ Փայլակ Ահարոնեանի միջոցաւ Արմէն Մանդակունեան քանի

Շար.ը էջ 19

# ԳՐԱԳԻՏՈՒՀԻ ԵՒ ՀՐԱՊԱՐԱԿԱԳԻՐ ՍԻՐԱՆ ՍԵԶԱՅԻ ՆՈՐ ՀԱՏՈՐՆԵՐԸ

Սփիւռքահայ իրականութեան մէջ վիթխարի է գրագիտուհի, հրապարակագիր, իգական սեռի իրաւունքներու պաշտպան եւ հայ կանանց ընկերային դերի բարձրացման ուղղութեամբ Սիրան Սեզայի ներդրումը: Սիրան Սեզայի նախաձեռնութեամբ Պէյրութ հրատարակուած «Երիտասարդ Հայուհի» պարբերականը եղած է այն ամբիոնը, ուրկէ հնչած է գրագիտուհիին եւ իր համախոհներու ձայնը: Ան հեղինակ է հետեւեալ հրատարակութիւններու՝ «Պատնէշը», 1959, «Մեղաւորուհին», 1959, «Հէքիաթներուն Աշխարհէն», 1973, «Մատթէոս Զարիֆեան ամբողջական գործեր»՝ գործակցութեամբ Վահէ Վահեանի, 1956:

Այսու ուրախութեամբ հայ հասարակութեան կը յայտնենք թէ արդէն լոյսին եկած են Սիրան Սեզայի երկու անտիպ վէպերը՝ «Գիրք Ծննդոց» եւ «Խորտակուած Կեանքեր» հատորները, որոնք կը ցոլացնեն պոլսահայութեան եւ Օսմանեան կայսրութեան վերջին տարիներու ընկերային, մշակութային ու քաղաքական վերիվայրումները՝ գրուած գեղարուեստական բարձր արժանիքներով:

Սիրան Զարիֆեան (Սեզա) ծնած է Պոլիս 1903-ին, ուր յաճախած է հայկական ու ֆրանսական դպրոցներ, ինչպէս նաեւ ամերիկեան Ռոպերթ Քոլէճը, իսկ համալսարանական կրթութիւնը ստացած է Նիւ Եորքի Քոլումպիա համալսարանէն՝ հետեւելով լրագրութեան եւ գրականութեան ճիւղին: Նախընտրած է վերադառնալ Պէյրութ, ուր լծուած է լրագրական, գրական ու մտաւորական կեանքի: Ան ամբողջ էութեամբ եւ մտաւորական կարողութեամբ նեցուկ կեցած է կանանց ընկերային-հասարակական դերի բարձրացման՝ հայկական եւ լիբանանեան հասարակական կեանքէն ներս:

Վերջին տարիներուն ուսումնասիրութեան տակ է գրագիտուհիին ամբողջ արխիւը, որ կը գտնուի որդւոյն՝ Վահագն Քիւփէլեանի տրամադրութեան տակ՝ յետագային լոյսին բերելու համար զանոնք: Այսու կը խնդրենք մեր հայրենակիցներէն, որոնք եթէ որեւէ գրութիւն ունին Սեզայէն, բարեհաճին բնօրինակը կամ պատճէնը ուղարկել հարազատներուն:

Այսու կու գանք նաեւ տեղեկացնելու թէ Թէքէեան Մշակութային Միութեան Լոս Անճելըսի Մասնաճիւղը նախաձեռնութիւնը վերցուցած է կազմակերպել զոյգ գիրքերու ներկայացումը Նոյեմբերի 5-ին, Արեւմտեան ԱՄՆ-ի Հայաստանեայց Եկեղեցւոյ Առաջնորդարանի «Համբար» սրահին մէջ, հովանաւորութեամբ Թեմիս Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի: Կը մասնակցին նաեւ գաղութիս մէջ գործող այլ մշակութային միութիւններ: Այս մասին յառաջիկային կ'անդրադառնանք այլ հաղորդագրութիւններով կամ յօդուածներով:

ԹԷՔԷԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Հովանաւորութեամբ՝
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ
Հ.Բ.Ը.Մ. ՍԱԹԱՄԵԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

ՀՊԱՐՏՈՒԹԵԱՄԲ ԿԸ ՆՇԷ
ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՏԻՏԱՆՆԵՐԷՆ




ՀԱՄԵՐԳ - ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ
ԻՐ ՀԱՆՐԱՅԱՅՏ ԵՒ ՍԻՐՈՒԱԾ ԵՐԳԵՐՈՎ

Կը մասնակցին՝

ԱՐՄԵՆ ԱՀԱՐՈՆՅԱՆ
ԱՐՏԱՇԵՍ ԱՎԵՏՅԱՆ
ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԱՆԴՐԱՆԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ
ԱՐՏԱՇԵՍ ՍԵՄԵՐՋՅԱՆ
ԱՇՈՏ ԴՈՒՐՅԱՆ
ԱՎԵՏԻՍ ԱԶԱՐՅԱՆ
ԱՆԱՀԻՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԽՈԴՈՒԼՅԱՆ
ՀԱՐՈՒԹ ՓԱՄԲՈՒԿՉՅԱՆ
ՀՈՎԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԱՀԲԱԶՅԱՆ
«ԶՎԱՐԹՆՈՑ» ՊԱՐԱՅԻՆ ՀԱՄՈՒՅԹ
Գեղարուեստական Ղեկավար եւ Պարուսույց
ՎԱՐԴԱՆ ԵՒ ԱՐՄԻՆԵ ԱՂԱՋԱՆՅԱՆ
ՀՈՎԻԿ ՔՐԻՔՈՐԵԱՆ
ՃՈՐՃ ՊԱՂՏՈՅԵԱՆ
ՄԵՐՈՒԺԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ՌԱԶՄԻԿ ՄԱՆՍՈՒՐՅԱՆ
ՌՈՒԲԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՌՈՒԲԵՆ ԹԵԼՈՒՆՑ
ՊԱՊԻՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Հանդիսավար՝
ՆՈՒՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՇԱԲԱԹ, 19 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2015
ԺԱՄԸ 7:00-ԻՆ

PAZNAZ AUDITORIUM
First Church of the Nazarene of Pasadena
3700 East Sierra Madre Boulevard, Pasadena, CA 91107

Տոմսերու համար դիմել՝
Հ.Բ.Ը.Մ. գրասենեակ (626) 794-7942
www.ticketmicket.com (818) 265-0506
ARTN: (818) 484-5555

# ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆՆԵՐԸ - THE CONSERVATIVES

ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱՒԻԹԵԱՆ

Պահպանողական (conservative) բառի ածականը, ըստ անգլերէն լեզուի զանազան բառարաններու, կը նշանակէ քաղաքական ու կրօնական հարցերու մէջ կառչիլ աւանդական դիրքերու եւ արժէքներու, մերժել նորութիւն ու փոփոխութիւն. այդ բառին գոյականը կը ներկայացնէ այն անձը, որ հակառակ է փոփոխութեան ու նորութեան՝ այդպիսի քաղաքական ու կրօնական նիւթերու նկատմամբ: Իսկ հայերէն բացատրութիւնը այդ բառին, ըստ լիբանանահայ լեզուագէտ Անդրանիկ Վրդ. Կռանեանի «Բառգիրք Հայերէն Լեզուի» բառարանին, կը նշանակէ աւանդապաշտ կամ հինի կողմնակից:

Պատմականօրէն, պահպանողական էին անոնք որոնք դէմ էին ամերիկեան, ֆրանսական եւ ռուսական յեղափոխութիւններուն (1776, 1789 եւ 1917), եւ որոնք բուռն ջատագովներն էին արքայ կամ թագաւոր ու թագուհի կոչուող գահակալներու »աստուածատուր« իշխանութիւններուն: Ու թէեւ ամէն պահպանողական նոյնը չէ տարբեր ազգերու եւ երկիրներու մէջ, սակայն մեծամասնութիւնը անոնց տակաւին կը նախընտրէ ապրիլ թագաւորի եւ թագուհիի իշխանութեան շուքին տակ:

Արդի պատմութեան ամենէն նշանաւոր պահպանողականները եղան Ռոնալտ Րէկընն ու Մարկրըթ Թաչըրը, որոնք որդեգրեցին ազատ շուկայի (free market) տնտեսութիւնը եւ որոնց իշխանութիւնները Ամերիկայի ու Անգլիոյ մէջ անցեալ դարու ութսունական թուականներուն անխնայ պայքար տարին ընկերային ծառայութիւն ու ապահովութիւն ընծայող ուժերուն դէմ: Արդիւնքը եղաւ այն, որ ազատ շուկան ստեղծեց տնտեսական վիճակ մը, որուն մէջ դրամատէր գործատէրին զոհ դարձան միջակ դասակարգը կազմող գործաւորն ու բանուորը, որոնք զրկուելով նախկին պետական երաշխաւորութեամբ ապահով դարձած իրենց գործերէն, անգործ դարձան եւ կամ պարտադրուեցան ամէն տեսակի սեղմում ընդունիլ որպէսզի պահեն իրենց պաշտօնները: Րէկընի եւ Թաչըրի գաղափարներուն խանդավառ հետեւորդները, ինչպէս Ամերիկայի նախկին նախագահ Ճորճ Պուշն (2000-2008) ու Գանատայի ներկայ վարչապետ Սթիֆըն Հարփըրը, շարունակեցին հարուստին ծառայելու քաղաքական ընթացքը, պետական միջոց ու օրէնք ծառայեցնելով դրամատէր մեծ ընկերութիւններուն:

Գանատայի յաջորդ դաշնակցային (federal) երեսփոխանական ընտրութիւնները տեղի պիտի ունենան յաջորդ ամիս եւ ընտրապայքարը սկսած է արդէն երկրին երեք աւանդական կուսակցութիւններուն (Conservative, Liberal, NDP) միջեւ: Պահպանողականները, որոնք, ըլլայ հոս կամ Ամերիկայի մէջ, վարպետ են ցեխարձակելու իրենց հակառակորդները հեռատեսիլի առջեւ եւ մամուլի մէջ, անհամ ծանուցումներով սկսած են նսեմացնել (belittle) իրենց հակառակորդ Ազատական (Liberal) կուսակցութեան ղեկավար Ճասթըն Թրուտոյի կարողութիւնը եւ անոր իշխելու «անփորձութիւնը», հարուածել ու թիրախ դարձնել զայն՝ «դեռ պատրաստ չէ» (just not ready) մեծածախս ծանուցումներով: Նմանօրինակ մեթոտներ առենօք գործածուեցան Ամերիկայի մէջ, նախագահ Օպամայի ամերիկեան ծնունդը կասկածի տակ դնելով եւ անոր «իսլամ» ըլլալը յայտարա-րելով:

Կասկած չկայ որ շատ մը հայ ընտրողներ յաջորդ ընտրութիւններուն պիտի մտածեն թէ Պահպանողական այս ներկայ իշխանութիւնը վարչապետ Հարփըրի գլխաւորութեամբ դիրք բռնեց հայութեան կողքին՝ Հայկական Ցեղասպանութեան իրաւացիութիւնը ընդունելով եւ մեզի ի նպաստ դիրքորոշուելով: Նոր շարժում մը՝ Գանատահայ Պահպանողականներու Միութիւն (The ArmenianCanadian Conservative Association) անուան տակ վերջերս գոյացաւ, զուցէ որպէս երախտագիտական արտայայտութիւն այդ միութեան անդամներուն կողմէ Պահպանողական կուսակցութեան՝ իր բռնած հայանպաստ դիրքին համար (թէեւ անոր անդամներէն շատեր ո՛չ աւանդապաշտ են, ո՛չ ալ նորութեան ու փոփոխութեան դէմ): Սակայն, պէտք չէ մոռնալ որ Ազատականներու (Liberal) իշխանութեան տակ, 2004-ին, Գանատայի խորհրդարանը մեծամասնութեամբ քուէարկեց ի նպաստ Հայկական Ցեղասպանութեան որդեգրումին:

Թէ ինչո՞ւ այս նիւթը կ'ուզենք արծարծել ընտրութիւններու նախօրեակին:

Պահպանողականները իրենց աւանդապաշտ համոզումներով եւ Րէկընի, Թաչըրի, Պուշի, Հարփըրի, Տանըլտ Թրամփի ու Սառա Փէյլընի նման անձերու մտայնութիւններով պէտք է ճանչցուին որպէս մերժողներ նորութեան ու փոփոխութեան՝ ըստ անգլերէն լեզուի զանազան բառարաններու, որոնք բնականաբար ներքնապէս, եթէ ոչ երեւութապէս, դէմ ըլլան այն բոլոր նորութիւններուն ու փոփոխութիւններուն զոր այս երկիրը կը բերեն մեզի պէս ներգաղթողները:

Հայկական առածը կ'ըսէ՝ «հասկցողին հազար բարեւ»:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680
F: (626) 797-6863




ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ ԴՊՐՈՑ

CTA CALIFORNIA TEACHERS ASSOCIATION

Մանկավարժներ, ովքեր գիտեն. որակյալ հանրակրթական դպրոցները Կալիֆորնիան ավելի լավն են դարձնում բոլորիս համար:

CTA.ORG ԿԱՅՔԻՑ ԻՄԱՑԵՔ ԱՎԵԼԻՆ ՆԵՐԳՈՐԾՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ:

Վճարված է Կալիֆորնիայի Ուսուցիչների Միության Կողմից

# Massis Weekly

Volume 35, No. 33 Saturday, September 12, 2015


## Armenia: Appropriate Measures Taken on the Border With Azerbaijan

YEREVAN -- Armenian frontline units fully control the situation at the borders and the tensions are likely to subside soon after "appropriate measures" have been taken, Lieutenant-General Movses Hakobian, deputy head of the General Staff of the Armed Forces of Armenia, told reporters over the weekend.

The upsurge in fighting has been particularly serious at the western section of Armenia's border with Azerbaijan. In the course of last week, villages on both sides of the frontier were directly hit in mostly overnight skirmishes between Armenian and Azerbaijani troops stationed in the area. Several civilians were wounded as a result.

"Compared with the previous days, the frequency of ceasefire violations has decreased," Armenia's Defense Ministry said later on Saturday. The Azerbaijani military likewise did not report major armed incidents there over the weekend.

In Hakobian's view, by escalating the situation at the borders Azerbaijan tries to blackmail the mediators to register progress in the negotiations that would be favorable for Baku.

Meanwhile, Karabakh's Defense Army accused Baku of systematically ratcheting up tensions along "the line of contact" around Karabakh. In a statement released on Sunday, it said that Azerbaijani forces increasingly use mortars and rockets when violating the ceasefire regime there. It said that failure to de-escalate the situation could have "unpredictable consequences" for Baku.

**Continued on page 2**

## Pope Francis Pays Tribute to Armenian Genocide Martyrs

### The Pontiff Denounced "Complicit Silence of Many Powers that Could Stop it"



**Patriarch Gregory Peter XX and Pope Francis**

VATICAN CITY -- The martyrdom of many Christians "with the complicit silence of many powers that could stop it", was denounced by Pope Francis during his homily after presiding on Monday over a morning mass at the Vatican's St. Martha chapel attended by the top Armenian Catholic clergymen, including the recently elected Patriarch Gregory Peter XX.

The Pope recalled, "One of many great persecutions: that of the Armenian people": "The first nation to convert to Christianity: the first. They were persecuted just for being Christians," he said. "The Armenian people were persecuted, chased away from their homeland, helpless, in the desert," he added in a clear reference to the 1915 Armenian Genocide in the Ottoman Empire that killed 1.5 million.

"Today," the Pope continued, "I would like, on this day of our first Eucharist, as brother Bishops, dear brother Bishops and Patriarch and all of you Armenian faithful and priests, to embrace you and remember this persecution that you have suffered, and to remember your holy ones, your many saints who died of hunger, in the cold, under torture, [cast] into the wilderness only for being Christians."

"We now, in the newspapers, hear the horror of what some terrorist groups do, who slit the throats of people just because [their victims] are Christians. We think of the Egyptian martyrs, recently, on the Libyan coast, who were slaughtered while pronouncing the name of Jesus," he said.

"We do not know what will happen here. Only let the Lord give us the grace, should this persecution happen here one day, of the courage and the witness that all Christian martyrs have shown, and especially the Christians of the Armenian people," concluded the pontiff.

## Armenia Calls for Protection of Ethnic, Religious Groups in Middle East

PARIS (Armenianow) -- Armenia is deeply concerned about the developments in the Middle East, Foreign Minister Edward Nalbandian said during an international conference in Paris dedicated to preventing violence against ethnic and religious minorities in the Middle East.

"Actions should be combined and comprehensive assistance needs to be provided to protect ethnic and religious groups that have been persecuted by the terrorist forces in Syria and Iraq.

The measures should include providing humanitarian aid to migrants and affected communities targeted by the terrorists. International assistance shouldn't be divided into primary and secondary areas and it should be rendered to all the aggrieved people," Nalbandian emphasized, according to his Ministry of Foreign Affairs press office.

The top Armenian diplomat also noted that it was not accidental that the terrorist groups had launched the war against the cultural heritage of the peoples of the region.

"Demolition of numerous Islamic shrines, ancient Palmyra and Nimrud cultural monuments, blasting of the Holy Martyrs' Church in Deir ez-Zor where the relics of the Armenian Genocide victims were preserved and other acts of vandalism are crimes against civilization," Nalbandian stressed in his speech, adding that ethnic Armenians in the Middle East have also suffered because of wars and persecutions. In particular, he mentioned that in the past several years Armenia has received about 15,000 ethnic Armenians fleeing hostilities in Syria.

The Armenian foreign minister called for an immediate devising of mechanisms to deprive the terrorists of their means, financial sources and for obstructing the inflow of foreign gunmen.

## Deadly Bomb Blast Near Armenian Border Kills 14 Turkish Policemen



**Turkish soldiers inspect a destroyed police vehicle in Igdir province**

YEREVAN (RFE/RL) -- Residents of an Armenian border village sounded alarm on Tuesday after being shaken by what turned out to be a bomb attack in nearby Turkey that reportedly killed at least 14 Turkish police officers.

The Armenian Ministry of Local Government and Emergency Situations said it was swiftly alerted about the sound of a powerful explosion heard in Ranchpar, a village in the southern Ararat region bordering the Igdir province in northeastern Turkey. "It was ascertained that the explosion took place in the territory of Turkey, 5 kilometers away from [another] village in Ararat, Noramarg," the ministry said in a statement.

According to news reports, the Igdir blast destroyed a minibus that carried policemen to a Turkish border crossing leading to Azerbaijan's Nakhichevan exclave sandwiched between Turkey, Armenia and Iran. Turkish officials are certain to accuse Kurdistan Workers Party (PKK) militants of being behind the bombing.

Around 100 members of Turkish security forces have been reportedly killed since a two-year ceasefire between Ankara and the PKK collapsed in July. The Turkish military claims to have killed a much larger number of Kurdish militants in eastern Turkey and northern Iraq.

More than 40 Turkish warplanes hit PKK targets in northern Iraq on the night from Monday to Tuesday in response to the killing on Sunday of 16 Turkish soldiers near the Iraqi border.

## Turkish Nationalists Attack Armenian Orphanage in Istanbul




ISTANBUL -- Camp Armen Armenian orphanage in Istanbul was attacked on Monday, September 7 night, News.am reports.

Six people armed with clubs approached the orphanage building and attempted to open its gates, reports the website of the Nor Zartonk movement of Istanbul Armenians against the demolition of Camp Armen. Those on the lookout were able to force back the attackers.

Nonetheless, those who keep watch at the orphanage warn that such attacks may repeat and ask for support and solidarity.

Kamp-ArmenCamp Armen Armenian orphanage was confiscated by the Turkish authorities back in 1987. Subsequently, it was sold to a Turkish businessman who, in turn, decided to demolish the orphanage and build luxury homes in the premises. Due to public pressure, however, the demolition of the orphanage has been temporarily postponed.

The camp was once home to around 1,500 Armenian children, including the late Hrant Dink, the founder and editor-in-chief of Agos, an Armenian bilingual weekly in Istanbul, who was shot dead on January 19, 2007 outside his office, and his wife Rakel.

The orphanage sought to help underprivileged Armenian children and orphans, who had moved to Istanbul from other parts of Turkey to receive education.

## French Lawmakers Visit Karabakh Frontline



STEPANAKERT (RFE/RL) -- Five members of France's parliament representing the ruling Socialist Party have visited Nagorno-Karabakh and the nearby Armenian-Azerbaijani "line of contact" on what they described as a fact-finding mission.

The delegation headed by Bruno Le Roux, the leader of the Socialist majority in the French National Assembly, walked through Karabakh Armenian army trenches and monitored the ceasefire regime at a section of the heavily fortified frontline east of the disputed territory. A short statement issued by the Karabakh Defense Army on Saturday said the lawmakers familiarized themselves with the "specificities of bearing combat duty" there.

It was not clear whether they held any talks with Karabakh leaders in Stepanakert. The press office of Bako Sahakian, the Karabakh president, reported no such talks.

Le Roux and the fellow deputies accompanying him met with President Serzh Sarkisian in Yerevan on Friday. The French Socialist leader said afterwards that the purpose of their trip to Karabakh is to receive more first-hand information about the current state of the Armenian-Azerbaijani conflict.

"Our purpose is to go to Karabakh not to dictate anything or do any provocations but to forge close and friendly links with that place," Le Roux told reporters in Yerevan, according to Yerkir.am.

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

## Russia and Armenia to Establish Joint Air Defense System



MOSCOW -- Russia plans to establish a joint air defense system with Armenia and two other Collective Security Treaty Organization (CSTO) allies, Kyrgyzstan and Tajikistan, according to a report by TASS news agency.

"The improvement and development of the united air defense system of the Commonwealth of Independent States (CIS) countries will be discussed in Astrakhan (southern Russia) on Tuesday by members of the Coordinating Committee on Air Defense under the CIS Council of Defense Ministers." The Russian Defense Ministry stated.

The Committee's regular meeting will be attended by delegations from the Defense Ministries of the Russian Federation, Armenia, Belarus, Kazakhstan, Kyrgyzstan, Tajikistan and Uzbekistan.

The draft Armenian-Russian agreement on the kind of joint system is now ready for signing.

"I hope that the adjustments will be completed this year," Chief of Russia's General Staff and First Deputy Commander-in-Chief of the Aerospace Forces Lieutenant-General Pavel Kurachenko said, according to the source.

Similar agreements with Kyrgyzstan and Tajikistan are still being coordinated by the countries' relevant agencies.

The united air defense system of CIS countries was created on the basis of an agreement between 10 Commonwealth countries, signed on February 10, 1995 in Alma-Ata, for an indefinite period.

## Armenian Family from Kobane Provided Housing in Yerevan



YEREVAN -- Seventeen members of the Tovmasian family, who fled Kobane to Turkey after the Islamic State attack earlier this year, have found refuge in Armenia with the assistance of the Ministry of Diaspora.

Hovsep Tovmasian, 43, was killed by ISIS in front of his 13-year-old son. Other members of the family (families of four Tovmasian brothers including 11 children) managed to escape and lived in a school building in Turkey's Suruc region for three months.

The family moved to Armenia thanks to financing from Raffi Ardhaljian, a US-based adviser to the Minister of Diaspora.

The family has been provided housing in Yerevan's Silikian district.

## Armenia: Appropriate Measures Taken

**Continued from page 1**

The warning came the day after around 100 Karabakh Armenian volunteers led by Ara Harutiunian, NKR's prime minister, arrived in Armenia's northern Tavush province to temporarily man some Armenian army posts along its border with western Azerbaijan. The authorities in Stepanakert portrayed the largely symbolic deployment as a show of solidarity with the local population.

## Artur Alexanyan (98 kg), World Champion in Greco-Roman Wrestling



LAS VEGAS -- Armenian Greco-Roman style wrestler Artur Aleksanyan (23 years) successfully defended his world champion title, defeating London 2012 gold medalist Ghasem Rezaei of Iran 3-0 in the 98kg final in Las Vegas. Bronze medals were won by Russian Magomedov Islam and Ukrainian Dmitry Timchenko.

Artur Alexanyan won all his fights overcoming Japanese Yasouiro Yanouira (8-0), Norwegian Martin Nilsen (4-0) and Ukrainian Dimitri Timchenko (10-1) in the 1/16th round. In the semifinals, Aleksanyan beat Romanian Alexous Tchiourariou (9-0) to reach the final.

Artur Aleksanyan is one of the most renowned Armenian Greco-Roman style wrestlers. He was silver medalist of the London Olympics, he is also the winner of the Universiade in Russian Kazan and a three-time European champion. Alexanyan is Armenia's best hope for Olympic medal at the Rio Olympics next summer.

## Digitec Expo 2015 to Attract 40,000 Visitors




YEREVAN (ARKA) -- About 40,000 people are expected to visit the 11th Digitec Expo 2015, slated for October 2-4 in Yerevan, the executive director of the Union of Information Technology Enterprises (UITE) Karen Vardanyan said today.

"We believe that Digitec Expo 2015 will prompt large multinational IT companies to open their divisions in Armenia, as did IBM, National Instruments and other companies,' he added.

He said all those Armenian companies, which have achieved international success - PicsArt, Joomag, Shadowmatic, Triada Studio, as well as leading international companies, including, Ericsson, Huawei, Keysight Technologies and Calix will showcase their services and products at the exhibition.

Digitec Expo provides a unique opportunity to present the real picture of the state of IT sector in Armenia, its prospects and introduce modern technological solutions to public at large, he said.

The main purpose of Digitec Expo is creating a favorable environment for interaction between high-tech companies, business consumers and society, he added.

Digitec Expo is the largest technological event in Armenia. About 130 companies from Armenia, Taiwan, China, Ukraine, Belarus, Iran and other countries are expected to attend the event, organized traditionally by UITE under the patronage of Armenian prime minister.

The Union of Information Technology Enterprises of Armenia was founded in 2000 to protect the economic interests of IT companies, to stimulate business development, and promote research in the field of IT.

## Genocide Museum Unveils New Edtion of "The Armenian Genocide in Contemporary American Encyclopedias"

YEREVAN -- The Armenian Genocide Museum-Institute has published the new monograph of Armen Kirakossian's "The Armenian Genocide in Contemporary American Encyclopedias". The edition was presented in English.

As the Museum-Institute's website reports, in this publication Dr. Arman Kirakossian studied and analyzed nearly forty specialized and thematic encyclopedias (Encyclopedia of War Crimes and Genocide, Encyclopedia of Genocide, etc.), dictionaries (Dictionary of Genocide, etc.), handbooks (The Oxford Handbook of Genocide Studies, etc.) and other directories published in the USA in the past fifteen years.

Based on the material gathered, the book was divided into chapters which represent conceptual and factual aspects of the Genocide beginning from the origins of the Armenian Question.

The book consists of 16 chapters, a list of encyclopedias, a bibliography of literature related to the Armenian Genocide taken from various encyclopedias.

## Armenia Ranks 43rd in 2015 Global Age Watch Index




YEREVAN -- Armenia ranks 43rd among 96 countries in the 2015 Global AgeWatch Index developed and constructed by HelpAge International.

The aim of the Index is both to capture the multidimensional nature of the quality of life and wellbeing of older people, and to provide a means by which to measure performance and promote improvements.

The HelpAge International has chosen 13 different indicators for the four key domains of Income security, Health status, Capability, and Enabling environment.

The best 10 countries to grow old are Switzerland, Norway, Sweden, Germany, Canada, the Netherlands, Iceland, Japan, United States, and United Kingdom. The worst countries are Mozambique, Malawi and Afghanistan.

Armenia's neighbors Georgia and Turkey are ranked 29th and 75th respectively. Armenia's partners in the Eurasian Economic union are placed as follows: Russia – 65th, Kyrgyzstan – 51st, Belarus – 64th.

Armenia ranks moderately on the Index, at 43 overall. It ranks highest in the capability domain (9). It also ranks high in the income security domain (32) with 100% pension income coverage. It ranks low in the enabling environment domain (73) with the lowest value in its region for the civic freedom indicator (42%). It ranks lowest in the health domain (74), with below average life expectancy at 60 compared to other countries in this region.

## Looted Treasures Including Armenian Gospel Return to Cyprus



NICOSIA -- The Church of Cyprus has announced that 34 treasures that were stolen from the island's Turkish-occupied areas, have been returned to Cyprus.

The relics were returned after a German Court of Appeals issued its final decision on the fate of the remaining 85 treasures stolen by a Turkish art smuggler after the Turkish invasion of the island in 1974.

The treasures, including fragments of church wall paintings, icons, a manuscript of an Armenian gospel and 40 prehistoric antiquities, were found in 1997 in the possession of Turkish dealer in illicit antiquities Aydin Dikmen in apartments he maintained in Munich.

Among the artifacts, 24 are Byzantine relics and some prehistoric antiquities coming mostly from the collection of Chr. Chatziprodromou, from Ayios Epiktitos Church. Among the Byzantine relics there are three pairs of bema doors (Monastery of Antiphonitis Christ, Virgin Mary Monastery in Kantara), wall paintings from the Monastery of Antiphonitis Christ, the church of Agia Solomoni in Coma tou Yialou and the Monastery of Panagia Apsinthiotissa in Sychari. Also the treasures include a hand written manuscript of 17th century (omilario) from the Monastery of the Panagia Trooditissa, and the hand written gospel of the Armenian community of Cyprus stolen during the Turkish mutiny in 1963.

More than 500 churches situated in the areas under Turkish occupation since 1974 have been destroyed, plundered and looted or turned into stables, warehouses, restaurants and hotels. The Cyprus government and the church have repeatedly protested to the UN, the World Council of Churches and many other international and religious organisations.

# Paris to Host All-Star Concert in Commemoration of Genocides




PARIS -- In commemoration of the Armenian and Assyrian Genocide and the Holocaust, a concert entitled 'You, my brother' will take place October 12 in the famous Folies Bergère music hall in Paris under the honorary patronage of Charles Aznavour and with the support of Eastern Christians, Nouvelles d'Arménie reports.

The event, first of its kind in uniting Jews and Armenians, aims to promote peace and commemoration. Political figures and show business representatives are expected to attend the event.

News related to the concert will be regularly issued by France's Shalom and Ayp FM radio stations.

The concert will be conducted by music commentator Frédéric Zeitoun from France 2 to feature such famous musicians as Michel Legrand and his son, Michel Boujenah, Michel Fugain and Pluribus, Enrico Macias, André Manoukian, Gilbert Montagné, Popeck and others.

# Land and Culture Organization Restores 7th Century Lori Monastery



PASADENA -- Summer 2015 marked another successful campaign for the Land and Culture Organization (LCO)/Organisation Terre et Culture (OTC). LCO/OTC completed another project with the consecration of a 7th century monastery in the Shirakamut village in the northern Lori region, near the 1988 earthquake epicenter of Spitak. LCO/OTC celebrated the completion and consecration of Tchkhanavank, a historical site that was discovered hidden under a hillside. LCO/OTC launched this project in 2008 and completed the final phase with ten volunteers from OTC-France this August. The reconstructed church, now renamed Sourp Khatch (Holy Cross) was blessed on August 22nd by Archbishop Sebouh Chouldjian of the Gougak Diocese. Present at the ceremonies were Board Members from Europe and America, Kegham Kevonian and Aram Gazarian of OTC-France, Haig and Hilda Manjikian LCO-USA, Nazaret Kevonian of LCO-USA, project architect Stepan Nalbandian of LCO/OTC Armenia "Yergeer Yev Meshagiut", along with LCO/OTC volunteers and members. Also present were Lucine Kassarjian and Arthur Harutyunian of the Armenian Tree Project (ATP) Armenia Office. ATP participated in the ceremony by planting decorative trees near the church site. Over two hundred guests, including Governor of Lori Region Artur Nalbandyan, mayors from surrounding villages, and local Shirakamut villagers attended the ceremonies. It was an emotional moment for all present following the culmination of years of hard work by volunteers and local craftsmen.

In addition to the consecration of Sourp Khatch church in the north, LCO-USA continued work on another project in southern Armenia. This year's campaign brought eleven motivated volunteers from the United States and Australia to spend three-weeks in the Syunik region, rebuilding a 17th century historical site. This was LCO/OTC's third year working on Sourp Stepanos Church in Shikahogh village, which is located adjacent to the Shikahogh Forest Reserve 20 miles south of Kapan. "It was incredibly exciting and rewarding to work on this site" said one of the volunteers. "We did a little bit of everything from making a clear path around the entrance, fixing the roof, rebuilding the alter and more."

The five-hour workday packed with physical labor participating in the renovation of this Armenian church is just one part of the LCO/OTC experience. Volunteers live in a very modest village home and spend non-working hours bonding with village residents, while enjoying local activities and their surroundings. " We played soccer and hung out at swimming holes with local kids, visited family homes for tea, and befriended veterans who showed us their battle wounds and told us (Karabagh) war stories" said veteran volunteer Lori Pogarian. "Our favorite is the village "discotec" – a simple auditorium with a boom box where around 20 local kids go dancing every night." In addition to experiencing village life, the volunteers go on excursions of Armenian historical sites.

# Istanbul Biennial Commemorates Armenian Genocide



ISTANBUL (The Art Newspaper) – The 14th Istanbul Biennial, Saltwater: a Theory of Thought Forms, opened this week amid calls for all participating artists to suspend their work for 15 minutes in support of Turkey's Kurdish minority.

Most notable is the focus on Armenia and the Armenian genocide, an atrocity not recognised by the Turkish state. At the press opening on 2 September, Carolyn Christov-Bakargiev, the curator of this year's biennial, said it was "very timely" to speak about what happened 100 years ago, as well as the "traumas and ethnic cleansing" that has occurred in other parts of the world throughout history, including Australia, Syria, Poland and Germany.

In what Christov-Bakargiev described as a "diplomatic act", the Dilijan Art Initiative, which sponsored the Golden-Lion winning Armenian pavilion at the Venice Biennale this year, is supporting 13 artists in Istanbul who are either Armenian, of Armenian descent or have made works relating to Armenian history.

They include the Modernist painter Paul Guiragossian, who was born to survivors of the Armenian genocide and has 14 works on show in Istanbul Modern. A self-portrait from 1948 bears witness to Guiragossian's




itinerant life: a shell destroyed the artist's Beirut studio in the 1970s, damaging many canvases. The self-portrait was repaired, but the scar across his cheek remains.

"My father was born in Jerusalem and his work often deals with displacement and marginalised people," says Manuella Guiragossian, the president of the Paul Guiragossian Foundation.

At the Galata Greek School, the Lebanese-born artist Haig Aivazian is presenting a performance of a folkloric song by the Armenian-Turkish oud master Udi Hrant Kenkulian, whose family survived the genocide and lived in Istanbul from 1918 onwards. Titled Wavy Wavy Is the Sea of Bolis, O Mother, the work combines "two complex sets of melodic, cultural and linguistic creolisations" that echo the "transition of the Ottoman Empire to the Turkish republic", says Aivazian, who is also exhibiting in the Armenian pavilion in Venice.

Upstairs, the Iraqi-Jewish artist Michael Rakowitz is showing The Flesh Is Yours, The Bones Are Ours. The newly commissioned installation consists of plaster friezes moulded from architectural details crafted by Armenians throughout Istanbul. "[The friezes] show the traces of Armenian hands and fingers, which bear silent witness to what happened in the city in 1915 when the Armenians were annihilated and dispossessed," Rakowitz says.

Several other works that refer to Armenian history are dotted around the city—the biennial covers more than 30 venues this year. For example, the Belgian-born artist Francis Alÿs is presenting a new black and white film, Silence of Ani, which depicts children from Eastern Anatolia playing bird songs on whistles and flute-like instruments.

Despite the potential for backlash over the Armenian question, Christov-Bakargiev says she encountered no censorship in the lead up to the biennial. Indeed, the curator sees hope in the transformative power of art. "With and through art we mourn, commemorate, denounce and try to heal and commit to the possibility of joy," she says.

# ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՍԱՐԳԻՍ ՀԱՑՊԱՆԵԱՆԻ ՀԵՏ

Ծ.Խ. Ի մտի ունենալով տարածաշրջանային հարցերու փորձագէտ եւ վերլուծաբան՝ Սարգիս Հացպանեանի անցած ճանապարհը, ամբարած տեղեկութեանց պաշարը, յանդուգն եւ նոյնիսկ ծայրայեղ մտածելակերպը, անմիջական ու ջերմ խառնուածքը, միշտ ալ ցանկալի է հարցազրոյց սկսիլ իր հետ: Դժուարը՝ զայն սահմանափակելն է, որովհետեւ նոր ու նոր ծալքեր կը բացուին ամէն մէկ կարծիքի արտայայտմամբ: Կրնաք համաձայն չըլլալ իր կարծիքներուն հետ, բայց չէք կրնար չտեսնել, որ անոնք իր համոզումներուն արտայայտութիւնն են: Ինչ որ պիտի կարդաք, յապաւուած սղագրութիւնն է մօտ երեք ժամ տեւած մեր հարցազրոյցին, որ տեղի ունեցաւ Երեւանի մէջ, Յուլիս 2, 2015-ի առաւօտուն:

*ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ ՎԱՐԵՑ*
*ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ*
*(Շարունակուած նախորդ թիւէն)*

Հ. Այդ օրը ժողովուրդը արդէն ցրուա՞ծ էր:

*Պ. Ոչ, չէր ցրուած, բայց արդէն նախկին ոգեւորուածութիւնն ու հաւատքը չունէր: Մարդիկ սկսած էին հարց տալ թէ կարո՞ղ է, որ Լեւոնը ինչ որ խաղեր կը խաղայ: Բայց այդ մէկը ժողովուրդին մէջ բարձրագոյն չէր հնչեր: Այդտեղ իրաւ ժողովրդավարութիւն էր եւ ամէն մարդ իր կարծիքը ազատ կ'արտայայտէր: Այդ հարիւր հազարներու թիւը սկսաւ պակսիլ: Դիտորդները իմ ուշադրութեան բերին, որ ինչ որ բան փոխուած է: Ես պատասխանեցի, որ այո, առաջնորդը չի ցանկանար որ բիրտ ուժ գործածուի ու արիւն հեղի: Իրենք ըսին, որ առաջնորդը չի՝ տեսներ որ այս հեղեղին դիմաց ոչ ոք կրնայ դէմ դնել եթէ դէպի Բաղրամեան շարժի: Ես ալ պատասխանեցի, որ աւելի լաւ քան ինքը, ոչ մէկը չի տեսներ, որովհետեւ ինքը եղած է ընդդիմութեան, Ղարաբաղ Կոմիտէի անդամ, բանտարկուած է, նախագահ դարձած է, երկրորդ անգամ ինքը կեղծած է ընտրութիւնները ու նախագահ դարձած ապա հրաժարած: Ամէն ինչ անցած է այս մարդուն գլխէն: Տասը տարի տունը նստած է ու բառ մը չէ ըսած, հիմա վերադարձած է ու իրմէ լաւ ոչ ոք չի կրնար իրավիճակը ըստ արժանւոյն լաւ գնահատել: Կ'երեւի մենք է, որ չենք գիտեր բաներ որ ինք գիտէ եւ այդ խաղը կը խաղայ, որուն ի՞նչ ըլլալը չենք գիտեր: Բայց ես որպէս ռոմանթիկ «Ռոպին Հուտ», կը տեսնեմ որ գորգը մեր ոտքին տակէն կը քաշուի: Անոնք հարցուցին ինծի, թէ արդեօ՞ք ես կրնամ մէկ միլիոն մարդ հրապարակ բերելու կոչս կրկին ուղղել: Պատասխանեցի, այո՛: Ըսին՝. ատիկա միակ բանն է, որ ձեզ կրնայ փրկել, որովհետեւ այդ պարագային յստակ պիտի դառնայ որ ընտրութիւնները կեղծուած են եւ ատիկա այս իշխանութիւններու վերջը պիտի բերէ:*

*Ամսուն 28-ին եւ 29-ին, իմ օրական երեք ելոյթներս դարձան չորս, հենց Լեւոն Տէր Պետրոսեանի խնդրանքով: Միակ բանը որու մասին կը խօսէի, Կիրակի Մարտ 2-ին ժամը երեքին մէկ միլիոն մարդ հրապարակի վրայ հաւաքելն էր, որ իշխանութիւնները թողնեն երթան: Կը խնդրէի ժողովուրդէն, որ լուր տան իրենց ծանօթներուն, որ նշուած օր ու ժամին Ազատութեան հրապարակ գան: Միայն մէկ անգամ բաւարար պիտի ըլլար, որ իրենք տէր կանգնին իրենց ճակատագրին, պատմութիւն կերտեն եւ Մարտ 2-ը դարձնեն մեր փրկութեան օրը: Այս պատգամը իմ հետ միասին կրկնած են Նիկոլը, Միքայէլը, Գրիգոր Յարութիւնեանը եւ ուրիշներ:*

*Մարտ 29-ի կէսօրէ ետք Ֆրանսայի հիւպատոսը ինծի զանգեց*



*ըսելով՝. թէ իշխանութիւնները պիտի մաքրեն հրապարակը եւ ես այդտեղ ֆրանսայի միակ քաղաքացին ըլլալով պէտք է դուրս գայի հոնկէ: Ըսաւ՝. թէ ըստ օրէնքի իրենք պէտք է Հայաստանի իշխանութիւններուն հետ համաձայնութեան գան, որ իմ անվտանգութիւնը ապահովուի եւ կինս ու զաւակներս արդէն Ֆրանսայի դեսպանատան հսկողութեան տակ են: Ըսաւ՝. թէ դեսպանատունէն ինքնաշարժ մը պիտի ուղարկեն, որ զիս անվտանգ դուրս հանեն ու ճամբեն Փարիզ: Պարոն հիւպատոսին ըսի, որ որոշումը կայացնողը ես եմ եւ ինք չի կրնար իմ տեղս որոշում առնել: Ըսի՝. թէ ես ոչ մէկ տեղ մեկնողը չեմ: Ըսաւ՝. մեղք ես, հասկցանք ռոմանթիկ ես, իտէալիստ ես, բայց այս շարժումը վաղը պիտի խեղդեն: Առաւօտեան արիւն պիտի թափուի: Ասիկա ըսողը Ֆրանսայի հիւպատոսն է: Ըսի թէ մենք կարո՛ղ ենք գլուխ-գլխի հանդիպիլ: Եկուր հանդիպինք ըսաւ: Չէ՛- ըսի, ես այստեղէն դուրս չեմ կրնար գալ, քանի որ եօթը օրէ ի վեր իմ դէմ ձերբակալման հրամանագիր կայ: Դուք եկէք: Ըսաւ կու գամ:*

*Ես անմիջապէս գացի Լեւոն Տէր Պետրոսեանի մօտ, պատմեցի եղելութիւնը եւ ընելիք երեք բան առաջարկեցի: Կամ ժողովուրդը պիտի դիմադրէ ու կռուի եկողներուն դէմ, կամ խաղաղ դիմադրութիւն Կանտիի օրինակով, ժողովուրդը գետինը պիտի պառկի եւ իրենք կու գան մեր վրայէն կ'անցնին առանց խնդիրի, բայց ամբողջ աշխարհ կը տեսնէ որ խաղաղ ցուցարարներու վրայէն անցան եւ երրորդը, դուք կը յայտարարէք որ այս շարժումը պիտի տեղափոխենք այլ հրապարակ, կարեւոր չէ որ մէկը, այլ կարեւորը, քուլմինասիոնէ (գագաթնակէտային) իրավիճակ ստեղծելն է: Կարելի է ժողովուրդը խորհրդանշականօրէն տանիլ նոյնիսկ Ծիծեռնակաբերդ: Որոշումը ձերն է ըսի, բայց նկատելով որ դիւանագէտները այս մասին տեղեկացուած են, ուրեմն կը նշանակէ որ հրահանգը տրուած է: Արդէն այդ օրը ոստիկանութիւնը հրապարակի շուրջի բոլոր ինքնաշարժները հանել կու տար: Քանի որ մաքրած էին, կը նշանակէ որ յարձակումը գալու էր: Ինք մէկ ժամ ետք ինծի յայտնեց, որ հրահանգը կայ եւ յաջորդ օր յարձակում պիտի ըլլայ: Իրեն ըսի՝. որ պէտք է ժողովուրդը տեղեկացնել այս մասին, բայց ինք այդ չըրաւ: Ես զարմացած էի:*

Հ, Ինչո՞ւ չըրաւ:

*Պ. Ինչուրին հիմա կու գամ: Ֆրանսայի հիւպատոսը երկու հոգիով եկաւ վրանս Փետրուար 29-ի գիշերը ժամը տասնմէկ ու կէսի կողմերը: Կանչեցի մեր շարժման առաջնորդներէն մի քանի հոգին, որ ներկայ ըլլան մեր խօսակցութեան, չնայած ֆրանսերէնով պիտի ըլլար այդ: Հարց տուաւ թէ ինչո՞ւ այդպէս կը վարուիմ: Ըսի թէ ինք որպէս ֆրանսացի, Ազատութիւն, Եղբայրութիւն եւ Հաւասարութիւն լոզունգին գիտակից մարդ, կը տեսնէ թէ այստեղ Պասթիլլի գրաւման համազօր շարժում կ'ընթանայ: Ժողովուրդը իր շղթաներէն ազատուած, կ'ուզէ իր իշխանութեան ձեւաւորողը ինք ըլլալ, իսկ հետաքրքիր է որ դուք իշխանութիւններու կողքին կեցած էք, փոխան ժողովուրդին: Ըսաւ՝. թէ իրենք իրաւունք չունին անկախ երկրի մը ներքին գործերուն միջամուխ ըլլալու: Ըսի՝. ներողութիւն, ընտրութիւններու օրը երբ տակաւին ոչ մէկ քուէատուփ բացուած էր, Ֆրանսայի նախագահ Նիքոլա Սարքոզիի շնորհաւորանքը կարդացուեցաւ հեռուստացոյցով: Եթէ չէիք ուզեր խառնուիլ երկրի իրավիճակին, ապա ո՞ւրկէ Սարքոզին իմացաւ որ Սերժ Սարգիսեանը ընտրուած էր, երբ տակաւին քուէատուփ չէր բացուած: Ես մեղադրեցի իրենց, որ այդ ամբողջ ինը օրուան ընթացքին, Հայաստանի մէջ իշխանութիւնները պահողը ոչ թէ Ռուսաստանն էր, այլ Ֆրանսան:*

*Սերժ Սարգիսեանը նախագահ դարձաւ Եւրոպայի «դապրոեյով եւ այդ ալ Արցախեան խնդրի զիջումներու հետ կապուած է: Ես գիտեմ ինչն ինչ է, եւ Վարդան Օսկանեանը այդտեղ որքան մեծ մեղք ունի: Այդ Թուրք-հայկական փրոթոքոլները չկա՞ն, ատոնք նախապատրաստուած էին եւ Սերժի հետ արդէն համաձայնեցուած: Վարդան Օսկանեանը գիտէ այս բոլորը: Շան գլուխը թաղուած է Թուրքիա-Հայաստան Փրոթոքոլներու Զուիցերիոյ մէջ ստորագրութեան հետ, որ պայմանաւորուած էր իշխանութիւններու վերարտադրմամբ: Սերժը, իբրեւ ապագայ նախագահ, խոստացած էր, որ պիտի ստորագրէ ատիկա: Ահա թէ ինչո՞ւ Եւրոպան, ոչ թէ Հայաստանի ժողովուրդի, այլ իշխանութիւններու վերարտադրման ու կեղծիքի կողմը կեցաւ: Այստեղ է հարցի պատասխանը եւ այս ըսած եմ 2008 թուականի երեւի Սեպտեմբեր թէ Հոկտեմբեր ամիսներուն եւ այդ էր Մարտ 1-ի տասը զոհերու գինը:*

*Եւրոպան է պատճառը, ոչ թէ Ռուսաստանը: Սա ամէն մարդ պէտք է իմանայ: Ռուսաստանի տարտը չէր թէ ո՞վ նախագահ կ'ըլլայ, որովհետեւ ո՞վ ալ ըլլայ, Ռուսամէտ պիտի ըլլայ: Ենթադրենք Լեւոն Տէր Պետրոսեանը եկաւ, չէ՞, այո՛, չէֆ պիտի ըսէր Փութինին, Մետվետեւին, Մոսկուային: Առանց խնդիրի: Եթէ այս բանը չիմացող հայ կայ, կը խնդրեմ, որ այդ հային գգաստացնէք որ իմանայ: Ռուսը պիտի թելադրէ եւ Հայաստանի իշխանութիւնները այո՛ պիտի ըսեն: Մենք այսպիսի իրավիճակի մէջ կը գտնուինք: Բան չէ փոխուած:*

*Գլխաւոր հիւպատոսի (Ժաքի Շարոտ, արտակարգ լաւ մարդ) գալէն ետք, երբ հանդիպեցայ հետը, ի ներկայութեան Վահագն Խաչատուրեանի, եթէ չեմ սխալիր երեւի նաեւ Միքայէլ Հայրապետեանի եւ Դաւիթ Շահնազարեանի, ան ըսաւ ինծի թէ կը հասկնայ գաղափարներս եւ կը տեսնէ, որ իմ ժողովուրդի պայքարին միացած եմ, բայց տղաս ըսաւ, աշխարհը այս աշխարհը չէ, աշխարհը ռէալփոլիթիքի աշխարհ է, հաւատայ որ Եւրոպան, Ամերիկան, Ռուսաստանը այս իշխանութիւններու քովն են, ոչ թէ հայ ժողովուրդին: Այս հրապարակը կը տեսնես չէ՞, մարդկանցով լեցուն, առաւօտեան արիւն պիտի թափուի այստեղ: Մարդը ուղղակի արիւն բառը օգտագործեց: Յարձակման պիտի ենթարկուիք եւ դուն թիրախ ես, կարող է սպաննուիս: Մենք, իբրեւ Ֆրանսա, գիտենք այս բոլորը եւ իմ պարտականութիւնն է ի պաշտօնէ քեզի ըսել վկաներու առջեւ, որ իրենք քեզի խփելու են, սպաննելու են եւ արիւն պիտի թափուի այստեղ: Ես ալ պատասխանեցի, որ իմ ժողովուրդը որտեղ է ես ալ հոն եմ, Ֆրանսա եկողը չեմ: Ըսաւ՝.- կնոջդ եւ երեխաներուդ մասին մտածէ: Ըսի՝, թէ եկողը չեմ, եւ վերջ: Մարդը զարմացած էր ու ըսաւ որ իշխանութիւններուն հետ իրենք համաձայնեցուցած են, որ ես եթէ ելլեմ հրապարակէն, ոչ մէկ ձերբակալութիւն պիտի ըլլայ: Ազատ պիտի ըլլաս: Պատասխանեցի թէ ես չեմ կրնար ժողովուրդին դաւաճանել, վտանգի պահուն մաշկս փրկելու համար ելլեմ երթամ:*

*Ուրեմն մնացի ու Տէր Պետրոսեանին մօտ երթալով ըսի, որ չեմ գիտէր ո՞ր ժամուն, բայց ուժ գործադրելու եկողները առաւօտեան պիտի գան: Ինք որպէս առաջնորդ, պէտք է զգուշացնէր այս ժողովուրդին, որ պիտի գան սպաննելու, պիտի գան խփելու: Ի՞նչ պէտք է ընէ ժողովուրդը, չէ՞: Հրամանատարը իր զինուորներուն պէտք է կոչ ընէ ինչպէս շարժիլ: Ոչ մէկ կոչ: Ըսի՝, Պարոն Տէր Պետրոսեան, ասիկա այս իրավիճակին, ատեկվաթէ (համարժէք) չէ: Մարդ չի կրնար ժողովուրդի ճակատագրին հետ այսպէս խաղալ: Ժողովուրդը հօտ է, իսկ հովիւը ինքն է: Հովիւը պէտք է իր հօտը տանի այնտեղ որտեղ ինք ճիշտ կը գտնէ: Ըսի՝, թէ ժողովուրդը կը լսէ իրեն, որովհետեւ ունի այդ սէրն ու յարգանքը իր հանդէպ, թէկուզ իր չուզած բանը ըսէք: Դուք ըրէք այդ բանը: Եթէ չըրիք, պատմութեան առաջ խնդիր պիտի ըլլայ: Այս ես ըսի իրեն եւ չորս հոգիներ վկայ են այս բանին: Ամպիոնէն քիչ մը վար Սպենդիարեանի արձանը կայ եւ իմ վրանս ալ Թումանեանի արձանին ուղիղ տակն էր, վրան Ֆրանսայի դրօշակ: Երբ վրանս վերադարձայ, տղաներ եկան ըսելու թէ երեւի յարձակո՞ւմ պիտի ըլլայ: Ըսի այո, թէեւ ժամը չեմ գիտեր, բայց ամբողջ աշխարհով ընդունուած է, որ մութ ժամանակ կը յարձակին, ոչ լոյսին: Ընդհանրապէս լուսադէմին, որովհետեւ մարդուս ամենէն տկար ժամանակն է այդ պահը: Ոստիկանութիւնը ընդհանրապէս խուզարկութիւններու կ'երթայ այդ պահին, որ նուազագոյն դիմադրութեան հանդիպի: Ուրեմն յարձակման մասին խօսակցութիւնը սկսաւ տարածուիլ առաւօտեան ժամը երեքի ատենները, Մարտ 1-ին:*

Հ. Քանի՞ հազար մարդ կար հոն

*Շար.ը էջ 14*

# ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՍԱՐԳԻՍ ՀԱՑՊԱՆԵԱՆԻ ՀԵՏ

*Շարունակուածէջ13–էն*

այդ ժամանակ:

*Պ. Մօտաւորապէս երեւի 7-8 հազար, որովհետեւ ժողովուրդին կոչ ուղղած էին, որ գացէք վաղը ժամը երեքին եկէք: Ես այդ գիշեր արտահերթ ելոյթի խնդրանքով դիմած էի: Իրենք կը վախնային, որ ես յարձակման մասին պիտի խօսիմ: Իրենց ըսի, որ այդ մասին պիտի չխօսիմ, այլ կոչ պիտի ուղղեմ ժողովուրդին հրապարակը չլքել, որովհետեւ որքան շատ մարդ ըլլայ հոն, այնքան դիմացինդ կը խուսափի յարձակումէ: Արամ Մանուկեանը կանչեց որ ելոյթ ունենամ, ես ալ կոչ ըրի ժողովուրդին, որ մինչեւ յաջորդ օրուան՝ Կիրակիի մէկ միլիոն ցոյցը, հրապարակը չլքեն եւ ինչքան մօտերը ապրող ծանօթներ ունին, խնդրեն որ գան հրապարակ: Բացէ ի բաց չըսի, թէ 4-5 ժամ ետք կրնան գալ եւ խեղդ անիծեն: Լեւոն Տէր Պետրոսեանը այս բոլորի պատասխանը մինչեւ այսօր չէ տուած եւ ես ալ առաջին անգամ ըլլալով կ'ըսեմ ասոնք:*

*Առաւօտեան ժամը 3-4-ի ատենները մենք լուր ունեցանք որ ոստիկանութիւնը չորս փողոց ներքեւ արդէն փակած է տարածքը: Մենք օղակի մէջ էինք առնուած: Ժամը չորսի կողմերը կինս ինծի կը հեռաձայնէ, որ դուն գիտե՞ս որ բանակը ոտքի հանած են: Ըսի գիտեմ Ցասմիկ: Ըսաւ խե՞նթ ես, ինչո՞ւ կ'ընես, երեխաները մեղք չե՞ն, հիւպատոսը քեզի բան չըսա՞ւ: Ըսի, Ցասմիկ թող, Հայատանցին դուն ես, ես եմ պայքարի մէջ, թող: Կնոջս հետ կռիւ ըրած եմ: Ըսաւ մեղք են երեխաները, իրենք քեզի սպաննելու են: Ըսի ոչ մէկ բան չըլլար, հանգիստ մնայ: Երբ որ եկան, Լեւոն Տէր Պետրոսեանը կարծես անակնկալի եկած մարդ, կարծես ոչ մէկ բան չէր գիտէր, մինչդեռ շատ լաւ գիտէր: Նոյնիսկ զօրամասերը երբ տեղաշարժ կ'ընէին, մեզի հեռաձայն կ'ընէին թէ դուրս եկած են: Լեւոնը հաւաքած էր իր շտապը Արարատ Զուրապեանի սրճարանին մէջ եւ կը քննարկէր այս բոլորը: Երբ որ Կրիշա Սարգիսեանը եկաւ, հիմա ողորմած, Ռոպերթ Քոչարեանի թիկնապահներու պետն էր, Ղարաբաղէն գիտեմ իրեն եւ շատ մօտ եղած եմ ...*

Հ. Ի՞նչ է մահացաւ:

*Պ. Մօտ մէկուկէս տարի ետք էր, կ'ըսեն թէ սրտի տագնապէն, բայց ինծի կը թուայ որ իրեն մէջտեղէն վերացուցին, չեմ գիտեր ինչո՞ւ: Ուրեմն Կրիշան մօտեցաւ Տէր Պետրոսեանին ըսելով, Պրն. Նախագահ, դուք ապօրինի քայլեր առած էք, եւայլն, եւ պէտք է ազատէք հրապարակը: Լեւոնը կոչ ըրաւ ժողովուրդին, որ հանգիստ մնան ու խուճապի չի մատնուին, որ ընդհարումի չերթան եւ ինք ոստիկանութեան հետ պիտի քննարկէ իրենց պահանջները: Այսպէս ըսելն ու իրենց յարձակուիլը մէկ եղաւ: Իմ աչքիս առջեւ իրեն թեւը ոլորեցին ու սկսան քաշքշել եւ մէկ հատ մարդ իրեն քով չի գնաց: Ես շշմած էի: Ի՞նչպէս կարելի է, որ Նախագահը, շարժման ղեկավարը, առաջնորդը ամպիոնին վրայէն կը խօսի եւ իրեն կը տանին ու ոչ մէկը իր շրջապատէն քովը չերթար պաշտպանելու: Իրենք պէտք է ինքզինքնին զոհէին իրենց առաջնորդին համար: Երեւի այդ պահը յիշարժան պիտի մնայ Լեւոնի ամբողջ կեանքին մէջ, որ ինք այդպիսի պահ ապրեցաւ, անպաշտպան մնաց: Կրնա՞ս պատկերացնել: Հրամանատարիդ կը տանին եւ զինուորներէն ոչ մէկ շարժում. ըլլալիք բան չէ: Այնքա՞ն վիրաւորական էր, որ այնտեղ իմ նման զինուորական ուղի անցած շատ ու շատ տղաներ կային, որ իրենք ալ Կրիշային կը ճանչնային ու կը պոռային անոր, որ ամօթ է, թո՞ղ Նախագահին ձեռքը: Շատ տգեղ երեւոյթ էր: Մեր աչքի առաջ երբ կը տանէին, Լեւոնը ընդվզեցաւ ու փորձեց նստիլ քաղաքապետարանի մէկ նստարանին վրայ: Կրիշան ու իր շրջապատի մարդիկը քովը կեցան, եղանակը շատ ցուրտ ըլլալուն վերմակ մը տուին որ ծածկուի եւ նստած տեղէն ամէն ինչ տեսաւ, յարձակում, արիւնահոսութիւն եւ այլն: Մէկ խումբ դէպի Բաղրամեանի կողմը փախաւ, ուր ոստիկանութեան ձեռքը անցաւ. ուրիշ խումբ մը դէպի Հիւսիսային պողոտայ ու հոն ալ ծեծ ու ջարդ: Եղաւ ինչ որ եղաւ:*

*Ճիշտ այդ ժամանակ, հեռաձայնեցի լուսանկարիչ բարեկամիս՝ Արշակ Մաքս Սվազլեանին, ֆրանսահպատակ, Մարսէյլէն, որ ճիշտ մօտակայքի շէնքը կ'ապրի, որ հասիր, ճիշտ քու պահն է, նկարելու ժամանակն է. նկարներ, որոնք ոչ ոք պիտի չկրնայ առնել: Տղան քնոտ վիճակի մէջ ելեր եկեր էր, ես չտեսայ իրեն, որովհետեւ մինչ այդ ինծի շատ գէշ ծեծած էին: Ուրեմն Մաքսը եկեր ու բաւական նկարեր էր: Բայց մի ըսեր աւելի շատ նկար, ետքէն իմացայ, որ Վարդան Օսկանեանը, որ հիմա Սիվիլիթաս հիմնադրամը ունի, Հիւսիսային պողոտայի անոր կեդրոնի իններորդ յարկէն չորս քամերաներով այս բոլորը նկարած է եւ մինչեւ հիմա այդ ժապաւէնը չկայ ու չկայ:*

*Մարտի 1-ին, Ազատութեան հրապարակի յարձակումէն ետք, անոնք որ ազատեցան, հաւաքուեցան Միասնիկեանի անուան հրապարակ, որ Ֆրանսայի, Իտալիոյ եւ Ռուսաստանի դեսպանատուներուն հանդիպակած կողմն է: Հոն եկան մօտ 200 հազար մարդ: Ես յետոյ վիտէոյի վրայ տեսած եմ այդ ամէնը: Երեք դեսպանութիւններն ալ նկարած են ինչ որ եղաւ: Համաժողովրդական շարժումը մնացած էր առանց առաջնորդի: Լեւոն Տէր Պետրոսեանը յայտարարած է, որ իրեն տնային կալանքի ենթարկած են, որ ես հիմա կրնամ ըսել, որ իրականութեանը չի համապատասխաներ, իրեն նոյնիսկ խնդրած են, որ երթայ ժողովուրդին ըսէ, որ հանգստացէք եւ տուն գացէք, բայց ինքը չէ եկած եւ չէ ըսած, որովհետեւ իր անձնական անվտանգութեան համար վախցած է, հակառակ անոր որ իններորդ վարչութիւնը իր ապահովութեան հսկիչն ալ է: Այդ ժամանակ Գարեգին կաթողիկոսը իրեն մօտ գացած է տեսակցութեան եւ ինք իրեն չէ ընդունած, որ մեծ սխալ է, որովհետեւ ընտրութիւններէն ետքը երբ կաթողիկոսը կու գայ քու ոտքիդ, կարեւոր չէ թէ կաթողիկոսը ինչպիսի մարդ է, ինքը Ամենայն Հայոցի տիտղոսը ունի: Ես ըլլայի Լեւոն Տէր Պետրոսեանի տեղը, կաթողիկոսին թեւը մտած կ'երթայի հոն, արիւն չթափուելու համար:*

Հ. Ինչու մինչ այդ արիւն չէ՞ր թափուած:

*Պ. Ո՛չ, ծեծկռտուք, վիրաւորներ, հիւանդանոց եւ բանտարկութիւն եղած էր, բայց զոհ չէր եղած: Արիւնը պիտի թափուէր երեկոյեան: Լեւոն Տէր Պետրոսեան փոխանակ մերժելու ընդունիլ կաթողիկոսը, պիտի շահագործէր նման առիթը, որ իր ոտքին եկած էր: Դուն ի՞նչ տեսակ առաջնորդ ես: Առաջնորդ չես որ տուն երթաս ու փակուիս: Մարդիկ նախագահի խօսքին կը սպասէին: Առաւօտ ծեծուեցանք, հիմա ի՞նչ ընենք: Այդ խօսքը չեկաւ երեկոյեան եւ ոչ ալ Մարտ 1-ին: Մարտ 1-ը 2-ի կապող այդ գիշերուան տասը զոհերը եւ այդ ամպիոնի այսպէս ըսած առանց մարդ մնալը ոչ միայն բռնութիւններ կիրառած իշխանութիւններու, այլեւ Լեւոն Տէր Պետրոսեանի թիւ մէկ պատասխանատուութիւնն է: Դուն չես կրնար անգլուխ թողնել քու հօտը, կը յօշոտեն. եւ դուն գիտես, որ յօշոտողները պատրաստ են: Դուն գիտես որ բանակը պատրաստ է եւ քաղաք մտած է, Ղարաբաղէն յատուկ խումբ բերած են, 380 հոգիէ աւելի «սպեցնազ», օլիկարխիայի մարդոց զինուորական ալ յատուկ զգեստ բաժնուած է, որ ժողովուրդի դէմ ջարդի մասնակցին: Բայց մեր ժողովուրդը այնքան կարգին է, որ հպարտօրէն ոտքի կանգնեցաւ առանց առաջնորդողի: Կրնա՞ս հասկնալ: Այդ ժամանակ է, որ մենք պէտք է գործէինք, բայց մենք չկայինք: Շարժման այդ մաքուր հատուածը որ կ'ըսեմ, չկար: Հաւանաբար միայն մէկ-երկու անձ, ինչպէս Սասուն Միքայէլեանը եւ Նիկոլ Փաշինեանը կար: Այդտեղ Նիկոլն ալ չփոթուած ու չգիտնալով ինչ ընել, խօսափողը կը փոխանցէ Շանթ Յարութիւնեանին, որ հակառակ այդ ինը օր ու գիշեր մեզի հետ ըլլալուն, ելոյթի իրաւունք չէին տուած իրեն: Շանթը, որ շարժման շտապի հետ որեւէ կապ չունէր, բանտին մէջ ինծի ըսաւ թէ անակնկալի եկած էր եւ պահի ազդեցութեան տակ միտքը եկածը խօսած էր, որուն համար տարիներով բանտ նստաւ, մինչ Նիկոլը փախած էր: Շտապի անդամներէն Լեւոն Զուրապեանը, որ Լեւոնի խօսնակը դարձաւ, անոր հեռաձայնելէ ետք կոչ կ'ընէ ժողովուրդին, որ տեղէն չշարժի, մինչ Դաւիթ Շահնազարեանը խօսափողը խլելով կոչ կ'ընէ շարժուիլ դէպի Մատենադարան: Այսինքն ,շունը տիրոջը չի ճանչնարէ առածի իրավիճակ մը կը տիրէր: Գոնէ մէկ անգամ Լեւոն Տէր Պետրոսեանը կրնար հեռախօսով հանդէս գալ: Չեղաւ:*

Հ. Ինչո՞ւ:

*Պ. Այդ ինչուներու մասին մտածելով անցան իմ բանտային բոլոր ամիսներն ու տարիները, բայց ձեր հարցի պատասխանը չունիմ: Երբ բանտէն դուրս ելայ, գացի իր մօտ եւ այս հարցը ուղիղ տուի իրեն. Ինչո՞ւ չըրիր այն ինչ որ քեզմէ կը սպասուէր: Ըսաւ՝. դուն կ'ուզէիր որ մեր զոհերը դառնային հարիւրնե՞ր, հազարնե՞ր: Ըսի՝, չհասկըցայ, ընդհակառակը, զոհ չէր ըլլար, եթէ դուք գայիք հոն: Դուք չէի՞ք Ազատութեան հրապարակ հաւաքուած ժողովուրդին Եղիշէ Չարենցի «Մահուան Տեսիլ»է բանաստեղծութիւնը արտասանողը, թող ոչ մի մարդ չմօտենայ կախաղանին, ոչ մի զոհ չպահանջուի ինձնից բացի, եւ այլն: Ինչո՞ւ չըսիք, երբ «քուլմինասիոն»է վերջնակէտային ժամ էր, երբ ժողովուրդիդ կը ջարդէին եւ դուք մէջտեղ չկայիք: Իրենք չէին ձգէր ըսաւ: Ըսի, ինչպէ՞ս թէ, ո՞վ պիտի չձգէր, ինչո՞ւ միայն գիշերուան ժամը 2-ին, 3-ին Լեւոն Զուրապեանի միջոցաւ կը յայտարարէք ժողովուրդին, որ իրենց տուները երթան: Պատասխանեց, որ ինք կը ջանար վիճակը հանդարտացնել: Ըսի, ոչ. միայն մէկ հարց ձեզի. Ձեր տղան ու՞ր էր այդ օր: Քանի որ մենք լսած էինք, որ խառն իրավիճակի պատճառով ան Ամերիկա ղրկուած էր...*

*(Շարունակելի–2*



# ԳԱԼ ՏԱՐԻ՝ ՎԱՆ (15)
## ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ՝ ԵՐԱԶԱՅԻՆ ԱՐԵՒՄՏԱՀԱՅԱՍՏԱՆԷՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ ԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ

*ՎԱՐԴԳԷՍ ԳՈՒՐՈՒԵԱՆ*

*Յաջորդ առտու, Յուլիս 14-ին Արարատին հրաժեշտ տալով, աւելի ճիշտ՝ ցտեսութիւն ըսելով ճամբայ ելանք դէպի Անի, Բագրատունեաց Թագաւորութեան երբեմնի մայրաքաղաքը:*

*Ճամբան՝ դարձեալ կանանչապատ, ընդարձակ դաշտեր մեր նախանձը կը քրքրէին: Հարուստ՝ բազմապիսի պտղատու ծառերով, տեսակաւոր բանջարեղէններու դաշտագետիններով (որոնք կ'ոռոգուէին Ախուրեանի ջուրերով): Շրջանը շատ կը նմանէր Քալիֆորնիոյ Սան Ուագիմ Հովիտին կամ Լիբանանի Պէքայի դաշտերուն: Ուտելիքի հսկայական շտեմարան մը, որ ոչ միայն չի վերջանար, չի սպառիր, այլ ամէն տարի հարիւր հազարներով մարդ կրնայ կերակրել:*

*Կարգ մը տեղեր ճամբուն երկու կողմերը Սօսեաց անտառներով ծածկուած էին: Տասնեակ հազարներով Սօսի ծառեր, կարծես՝ անվերջանալի: Յիշեցի Արարատ լերան Հայաստանի կողմէն նկարուած այն տեսարանը ուր Արարատի առջեւ երկուքուկէս Սօսիի ծառեր ... բարեւ կու տան դիտողներուն: Հոս՝ սահմանէն քիչ մը անդին, հազարներով երկիրը կանաչապատած էին: Ինչ արդարութիւն է այս Աստուած իմ:*

*Դէպի Անի մեր ուխտագնացութեան ճամբուն վրայ Իգտիրէն անցանք: Միջին դարերուն ան կը կոչուէր Ցոլակերտ: 1826-1828-ի Ռուս - Պարսկական պատերազմէն ետք Իգտիրը իր շրջանով անցաւ Ռուսական Կայսրութեան տիրապետութեան տակ: 1850-ին Իգտիրը մաս կը կազմէր Երեւանի Կառավարչութեան: Ըստ Ռուսական արխիւներուն, այդ ժամանակ շրջանի 71,370 մարդ հաշուող բնակչութեան 34,350-ը Ազերի - Թաթարներ էին (48.3 առ հարիւր), 22,100ը՝ Հայեր (31.1 առ հարիւր) եւ 14,920-ը՝ Քիւրտեր (20.6 առ հարիւր): 1914-ին Իգտիր քաղաքը ունէր 10,000 բնակիչ:*

*Մուտրոսի Զինադադարէն ետք, Նոյ. 1918, Իգտիրի շրջանը անցաւ Հայաստանի Հանրապետութեան տարածքին մէջ: Սակայն, 1920 Սեպտեմբերին, Մուստաֆա Քէմալ Աթաթիւրքի հրահանգով Քեազիմ Քարապեքիր կը յարձակի Հայաստանի վրայ Իգտիրը եւ Հայաստանը վերջնականապէս գրաւելու եւ հայերուն հաշիւը մաքրելու: Հայեր շատ զօրաւոր դիմադրութիւն ցոյց կու տան, սակայն Հոկ. 20-ին ստիպուած կը նահանջեն: 1921 Կարսի Դաշնագրով, Իգտիրը կը յանձնուի Թուրքիոյ:*

*Ճամբուն վրայ Օպա գիւղին մօտ պասը կեցաւ եւ մեզի ցոյց տրուեցաւ «Նահատակաց Յուշարձան» մը... «Իգտիր Սօյգըրըմ Անըթ-Միւզէսի» - «Իգտիրի Ցեղասպանութեան Յուշարձան - Թանգարան»ը: Իբր թէ Հայերը, Համաշխարհային Ա. Պատերազմի ժամանակ մէկ միլիոն Թիւրք ջարդած են եւ ի յիշատակ անոնց՝ այդ յուշարձանը կանգնած է: Մեր ուղեկցորդը բացատրեց, որ ճիշդ այդ վայրին մէջ, 500 Թուրքերու դիակները գտնուած են, ջարդուած՝ հայերու կողմէ, եւ անոր համար այդ տեղւոյն վրայ կանգնեցուած է յուշարձանը: Հոկ. 5, 1999-ին, Թուրք*




*Պետական նախարար Ռամազան Միրզաօղլուի կողմէ բացումը կատարուած այս յուշարձանը ունի 43.5 մեդր բարձրութիւն, վերի մասը 5 սուրեր, ծայրերը միացած, գմբեթաձեւ, Արարատի նմանողութեամբ (ինչ հեգնանք), իսկ վարը՝ Թանգարանի սենեակները: Բնականաբար այս յուշարձանը կառուցուած էր հակազդելու համար հայերու ցեղասպանութեան փաստարկումներուն եւ քարոզչութեան:*

*Անի քաղաքին ճիշդ հարեւանութեամբ գիւղ մը մտանք, ուր կարծես վերջին 50 տարիներուն նոր տուն կամ այլ կառուցուածք չէր շինուած: Ցեխով շինուած, կիսափուլ ցանկապատերուն ետեւը քանի մը կովեր, էշեր եւ ոչխարներ արեւուն տակ սմքած մեզ կը դիտէին, մինչ տասնեակ մը հաւեր մեր պասին առջեւէն կտկտալով կը վազէին եւ մեր գալուստը կ'աւետէին...: Ոտաբոպիկ Թուրք կամ քիւրտ լակոտներ կը վազվզէին մէջտեղերը: Յուշանուէրներ ծախող քանի մը փոքր կրպակներու առջեւ փոքր աթոռներու վրայ նստած տարիքոտ մարդիկ մեր պասը տեսնելով կը ժպտէին մեզի, այն յոյսով որ իրենցմէ գնումներ պիտի ընէինք - գօվացուցիչ, ուտելիք եւ յուշանուէրներ:*

*Կանգ առինք Անիի լուռ պարիսպներուն առջեւ: Տխուր էին պարիսպները: Տխուր էին որովհետեւ չէին կրցած պաշտպանել ներսի բնակչութիւնը, չէին կրցած տէր կանգնիլ հազար ու մէկ եկեղեցիներուն, պալատներուն, անմեղ ժողովուրդի արդար քրտինքով շինուած տուներուն: Տխուր էին, սակայն հպարտ՝ իրենց անցեալի փառքով, իրենց հերոսական դիմադրողականութեամբ եւ հազարամեակի մը վրայ երկարող իրենց ծառայութիւններով: Խրոխտ այդ պարիսպները մեզ ներս կը հրաւիրէին - «ձերն է այս քաղաքը, եկէք, եկէք եւ բալասան բերէք մեր վիշտերուն» ըսելով...:*

*961 - 1045 Անին Բագրատունեաց Թագաւորութեան մայրաքաղաքն էր: Ան եռանկիւնաձեւ վայրի մը վրայ շինուած է, շատ գեղեցիկ միջավայրի մը մէջ, բնական պաշտպանութիւններով շրջապատուած: Արեւելեան կողմէն Ախուրեան գետի անդունդն է, արեւմտեան կողմէն՝ Պօստանլար կամ Ծաղկաձորը: Ախուրեան գետը Արաքս գետի մէկ հարկատու ճիւղն է, որ այժմ Հայաստանի եւ Թուրքիոյ սահմանագիծն է: Հազար ու մէկ եկեղեցիներու այս քաղաքը հարուստ էր բազմաթիւ եկեղեցիներով, պալատներով եւ ժամանակուայ ամենայառաջացեալ արուեստագիտական եւ գեղագիտական շինութիւններով, կառոյցներով: Ան առեւտրական եւ վաճառականական կարեւորագոյն կեդրոններէն մին էր «մետաքսի*



*ճամբուն խաչմերուկին», որ Չինաստանը, Հնդկաստանը, Ռուսիան եւ արեւելեան այլ երկիրները կը կապէր Բիւզանդական Կայսրութեան , արաբական աշխարհին եւ Եւրոպային: Իր փառքի գագաթնակէտին, Անին ունէր շուրջ 200,000 բնակիչ (ըստ ոմանց՝ մինչեւ 500,000): Ան իր փառաշուք մեծութեամբ եւ հոյակապ չքեղութեամբ կը մրցէր Կոստանդնուպոլսոյ, Պաղտատի եւ Դամասկոսի հետ:*

*Ք.Ա. 12-րդ դարուն Ուրարտական Թագաւորները կ'իշխէին այս շրջաններուն վրայ: Սումէրները (7-րդ դար Ք.Ա.), Պարսիկ Սասանեան Թագաւորները (4-6-րդ դար, Ք. Յ.), 7-րդ դարուն՝ Բագրատունիները (մինչեւ 1045), Բիւզանդացիները (1045-1064), եւ 1064-էն ետք՝ Սելճուքներն ու Մոնկոլները, Թուրքերը, Պարսիկներն ու Ռուսերը փոխն ի փոխ տիրապետեցին այս զուտ հայկական հողերուն վրայ:*

*Եղիշէ եւ Ղազար Փարպեցի պատմիչները առաջին անգամ Անի քաղաքը կը յիշեն Ք. Յ. 5-րդ դարուն: Անին այն ժամանակ բլուրի մը բարձունքին բերդ մըն էր որ Կամսարական Նախարարութեան կը*

*Շար.ը էջ 19*

ARMENIAN AMERICAN ORPHANS CHRISTMAS FUND, INC.
և «Քաջ Նազար» հանդէսն ու հեռուստաժամը ներկայացնում է
16-րդ ամեակի ԹԵԼԵԹՈՆ
Ի ՆՊԱՍՏ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾՆՈՂԱԶՈՒՐԿ
ԵՒ ՀԱՇՄԱՆԴԱՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՆԿԱՏՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ
Կիրակի, Սեպտեմբեր 27, 2015, ժամը 3-12:00
ARMENIAN AMERICAN ORPHANS CHRISTMAS FUND, INC.
and "KACH NAZAR" Magazine and TV Show
Presents
16th ANNIVERSARY
TELETHON
ON SUNDAY, SEPTEMBER 27, 2015
FOR DISABLED CHILDREN AND FOR
THE RESTORATION OF CHILDREN'S HOMES

Our 2015-2016 Project is to restore and renovate a Kindergarten in Gyumri, Armenia. Upon completion of our project, the kindergarten will be named "7 Agnels" in memory of the Avetisyan family whose members were brutally massacred back in January, 2015.



Mail your check Please to, (A.A.O.C. FUND,) P.O.BOX 250038, GLENDALE, CA 91225
Tel: 818-246-0125 • 818-239-6880 818-292-9619
E-mail:forourkids99@gmail.com • www.forourkids99.com
Non-Profit Organization. a Tax Exempt 501 (c) 3 Charity.

# ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆ (ՓՐՈՖ. ՆԻԿՈԼԱՅ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 85-ՐԴ ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

*ԱՒԵՏԻՍ ՌԱԶՄԻԿ*



*Վերջերս լրացաւ ականաւոր արեւելագէտ, դոկտոր փրոֆեսոր Նիկոլայ Յովհաննիսեանի ծննդեան 85-րդ տարեդարձը:*

*Այս առթիւ, Հայաստանի Հանրապետութեան Նախագահ Սերժ Սարգսեանի յղած շնորհաւորական ուղերձը կը հաստատէ թէ ան հեղինակաւոր եւ ծանրակշիռ ներկայութիւն մըն է հայրենական կեանքին մէջ՝ իր բազմաբեղուն ու բազմաժանր գործունէութեամբ ու վաստակով:*

*Ո՞վ է այն ծանրախոհ գիտնականը, որ ամէն երեկոյ զբօսնելով Երեւանի փողոցներով՝ Սայաթ-Նովայէն Մաշտոց ու Քասքատ՝ իր յուշերուն հետ կը կրէ ժամանակակից հայ կեանքին հետ առնչուած գրուած-չգրուած դրուագներ, արաբական իրադարձութեանց հետ կապուած բազմաթիւ խճճուած հանգոյցներ եւ պետական-քաղաքական կեանքի բովէն անցած դէմքեր ու դէպքեր:*

*Ան ծնած է 1930-ին Լենինական (Կիւմրի): 1953-ին աւարտած է Երեւանի Պետական Համալսարանի միջազգային յարաբերութեանց բաժինը: Ապա, խորացած է արեւելագիտութեան եւ յատկապէս արաբագիտութեան ոլորտին մէջ՝ արաբական աշխարհի զանազան հակամարտութիւնները դարձնելով խոր ուսումնասիրութեանց առարկայ: Ան իրաւամբ կը համարուի հայկական արաբագիտութեան դպրոցին հիմնադիրը:*

*Տարիներու ընթացքին անոր վաստկած գիտական կոչումներուն, ստացած շքանշաններուն ու պատուոգրերուն եւ անդամակցած կազմակերպութիւններուն ու հաստատութեանց մօտաւոր թուարկումն իսկ հերիք է համոզուելու, թէ անոր կեանքի 85-ամեայ ուղին եղած է արդիւնաշատ ու աշխատանքով լի: Աւելին, հեղինակած մենագրութեանց երկար ցանկը, գիտական յօդուածներուն եւ դասախօսութեանց անսպառ ցուցակը ցոյց կու տան թէ ան առանցքային ներկայութիւն եղած է ոչ միայն Խորհրդային Հայաստանի, այլ՝ Խ. Միութեան մաշտապով:*

*Պատմական գիտութիւններու դոկտոր (1968), փրոֆեսոր (1972), գիտութեան վաստակաւոր գործիչ (2003), Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի թղթակից անդամ (2006). 1984-1994 թուականներուն եղած է Ակադեմիայի արեւելագիտութեան ինստիտուտի տնօրէնի գիտական գծով տեղակալ, իսկ 1995-2006 թուականներուն՝ նոյն ինստիտուտի տնօրէն. 2006-էն նշեալ ինստիտուտի տնօրէնի խորհրդական, Միջին Արեւելքի միջազգային եւ տարածաշրջանային յարաբերութիւններու ուսումնասիրութեան բաժնի հիմնադիր-ղեկավար, Հայաստանի Հանրապետութեան*

*Պաշտպանութեան Նախարարութեան Դ. Կանայեանի անուան ազգային ռազմավարական հետազօտութիւններու ինստիտուտի պետի խորհրդական:*

*Ան անդամ է տասնեակէ աւելի ակադեմիաներու եւ գիտական ընկերութեանց, ինչպէս՝ Նիւ Եորքի գիտութիւններու ակադեմիա, «Արարատ» գիտութիւններու միջազգային ակադեմիա (Փարիզ), ազգային անվտանգութեան հիմնախնդիրներու գիտութիւններու միջազգային ակադեմիա (Մոսկուա), ազգային անվտանգութեան հիմնախնդիրներու գիտութիւններու համահայկական ակադեմիա (Երեւան), բնութեան եւ հասարակութեան մասին գիտութիւններու միջազգային ակադեմիա (Գերմանիա), աշխարհի ժողովուրդներու հոգեւոր միասնութեան միջազգային ակադեմիա (Մոսկուա), Սուրիոյ արաբական գիտութեան պատմութեան ընկերութիւն, ԱՄՆ-ի ազգային աշխարհագրական ընկերութիւն, ցեղասպանագէտներու միջազգային ասոցիացիա, քաղաքական գիտութեան Հայաստանի ասոցիացիա եւ այլն: Քեմպրիճի (Անգլիա) միջազգային կենսագրական կեդրոնը 2004-ին զայն հռչակած է «21-րդ դարու ականաւոր գիտնական», 2005-ին՝ «Աշխարհի առաջատար գիտնական», իսկ 2009-ին ներառած «100 ամենաբարձրակարգ գիտնականներ»ու ցանկին մէջ:*

*Ան անդամ է Եգիպտոսի Արաբական Հանրապետութեան եւ Հայաստանի Հանրապետութեան միջկառավարական համատեղ յանձնաժողովի հայկական մասին, Հայաստանի հակամարտութեանց լուծման կեդրոնի հիմնադիր-տնօրէն, Հայատլանտեան ասոցիացիայի նախագահ: Երկար տարիներ եղած է խորհրդային-արաբական բարեկամութեան ասոցիացիայի փոխ-նախագահ, հայ-արաբական բարեկամութեան եւ մշակութային կապերու հայկական ընկերութեան նախագահ:*

*Անոր աշխոյժ մասնակցութեամբ 2007-ին Գահիրէի համալսարանին մէջ հիմնուած է հայկական հետազօտութիւններու կեդրոնը: Ան պարգեւատրուած է Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիային գովեստագիրով, «Մովսէս Խորենացի», Հայաստանի Պաշտպանութեան Նախարարութեան «Վազգէն Սարգսեան» եւ «Հայկական Զինուած Ուժեր 1992-2012», «Բարեկամութեան բնագաւառի ներդրման համար» (Մոսկուա) մետալներով, Հայաստանի կառավարութեան «Հայոց Մեծ Եղեռն» ոսկեզօծ մետալով, Ֆրիտիոֆ Նանսէն յուշամետալով, «Ղարաբաղեան շարժում» (ԼՂՀ), «Հայաստան-Եգիպտոս. 15 տարի. Դիւանագիտական յարաբերութիւններ» մետալներով, զանազան պատուոգրերով եւ այլն:*

*Դոկտ. Փրոֆ. Ն. Յովհաննիսեանի վիթխարի վաստակին մէկ կարեւոր երեսը արեւելագէտներու պատրաստութիւնն է անկասկած:*

*Շար.ը էջ 19*

Ararat Foundation

**Ի յիշատակ Խանդութ Աւետեանի**
**Ազգանուէր մի կեանքի պատմութիւն**
**«Ես ասում եմ ձեզ՝ դուք ոչինչ չեք յանձնելու»**

**Կազմակերպութեամբ՝ «Արարատ Հիմնադրամ» հասարակական-բարէսիրական կազմակերպութեան եւ Խանդութ Աւետեանի բարեկամների**



Գեղարուեստական յայտագիր որին մասնակցում են՝
The program includes:
**Նունէ Աւետիսեան / Nune Avetisyan**
**Գայիանէ Գեւորգեան / Gayane Gevorkyan**
**Անահիտ Ներսիսեան / Anahid Nersissian**
**Մարիան Փաչանեան / Marian Pachanisn**
**Արթուր Յակոբեան (Միստր X) / Artur Hakobian (Mister X)**
**Սալբի եւ Սօսի Քէրքոնեան / Salpy and Sossy Kerkonian –**
**Երկնային Տաղեր / Heavenly Chants**

**Կիրակի, Սեպտեմբեր 20, կ.ե. 6:00**
**Sunday, September 20, 6 pm**
Armenian Society of Los Angeles
117 South Louise St.
Glendale, CA 91205

**In Memory of Khandut Avetyan**
**Story of a life devoted to the homeland**
***"I am telling you, you will not secede anything." - K. A.***

**Organized by "Ararat Foundation"**
**A public service and a humanitarian non-profit organization**
**and Friends of Khandut Avetyan**

Մուտքը՝ ազատ – Հիւրասիրութիւն　　Free Admission – Reception
Հեռաձայն/Phone՝ (818) 303-5566
"Ararat Foundation", 3115 Foothill Blvd. M-173, La Crescenta, CA 91214. araratifoundation@gmail.com

## ԸՆԿԵՐՆԵՐԸ ԻՆՉՊԷ՞Ս Կ'ԱԶԴԵՆ ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՐՋԱՆԿՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

*Ամերիկացի գիտնականները ապացուցած են, որ ընկերները կը ջերմացնեն մեզ: Կը պարզուի, որ մարդիկ, որոնք դրական ապրումներ կը յառաջացնեն մեր մէջ, կրնան ջերմութեան անուղղակի զգացում յառաջացնել: Քանի մը հետաքրքրական փաստ ընկերութեան մասին.*

*1.Մասնագէտները կը հաստատեն, որ ընկերներու հետ հանդիպումը օգտակար է առողջութեան համար: Խնդիրը այն է, որ ընկերներու հետ հանդիպումէն կը բարձրանայ բրոկեսդերոն հորմոնի մակարդակը, որ կը լիցքաթափէ մարդը եւ կը հանէ յոգնածութիւնը:*

*2.Գիտական հետազօտութիւնները ցոյց կու տան, որ մօտիկ ընկերներու հետ քիչ կապ ունենալը վատօրէն կ՚ազդէ մարդոց առողջութեան վրայ: Ապացուցուած է, որ անոնք, որոնք քիչ ընկերներ ունին, կը տառապին ոչ միայն անքնութենէ, այլ նաեւ քրոնիկ յոգնածութենէ: Այդպիսի մարդոց 90%-ը աւելի շատ ընկճախտի մէջ կ՚իյնայ, քան անոնք, որոնք ունին շատ ընկերներ եւ պարբերաբար կապ ունին անոնց հետ:*

*3. Կիներու եւ տղամարդոց ընկերութիւններուն միջեւ մեծ տարբերութիւն կայ: Խնդիրը այն է, որ տղամարդիկ իրարու հանդէպ աւելի հաւատարիմ են եւ անոնք աւելի դիւրին կը ներեն իրենց ընկերներուն, քան աղջիկները իրենց ընկերուհիներուն: Այս է պատճառը, որ տղամարդիկ աւելի հազուադէպօրէն կը փոխեն իրենց ընկերները:*

*4. Հասարակական կայքերու օգտատէրերուն 90%-ը կը հաստատէ, որ ընկերութիւն կարելի է ստեղծել միայն կենդանի կապի եւ իրական հանդիպումներու միջոցով:*

*5. Գիտնականները պարզած են, որ ծեր մարդիկ, որոնք աւելի շատ կապ ունին իրենց վաղեմի ընկերներուն հետ, քան հարազատներուն, աւելի երկար կ՚ապրին: Պարզուած է նաեւ, որ հարազատներու հետ կապը որեւէ կերպով չ՚ազդեր մարդու կեանքի տեւողութեան վրայ:*

*6. Մարդը որքան կրթուած է, այնքան աւելի շփուող է: Վիճակագրութիւնը ցոյց կու տայ, որ այն մարդիկ, որոնք դպրոցէն յետոյ չեն շարունակած կրթութիւնը, ընկերներու հետ կապ ունենալու խնդիրներ կ՚ունենան:*

## ՏԱՍՆԵՐԿՈՒ ՊԱՏՃԱՌ՝ ԵՐԲԵՔ ՉՅԱՆՁՆՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ

*Մինչ դուք ողջ էք, անհնար ոչինչ կայ. Կարելի է յանձնուիլ միայն մէկ պարագայի՝ մահուան: Մնացեալ բոլոր պարագաներուն դուք իրաւունք չունիք սպիտակ դրօշ պարզելու:*

*Իրատես եղէք. Ամէն ինչ մէկ անգամէն կարելի չէ ունենալ, գիտնալ, հասկնալ, ընկալել եւ այլն: Ձեզի պէտք է ժամանակ, փորձեցէք դասեր քաղել սեփական եւ ուրիշներու սխալներէն:*

*Դուք ուժեղ էք. Դուք աւելի ուժեղ էք, քան կը կարծէք: Միայն մէկ ձախողութիւնը բաւարար չէ, որ դուք հրաժարիք մեծ յաջողութիւններու հասնելու ձեր մտքէն:*

*Ցոյց տուէք ձեր կարելիութիւնները. Եթէ կը փափաքիք յայտնի ըլլալ, ուրեմն պէտք է աշխարհին ցոյց տաք ձեր ուժն ու կարելիութիւնները:*

*Ձեզմէ առաջ ոեւէ մէկը ըրած է ատիկա. Եթէ ձեզմէ առաջ ոեւէ մէկը յաջողած է ընել ատիկա, ուրեմն դուք նոյնպէս կրնաք հասնիլ ատոր: Ասիկա իսկապէս ազդեցիկ պատճառ է միշտապէս յառաջ երթալու համար:*

*Հաւատացէք ձեր երազանքին. Մի դաւաճանէք դուք ձեզ: Կը պատահին մարդիկ, որոնք պիտի ըսեն ձեր ցանկութիւններու անկատար ու անհնար ըլլալուն մասին: Թոյլ մի տաք անոնց խորտակել ձեր երազանքը:*

*Ձեր ընտանիքն ու ընկերները. Թող որ ձեզի համար սիրելի ու կարեւոր մարդիկ ներշնչանքի աղբիւր ըլլան ձեր նպատակներուն հասնելու եւ յառաջ շարժելու համար:*

*Փոխեցէք աշխարհը. Երբ յաջողութիւններ կ՚ունենաք, կրնաք օգտագործել զանոնք աւելի մեծ փոփոխութիւններու, միւսներուն օգնելու համար:*

*Դուք երջանիկ ըլլալու իրաւունք ունիք. Երբեք թոյլ մի տաք, որ ոեւէ մէկը ձեզի հակառակը համոզէ: Դուք երջանիկ եւ յաջողակ ըլլալու իրաւունք ունիք, հետեւաբար կարելի չէ յանձնուիլ:*

*Ներշնչեցէք միւսները. Ներշնչանքի աղբիւր դարձէք ուրիշներու համար՝ սեփական օրինակով ցոյց տալով, որ միշտ պէտք է յառաջ շարժիլ ու չընկրկիլ:*

## ԹԵՒԱՒՈՐ ԽՕՍՔԵՐ ԵՒ ԱՍԱՑՈՒԱԾՔՆԵՐ ԿԵԱՆՔԻ ՄԱՍԻՆ

*-«Ընդունակութիւնը քայլք է, տաղանդը՝ վազք, հանճարը՝ թռիչք»: (Աւետիք Իսահակեան)*

*- «Ճշմարտութիւնը բարձր կը գնահատեմ կեանքէն, որովհետեւ կեանքը անցաւոր է, իսկ ճշմարտութիւնը՝ յաւիտենական»: (Լեւ Կամսար)*

*- «Բռնութիւնը ստեղծած է առաջին ստրուկները, վախկոտութիւնը յաւերժացուցած է զանոնք»: (Ժան Ժաք Ռուսօ)*

*- «Գեղեցկութեան կողքին խելքն ու սիրտը միշտապէս աղքատ բարեկամներու տպաւորութիւն կը գործեն»: (Էթիէն Ռէյ)*

*- «Ամենածիծաղելի ցանկութիւնը բոլորին հաճելի թուալու ցանկութիւնն է»: (Կէօթէ)*

*- «Ընել դիւրութեամբ այն, ինչ ուրիշներու համար դժուար է, այդ է տաղանդը. ընել այն, ինչ տաղանդի համար անհնար է, այդ է հանճարը»:(Ամիէլ)*

*- «Ոչինչ այնպիսի ուշադրութիւն կը գրաւէ ինչպէս մեծութիւնը, ըլլալ հասարակ, կը նշանակէ ըլլալ մեծ»: (Էմըրսըն)*

*- «Վեհ է ոչ թէ այն հոգին, որ կը ներէ, այլ այն, որ ներելու պէտք չ՚զգար»: (Շաթոպրիան)*

*Քո աչքերի անծայր ծովում մեղքն է դողում, Որպէս գարնան մթնշաղում:*

*Քո աչքերում կայ մի քնքուշ բախտի վերյուշ,*
*Արբեցումի ոսկէ մշուշ:*
*(Վահան Տէրեան)*

*Պատրաստեց՝* **ՆԱՐԻՆԷ Ն.**

## 5 ԲԱՆ, ՈՐ ԿԱՐԵԼԻ ՉԷ ԱՐԳԻԼԵԼ ՓՈՔՐԻԿՆԵՐՈՒՆ՝

*Եթէ կ՚ուզէք խելացի ու երջանիկ փոքրիկ դաստիարակել, յատուկ ուշադրութիւն դարձուցէք այն հանգամանքին, թէ անոր ինչ կ՚արտօնէք ընել եւ ինչ՝ կ՚արգիլէք: Բաներ, որոնք հոգեբանները խորհուրդ չեն տար արգիլել փոքրիկներուն.*

*1. Սեփական կարծիքը արտայայտել: Հոգեբանները խորհուրդ կու տան փոքրիկին հետ հաւասարի պէս խօսիլ եւ նման սեփական կարծիքը արտայայտելու կարելիութիւն ընձեռել: Եթէ կ՚ուզէք, որ փոքրիկը ընէ այն, ինչ որ ձեզի պէտք է, անպայման բացատրեցէք, թէ ինչու ճիշդ է ատիկա՝ չսահմանափակուելով միայն «ես աւելի լաւ գիտեմ, թէ քեզի ինչ պէտք է» կամ «որովհետեւ ես այդպէս ըսի» արտայայտութիւններով:*

*2. Որեւէ բան ինքնուրոյն ընել. Կարելի չէ փոքրիկին արգիլել որեւէ բան ինքնուրոյն ընել, օրինակ՝ ուտել, եթէ անգամ ան կ՚աղտոտէ ինքզինք եւ շուրջը: Փոքրիկը մեծ ջանքեր կը գործադրէ նոյնիսկ ուտելու համար, եւ երբ յաջողի, ինքզինք աւելի վստահ կը զգայ:*

*Նոյն ձեւով կարելի չէ անոր արգիլել ինքնուրոյն ստեղծագործել, ըսենք՝ գծել, պարզապէս պէտք է անոր անվտանգ ներկեր տալ: Յիշեցէք, որ ստեղծագործելը կը զարգացնէ փոքրիկին երեւակայութիւնն ու մտահորիզոնը:*

*3. Օգնել. Եթէ փոքրիկը կ՚ուզէ օգնել ձեզի, մի արգիլէք, նոյնիսկ եթէ անոր օգնութենէն աւելի շատ վնաս պիտի հասնի, քան օգուտ: Աւելի լաւ է՝ ցոյց տուէք, թէ ինչ եւ ինչպէս պէտք է ընէ: Խրախուսեցէք զինք եւ շնորհակալութիւն յայտնեցէք, եթէ ամէն ինչ ճիշդ ըրած է: Եթէ մանկութեան տարիներուն արգիլէք միջամտել ձեր գործերուն, ձեզի չ՚օգներ նաեւ, երբ մեծնայ:*

*4. Զգացումները արտայայտել. Փոքրիկը կրնայ տարբեր կերպով արտայայտել իր զգացումները, օրինակ՝ վազել տան մէջ եւ ճչալ: Ատիկա կ՚օգնէ հանգստանալու: Ի հարկէ, պէտք է փոքրիկին բացատրել, թէ ինչպէս պէտք է ինքզինք դրսեւորէ հասարակութեան մէջ, մանկապարտէզը եւ փողոցը, բայց պէտք է նաեւ անոր զգացումները արտայայտելու կարելիութիւն ընձեռել:*

*5. Խաղալ մանկական խաղահրապարակին մէջ. Կարելի չէ փոքրիկին արգիլել սահիլ, բարձրանալ աստիճանէն կամ խաղալ մանկական խաղահրապարակին մէջ: Այո՛, առաջին հայեացքով ասոնք բաւական վտանգաւոր են, բայց եթէ արգիլէք, օր մը ան, ամէն պարագայի, պիտի ընէ այն ամէնը, զոր կ՚ուզէ: Աւելի լաւ է՝ անոր օգնէք սորվելու ճիշդ ձեւով բարձրանալ աստիճանը, կախուիլ օղակներէն եւ այլ մարզանքներ ընել: Այդ պարագային կրնաք վստահ ըլլալ անոր անվտանգութեան համար:*

## ՅՂԻՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ՎՆԱՍԱԿԱՐ ՊՏՈՒՂՆԵՐԸ

*Յղութեան շրջանին կեանքի կարեւորագոյն բաղադրիչներէն մէկը, բնականաբար, սննդականոնն է:*

*Յաճախ առողջութեան բարելաւման համար, պարզապէս, բազմազանութիւն մտցնելու համար՝ յղի կիներ կը սկսին մեծ քանակութեամբ պտուղ օգտագործել: Կարեւոր է յիշել, որ բոլոր պտուղները չեն, որ օգտակար են ապագայ մայրերու համար, իսկ անոնց մէկ մասը կրնայ նոյնիսկ վիժման պատճառ դառնալ:*

*«Վտանգաւոր» պտուղներուն մէջ առաջինը արքայախնձորն է* ananas. *անիկա յակացուցուած է յղութեան ընդհատման վտանգ ունեցող կիներուն համար: Բացի այդ, արքայախնձորը կրնայ վնասել այն յղիներուն, որոնց յղութեան ժամկէտը տասներեք ամիսէն պակաս է: Այսուհանդերձ, այս երկու խումբերուն մէջ չմտնող յղիներուն համար արքայախնձորի հիւթը բաւական օգտակար է, սակայն անիկա պէտք է օգտագործել չափաւոր ձեւով:*

*Գիտնականները պարզած են, որ փափայայի խակ պտուղներուն մէջ կան այնպիսի նիւթեր, որոնք կը յանգեցնեն արգանդի կծկումի: Եւ, հակառակ ասոր, հասած փափայան օգտակար է եւ կարելի է ընդգրկել սննդականոնին մէջ:*

*Երեխայ կրող գեղեցիկ սեռի ներկայացուցիչներուն խորհուրդ չի տրուիր նաեւ չարաշահել խաղողի օգտագործումը, քանի որ յղութեան պարագային այս պտուղը կրնայ բարձրացնել մարմնի ջերմաստիճանը, որ բոլորովին ցանկալի չէ, քանի որ բացասական ազդեցութիւն կրնայ ունենալ երեխայի առողջութեան վրայ:*

*Նշուած խորհուրդներուն զուգահեռ պէտք է յիշել նաեւ, որ յղի կնոջ կերած պտուղներն ու բանջարեղէնը պէտք է մանրակրկիտ ձեւով լուալ, քանի որ կեղեւին վրայի գտնուող մանրէները կրնան նպաստել այնպիսի հիւանդութիւններու զարգացման, ինչպէս հելմինդոզը կամ փարազիդային տոքսոփլազմոզը:*

## ԾԻՐԱՆԷՆ ԵՏՔ ԱՄԵՆԱՕԳՏԱԿԱՐ ՊՏՈՒՂԸ ԽՆՁՈՐՆ Է

*Բրիտանացի գիտնականները համեմատած են խնձորի, պանանի, կիտրոնի, նարինջի ազդեցութիւնը մարդու մարմնին վրայ:*

*Անոնք նաեւ հետազօտած են՝ արդեօ՞ք խնձորի օգտակար յատկութիւնները կը փոխուին՝ կախեալ պտուղի կեղեւի գոյնէն: Պարզուած է, որ խնձորը, անկախ գոյնէն, կը կանխարգիլէ ուռուցքներու յառաջացումը մարմնին մէջ: Կանաչ խնձորի պտղամիսին մէջ համեմատաբար բարձր է բեգդինի պարունակութիւնը: Խնձորի բոլոր տեսակները կը նպաստեն ոսկորներու եւ ակռաներուամրացման, սակայն կանաչը աւելի օգտակար է: Դեղին խնձորը կը բարելաւէ սրտի աշխատանքը, կը սրէ տեսողութիւնը եւ կը նպաստէ մարմնի դիմադրողականութեան բարձրացման:*

*Կարմիր խնձորը կը խթանէ ուղեղի աշխատանքը, խորհուրդ կը տրուի ուտել միզապարկի ու միզուղիներու հիւանդութիւններու պարագային:*

www.massisweekly.com

# ԱՐԹՈՒՐ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ՝ ԱՇԽԱՐՀԻ ԿՐԿՆԱԿԻ ԱԽՈՅԵԱՆ

### ՋՈՒԼՖԱԼԱԿԵԱՆՆ ՈՒ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԸ ՄՆԱՑԻՆ ԱՌԱՆՑ ՄԵՏԱԼԻ



*23-ամեայ Արթուր Ալեքսանեանը երկրորդ տարին անընդմէջ հռչակուեց յունահռոմէական ոճի ըմբշամարտի աշխարհի ախոյեան:*

*Լաս Վեկասում մեկնարկած աշխարհի առաջնութեան 98 կգ քաշային կարգի եզրափակիչում գիւմրեցի ըմբիշը 3:0 հաշուով յաղթեց 2012թ. Լոնտոնի Օլիմպիական խաղերի ախոյեան Ղասեմ Ռեզաիին, որին պարտութեան էր մատնել նաեւ նախորդ տարի:*

*Առաջին մրցափուլում Արթուրը յաղթեց 2:0 հաշուով: Իրանցի ըմբիշին նստեցրին պարտեր, իսկ Ալեքսանեանը կատարեց 2 միաւորանոց հնարք: Երկրորդ մրցափուլի սկզբնամասում արդէն հայ ըմբիշը յայտնուեց պարտերում, բայց Ռեզաին չկարողացաւ կատարել հնարք: Վերջնամասում Արթուր Ալեքսանեանը նաեւ մէկ անգամ գորգից դուրս հրեց մրցակցին եւ, յաղթելով 3:0 հաշուով, պաշտպանեց աշխարհի ախոյեանի տիտղոսը: Ընդ որում՝ հայ ըմբիշն անցկացրած 5 գօտեմարտերում ընդամէնը մէկ միաւոր տուեց մրցակիցներին:*

*Յիշեցնենք, որ Արթուր Ալեքսանեանը պայքարը սկսել էր 1/16 եզրափակիչից՝ ախոյեանական ճանապարհին յաղթելով ճափոնացի Յասուհրօ Յանուիրային (8:0), նորվեգացի Մարտին Նիլսենին (4:0), ուկրաինացի Դմիտրի Տիմչենկոյին (10:1), իսկ կիսաեզրափակիչում ուժեղ էր գտնուել ռումինացի Ալեքսուս Ջիուրարիուից (9:0):*

*Աշխարհի առաջնութեան առաջին օրը պայքարի մէջ էին մտել նաեւ 66 կգ քաշային Միհրան Յարութիւնեանը եւ 75 կգ քաշային կարգում աշխարհի ախոյեան Արսէն Ջուլֆալակեանը, որոնք պարտուեցին պրոնզէ մետալի համար գօտեմարտերում:*

## ԵՒՐՈՊԱՅԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ԶՏՈՒՄ

### ՍԵՐՊԻԱ - ՀԱՅԱՍՏԱՆ 2-0

*Եւրոպայի ախոյեանութեան զտումի մրցումներու 7-րդ հանգրուանի իր մրցումին Հայաստանի հաւաքականը Սերպիոյ Նովի Սատ քաղաքի »Քարաճորճէ« մարզադաշտին վրայ մրցեցաւ Սերպիոյ դէմ եւ պարտուեցաւ 0-2 հաշիւով: Հայաստանի տկար կէտը դարձեալ եզրային պաշտպաններն էին, որոնք չկրցան միշտ փակել եզրէն եկող հակառակորդին փոխանցումները: Լեւոն Հայրապետեանը 21րդ վայրկեանին Սերպիոյ մէկ յարձակումը զսպելու ատեն սխալմամբ գնդակը ղրկեց սեփական դարպաս: 53րդ վայրկեանին Ատէմ Լիայիչը նշանակեց Սերպիոյ երկրորդ կոլը: Երկրորդ կիսախաղին Կամօ Յովհաննիսեանը փոխարինեց Օզպիլիսը, Կորեանը՝ Փիցելլին եւ Արտեմ Սիմոնեանը՝ Գէորգ Ղազարեանը, սակայն անօգուտ:*

### ՀԱՅԱՍՏԱՆ - ԴԱՆԻԱ 0-0

*Եւրոպայի ախոյեանութեան գրուանին, իններորդ խմբակին մէջ Հայաստանը ընդունեց Դանիոյ հաւաքականը »Վազգէն Սարգսեան«ի անուան հանրա պետական մարզադաշտին վրայ: Դանիան պէտք է յաղթէր Փորթուկալին հետ ապահովելու համար աւարտական հանգրուանի տոմսը, իսկ Հայաստան ամէն յոյս կորսնցուցած ըլլալով, լաւ ձեւով կ՚ուզէր աւարտել զտումի մրցումները: Առաջին կիսախաղը անցաւ յարաբերաբար պաղ, բացի մի քանի դանիական առիթներէ, սակայն երկրորդ կիսախաղին Հայաստան աւելի աշխուժացաւ եւ ստեղծեց մի քանի լաւ առիթներ:*

*Մրցումը աւարտեցաւ առանց կոլերու հաւասարութեամբ, բան մը որ ձեռնտու չէր Դանիոյ համար, նկատի առնելով, որ վերջին մրցումը պիտի կատարէ Փորթուկալի դէմ եւ Ալպանիան մէկ մրցում պակաս կատարած է:*

## Ռեյնգոլդ. Եթէ Եուրա Մովսիսեանը ցանկանում է հեռանալ, ապա պէտք է թոյլ տալ

*Մոսկուայի «Սպարտակի» վետերան Վալերի Ռեյնգոլդը մեկնաբանել է Հայաստանի հաւաքականի յարձակուող Եուրա Մովսիսեանի հնարաւոր հեռանալը ռուսական խումբից:*

*«Մովսիսեանն այժմ խաղում է իր համար սովոր պայմաններում: Կան թիմակիցներ, որոնք գնդակ են ապահովում, մարզիչի լաւ վերաբերմունք, բարենպաստ միջավայր: Այդ ամէնի արդիւնքում նա այժմ լաւ է խաղում: Նա շատ լաւ որակներ ունեցող ֆուտբոլիստ է, ունի լաւ արագութիւն, ինչը գլխաւոր գործօնն է, երկու ոտքով էլ լաւ է հարուածում:*

*Շատ ափսոս կը լինի, եթէ Եուրան հեռանայ «Սպարտակից»:*

*Բայց «Սպարտակում» միշտ եղել է ժողովրդավարութիւն: Եթէ ֆուտպոլիստը չի ցանկանում մնալ, ապա պէտք է նրան բաց թողնել:*

*Ըստ ոչ պաշտօնական տեղեկութիւններով, հայ ֆուտբոլիստին գնելու ցանկութիւն ունի Անգլիայի Պրեմյեր լիգայի ակումբներից մէկը:*




## ԱՍՏՂԵՐԸ ԻՆՉ Կ'ԸՍԵՆ

**ԽՈՅ Մարտ 20-Ապրիլ 19**
Այս շաբաթ ինքնապաշտպանութեան կարողութիւնդ տկար է, եւ դիւրութեամբ պիտի զիջիս եւ նահանջես: Յարաբերութիւններդ կրնան վտանգուիլ, սխալ մեկնաբանութիւններէ ուշադիր եղիր: Կարճ շրջապտոյտ մը շատ հաւանական է շաբաթավերջին, որը շատ կարեւոր է մտային եւ ֆիզիքական լաւութեանդ համար:
Բախտաւոր թիւերդ են: 2,6,15,22,24

**ՑՈՒԼ Ապրիլ 20-Մայիս 20**
Այս շաբաթ նիւթական եւ ընկերային գետնի վրայ շատ յաջող պիտի ըլլայ: Գաղափարներդ բաժնեկցիր եւ քու կարգիդ իրագործէ զանոնք: Ուրախութիւնդ բարեկամներու մէջ պիտի փնտռես, բայց տանդ մթնոլորտը աւելի առողջապահական է կեանքիդ յաջող յարատեւման համար: Պահանջատէր մի ըլլար:
Բախտաւոր թիւերդ են: 3,14,19,20,30

**ԵՐԿՈՒՈՐԵԱԿ Մայիս 21-Յունիս 20**
Այս շաբաթ շատ յստակօրէն եւ ճշգրտօրէն անձի մը նկատմամբ ունեցած զգացումներդ պիտի բացայայտես: Դրացիիդ հետ կարեւոր է որ հաշտութեամբ ապրիս: Գործի ծրագիրներդ լաւատեսութեամբ պիտի յաջողցնես, մի՛ բեռնաւորեր դուն քեզ, օրը օրին շարունակէ ընելիքներըդ:
Բախտաւոր թիւերդ են: 1,11,25,33,34

**ԽԵՑԳԵՏԻՆ Յունիս 21-Յուլիս 22**
Այս շաբաթ տրամադրութիւնդ քիչ մը պիտի վատթարանայ եւ հակառակութիւն ստեղծէ տանդ մթնոլորտին մէջ: Ժամանակը բնաւ յարմար չէ նոր որոշումներու եւ ծրագիրներու: Մի դիմադրեր անձնական պէտքերուդ եւ փորձէ հաւատարմութեամբ հետեւիլ օրէնքներուն: Անակնկալ լուր մը պիտի զուարճացնէ քեզ:
Բախտաւոր թիւերդ են: 3,15,16,22,39

**ԱՌԻՒԾ Յուլիս 23-Օգոստոս 22**
Այս շաբաթ նեղութիւններդ քեզ շփոթութեան պիտի մատնեն, բայց մի վհատիր, անպայման պիտի դիմագրաւես եւ յաղթահարես անոնց: Բարեկամի մը հետ տեսակցութեան ընթացքին, հին յիշատակներ պիտի վերանորոգուին, չ՚ըլլայ թէ հին զգացումներդ վերստին արթննան: Ճշդապահ եղիր:
Բախտաւոր թիւերդ են: 1,16,17,23,35

**ԿՈՅՍ Օգոստոս 23-Սեպտեմբեր 22**
Այս շաբաթ յարմար առիթն է երկար սպասուած մեծ գնում մը կատարելու: Մի ծուլանար օրական գործերդ օրը օրին ամբողջացնելու: Գործի համաձայնութիւններ շատ հաւանական է որ ի շահ քեզի ընթանան, ուրախ եղիր: Յարաբերութիւնդ մի խախտեր վաղեմի ծանօթի մը հետ:
Բախտաւոր թիւերդ են: 1,19,21,25,33

**ԿՇԻՌՔ Սեպտեմբեր 23-Հոկտեմբեր 22**
Այս շաբթուայ առաջին քանի մը օրերը, քիչ մը յոռետես կրնաս ըլլալ, սակայն շաբաթավերջը շատ ուրախ եւ զուարճալի սփոփանք պիտի ունենաս: Երազներդ եւ երեւակայութիւններդ անպայման օր մը պիտի իրականանան, բայց մի աճապարեր: Սիրելու եւ սիրուելու տենչդ քեզ պիտի մղէ տարօրինակ քայլեր առնելու:
Բախտաւոր թիւերդ են: 5,8,19,20,30

**ԿԱՐԻՃ Հոկտեմբեր 23-Նոյեմբեր 21**
Այս շաբաթ անձնական յատկանշական դէպք մը շատ պիտի մտահոգէ քեզ: Բնական տաղանդով լեցուն անձ մըն ես, ինչու չես օգտագործեր զանոնք: Զաւակներուդ իտիալն ես, այնպիսի ապրելակերպ ունեցիր որ անոնք չյուսախաբուին՝ այլ հետեւին օրինակիդ:
Բախտաւոր թիւերդ են: 11,15,21,30,31

**ԱՂԵՂՆԱՒՈՐ Նոյեմբեր 22-Դեկտեմբեր 20**
Այս շաբաթ շատ վերիվայրումներ պիտի ըլլան: Որոշ հարցեր անհասկնալի պիտի թուին ըլլալ քեզի, հաշուի մի առներ զանոնք եւ գիտցածիդ հետեւէ: Մի ձգտիր բարձրաստիճան պաշտօններու, քանի որ անոնք անհնար են իրականացնելը. Սխալ դատողութիւններ ընելով մի վիրաւորեր կողակիցդ:
Բախտաւոր թիւերդ են: 1,5,14,28,39

**ԱՅԾԵՂՋԻՒՐ Դեկտեմբեր 21-Յունուար 19**
Այս շաբաթ նախատեսուած ծրագիր մը պիտի հետապնդես սիրելիի մը աջակցութեամբ: Կարգ մը կազմակերպութիւններու հետ ունեցած յարաբերութիւնդ յաջողութեան դուռ մը պիտի բանայ քեզի:
Բախտաւոր թիւերդ են: 3,6,15,16,21

**ԾՈՎԱՆՈՅՇ Յունուար 20-Փետրուար 18**
Այս շաբաթ հակառակ քու մեղմ բնաւորութեանդ, շատ ինքնավստահ եւ վճռական քայլեր պիտի առնես: Եթէ ընտանեկան պարագաներդ քեզ կը նեղեն, փոխանակ նեղուելու, լռութեամբ եւ մեղմութեամբ ընդունէ հարցերը:
Բախտաւոր թիւերդ են: 2,5,8,22,34

**ՁՈՒԿ Փետրուար 19-Մարտ 20**
Այս շաբաթ ներդաշնակութեամբ եւ համաձայնութեամբ պիտի տիրապետես բարձրաստիճան պաշտօնի մը: Կառավարական հարցի մը շուրջ երկխօսութիւններ պիտի ըլլան: Կողակիցիդ նկատմամբ փափկանկատ եղիր, նախանձախնդրութիւնդ եւ փափաքներդ անտեղի պիտի թուին ըլլալ:
Բախտաւոր թիւերդ են: 7,15,16,27,31

## ԱՐՄԷՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԵԱՆ

*Շարունակուածէջ 7–էն*

*մը ձեռնարկներ կազմակերպեց Թէքէեանի Կլենտէյլ–Փասատինա մասնաճիւղին հետ, որոնք մեծ յաջողութեամբ պսակուեցան: Այդ տարիներուն էր, որ մենք բախտը եւ պատիւը ունեցանք մօտէն ծանօթանալու եւ ճանչնալու իր կենդանութեան իսկ իր անմահութիւնը կերտած մեր Թանկագին մեծարեալին:*

*Մենք այդ տարիներուն էր որ ճանչցանք մեր այսօրուան Յոբելեարը, այս հսկային մէջ տեսնելով համեստութեան, արհեստավարժութեան, կազմակերպչական կարողութիւններով նկարագրի գիծերը, երգարուեստի ովկիանոսներու մէջ լողացող կէտ ձուկ մը, այս բոլորէն վեր եւ աւելի՝ աննման հայրենապաշտ եւ ազգասէր հայ մը:*

*Արդարեւ, որքան տարիները Թաւալին, այնքան պիտի պայծառանայ լուսաւոր դէմքը Արմէն Մանդակունեանի հայ երաժշտութեան երկնակամարին վրայ եւ աւելի պիտի գնահատուի ու արժեւորուի մեր յոբելեարին վաստակը:*

*Սեպտեմբեր 19-ի մեծարանքի այս ձեռնարկին, վստահ ենք, որ յորդահոս բազմութիւն մը ներկայ պիտի ըլլայ եւ յոտընկայս պիտի ծափահարէ մեր յարգարժան մեծարեալին, շնորհակալութիւն յայտնելով եւ անոր կուրծքը զարդարելով՝ ժողովուրդի սիրտէն բխած սիրոյ եւ գնահատանքի մեծագոյն շքանշանով:*

*Վարձքդ կատար եւ նորանոր ամեակներ, սիրելի վարպետ:*

## ԳԱԼ ՏԱՐԻ՝ ՎԱՆ

*Շարունակուածէջ 15–էն*

*պատկանէր: Ոմանք կը կարծեն որ «Անի»ն հայոց «Անահիտ» չաստուածուհիին կրճատուած անունն է:*

*961 Թուին, Բագրատունեաց Աշոտ Գ. Թագաւորը (953-977), Թագաւորութեան մայրաքաղաքը Կարսէն կը փոխադրէ Անի: Սմբատ Բ.-ի ժամանակ (977-987), Անին շատ արագ կը սկսի բարգաւաճիլ ու մեծնալ: 992-ին Էջմիածնի Կաթողիկոսը իր գահը կը փոխադրէ Անի: Այդ շրջանին Անին կ՛ապրէր իր Ոսկեդարը: Այդ ժամանակներուն, Անին կը ներկայացնէր հայ ժողովուրդի մտաւորական կարողականութիւնը, զինուորական ուժը, ստեղծագործ ոգին, շինարարական յատկութիւնները, ազատ եւ անկախ ապրելու ոգին, եւ հոգեմտաւոր Թռիչքները: Միջին Արեւելքի մէջ Անին այն փայլուն աստղն էր որուն նախանձով կը նայէին դրացի երկիրներու մայրաքաղաքները:*

*Անին իր փառքի գագաթնակէտին հասաւ Գագիկ Ա. Թագաւորի օրով (989-1020): Իր յաջորդը, Յովհաննէս- Սմբատ, վախնալով որ Բիւզանդիոյ Վասիլ Բ. Կայսրը իր վրայ կրնայ յարձակիլ, զինք իր յաջորդը նշանակեց: Երբ Յովհաննէս-Սմբատ 1041-ին մեռաւ, Բիւզանդիոնի նոր կայսրը, Միքայէլ Դ., Անիի գահը պահանջեց: Գագիկ Բ. Թագաւորը ընդդիմացաւ: Բիւզանդիոն բանակներ ղրկեց, որոնք աւերներ գործելով հանդերձ, միշտ պարտուեցան հայերէն: Սակայն, 1045-ին, Կայսրը դաւադրաբար խաղի բերելով Գագիկ Բ. Թագաւորը, զինք Կ.Պոլիս հրաւիրեց եւ հոն պատանդ պահեց զինք: Բիւզանդացիք գրաւելով Անին, վերջ տուին Բագրատունեաց Թագաւորութեան եւ հայկական բանակը ցրուեցին: Այսպիսով, ոչ միայն Հայաստանը անպաշտպան մնաց Թրքական-սելճուկեան հորդաներու յարձակումներէն, այլ եւ Բիւզանդական կայսրութիւնը ենթակայ եղաւ Թրքական ցեղախումբերու յարձակումներուն: Հայ պատմագիր Արիստակէս Լաստիվերտացի կը վկայէ որ Բիւզանդացիք չորս անգամ յարձակեցան Հայաստանի վրայ զայն աւերելով, բնակչութիւնը ջարդելով եւ բազմաթիւ գերիներ վերցնելով: 1064-ին, Ալփ Արսլան, սելճուգ եւ Թուրք մեծաթիւ բանակներով շրջապատեց Անին եւ վերջապէս 25 օր ետք գրաւեց զայն, աւերեց, կողոպտեց ու ժողովուրդը ջարդեց: Արաբ պատմագիր Շիպդ Իպն ալ Ճավուզագի ականատես մը վկայակոչելով կը գրէ. «Բանակը քաղաք մտաւ, ժողովուրդը ջարդեց, կողոպտեց եւ այրեց: Փողոցները լեցուն էին դիակներով, չէինք կրնար քալել: Գերի տարուածներուն Թիւը 50,000-էն պակաս չէր»:*

*(Շարունակելի)*

## ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԿԵԱՆՔԻ ՈՒՂԻՆ

*Շարունակուածէջ 16–էն*

*Ան եղած է գիտական ղեկավարն ու խորհրդատուն շուրջ 50 դոկտորական եւ Թեկնածուական աւարտաճառեր պաշտպանած հայրենի Թէ օտար արաբագէտներու, որոնք իր ցուցմունքներով եւ փորձառութեամբ հմտացած են արաբագիտութեան, Միջին Արեւելքի պատմութեան, քաղաքական իսլամի բնագաւառներուն մէջ: Արեւելագէտներու սերունդ մը ամբողջ անցած է անոր շունչով, որոնք երախտագիտութեամբ կը յիշեն իր անմնացորդ նուիրումը հայրենի քատրեր պատրաստելու մէջ:*

*Միւս կողմէ, ի մի բերելով իր գիտական աշխատութեանց երկար ցանկը, կարելի չէ չհիանալ այն ժառանգութեան, որ անկտակած է գալիք սերունդներուն: Շուրջ 500 գիտական յօդուածներ եւ աւելի քան 80 մենագրութիւններ կը պատկանին անոր գրիչին (անոնցմէ շատեր լոյս տեսած են արտասահմանի մէջ՝ ԱՄՆ, Անգլիա, Գերմանիա, Իտալիա, Ռուսաստան, Թուրքիա, Ճափոն, Քորէա, Լիբանան, Սուրիա, Գանատա, Իրան, Եգիպտոս եւ այլն.): Միջին Արեւելքը իր լայն հասկացութեամբ հանդիսացած է անոր հետաքրքրութեան տեսադաշտը: Լաւապէս ըմբռնած է անոր դերն ու արժէքը Հայաստանի եւ հայ ժողովուրդին համար, խւրացուցած է զայն իր ամբողջ էութեամբ եւ հիմնախնդիրներով՝ Իրաք, Իրան, արաբ-իսրայէլեան հակամարտութիւն, պաղեստինեան հարց, Լիբանան, Սուրիա, իսլամ եւ այլն: Գործերէն յիշենք՝ «Ազգային-Ազատագրական Պայքարը Իրաքում (1945-1963 Թթ.)» (1964), «Ազգային-Ազատագրական Պայքարը Լիբանանում» (1967), «Ազգային-Ազատագրական Շարժումը Իրաքում (1917-1958)» (ռուս. 1976), «Անկախ Սիրիական Հանրապետութեան Ստեղծումը» (ռուս. 1968), «Իրան. Այաթոլլահ Խումէյնիի Դարաշրջանը» (2004): Սակայն, հիմնարար աշխատութիւնը կը մնայ «Արաբական Երկրների Պատմութիւն» քառահատորեայ (2004-2007) աշխատութիւնը, որ 2007-ին արժանացաւ Հայաստանի Հանրապետութեան Նախագահի մրցանակին եւ 2011-ին Թարգմանուեցաւ արաբերէնի եւ հրատարակուեցաւ Հալէպի մէջ:*

*Պատմաբան Ն. Յովհաննիսեան հեղինակն է նաեւ բազմաթիւ քաղաքական օգտաշատ աշխատութեանց. «Դիւանագիտութիւն» (1997), «Հայաստանի Արտաքին Քաղաքականութիւնը» (անգլ. 1998), «Ղարաբաղեան Կոնֆլիկտը» (անգլ. 2004): Հայկական Ցեղասպանութեան նիւթը եւս ընդգրկած է իր աշխատութեանց մէջ. «Հայոց Ցեղասպանութեան Պատճառների Լուսաբանութիւնը Եւ Գնահատականը Արաբական Ժամանակակից Պատմագրութեան Մէջ» (1996), «Հայոց Ցեղասպանութիւնը» (անգլ. 2005), «Հայոց Ցեղասպանութիւն. Արմենոցիդ՝ Ամենացեղասպան Ցեղասպանութիւն» (2009) (լոյս տեսած 10 լեզուներով՝ անգլերէն, ֆրանսերէն, գերմաներէն, ռուսերէն, Թրքերէն, ճաբոներէն, հունգարերէն, հայերէն, արաբերէն, պարսկերէն), որ 2010-ին ստացած է Հայաստանի Մշակոյթի Նախարարութեան առաջին կարգի տիպլոմը: «Արմենոցիդը Ճանաչուած Ցեղասպանութիւն է» (2010): Ան մասնակցած է նաեւ ընդհանուր պատմութեան (Նորագոյն շրջան) դասագիրքերու պատրաստութեանց: Ն. Յովհաննիսեան եղած է եռանդուն պետական-քաղաքական գործիչ: Միջին Արեւելքի հայ համայնքներուն մէջ, ԱՄՆ-ի, Եւրոպայի եւ Խորհրդային Միութեան տարածքին հանդէս եկած է դասախօսութիւններով, հանդիպումներով, մասնակցած գիտաժողովներու եւ հաստատած բազմաթիւ անձնական եւ պետական կապեր: Եղած է ջատագով հայարաբական բարեկամութեան, հայ համայնքներու զօրացման, վերլուծած ազգամիջեան հակամարտութիւններ, կարեւորած*

*Հայաստանի կապերը արաբական աշխարհին հետ: Կառավարական պաշտօնական պատուիրակութեան կազմերով այցելած է Սուրիա, Լիբանան, Իրաք, Յորդանան, Լիպիա, Հնդկաստան, Չինաստան եւ այլն. հանդիպած Հաֆէզ Ասատի, Ս. Ֆրանժիէի, Արաֆաթի եւ ուրիշ նախագահներու հետ: Ուշագրաւ է Լիբանանի հայ համայնքին նկատմամբ իր հոգատար վերաբերմունքը, մանաւանդ քաղաքացիական պատերազմի օրերուն: 1979-ին, երբ տեղի ունեցան յարձակումներ լիբանանահայութեան դէմ, ինք կը գտնուէր Լիբանան եւ որպէս Խորհրդային Հայաստանի պետութեան ներկայացուցիչ իր ազդու ներդրումը ունեցաւ հակահայ գրգռութեանց զսպման մէջ: Անոր հանդիպումները ՊԱԿ-ի ղեկավար Եասէր Արաֆաթի, «Ամալ» շարժման ղեկավարներէն Հուսէյն Հուսէյնիի հետ կը մնան յիշարժան դրուագներ: Այդ իրադարձութեանց շուրջ ան հրապարակեց «Լիբանանեան Ճգնաժամը Եւ Լիբանանի Հայ Համայնքի Դիրքորոշումը (1975-1982 Թթ.)» գրքոյկը (1982):*

*Հակառակ յառաջացեալ տարիքին, ան կը մնայ գործունեայ եւ պատնէշի վրայ՝ երբ կարիքը զգացուի իր մասնակցութեան: Այսպէս, 2014 Յունիսին, Էջմիածնի մէջ կազմակերպուած Սուրիոյ տագնապին նուիրուած միջ-կրօնական գիտաժողովին հանդէս եկաւ արժէքաւոր զեկուցումով. կամ՝ 2015-ին Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակին առիթով ուղղուեցաւ Պաղտատ՝ իր հեղինակաւոր խօսքը ըսելու ցեղասպանութեան յատկացուած գիտական ժողովներու: Իր վերջին հատորը վերնագրուած է «Հայոց Ցեղասպանութիւնը Հաստատուած Է Միջազգային Գիտական, Իրաւական Եւ Մարդու Իրաւունքների Հանրութեան Կողմից» (2015):*

*Այնուամենայնիւ, վաստակաշատ գիտնականին ծննդեան 85-րդ տարեդարձին առիթով արեւշատութիւն կը մաղթենք անոր: Նաեւ շնորհակալութիւն իր պատկառելի եւ անուրանալի ներդրումին համար՝ մանկավարժական, ազգային-պետական, գիտական ու քաղաքական ծառայութեանց համար, ակնկալելով՝ որ իր հարուստ կենսապատումին յուշերը ամփոփուած կը տեսնենք օր մը հատորի մը մէջ, որ վստահաբար պիտի ըլլայ հաւաստի եւ օգտաւէտ վկայութիւն մը մեր ժամանակակից պատմութեան համար:*

### ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

*ԹՈՐՈՍ ՃԷՐԷՃԵԱՆԻ մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Յարութիւն եւ Աստղիկ Սիւրմէլեան իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար քրոջ Մայրանուշ Ճէրէճեանին:*

*Առ այդ $100 կը նուիրէ «Մասիս»ի բարգաւաճման ֆոնտին:*

### ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

*ԹՈՐՈՍ ՃԷՐԷՃԵԱՆԻ մահուան տխուր առիթով Տիկ. Արտեմիս Շողկոմեան իր ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան պարագաներուն:*

*Առ այդ $100 կը նուիրէ «Մասիս»ի բարգաւաճման ֆոնտին:*

### ՅԱՒԱԿՑԱԿԱՆ

*ԹՈՐՈՍ ՃԷՐԷՃԵԱՆԻ մահուան առիթով Տէր եւ Տիկ. Վահան եւ Անժէլ Գազէզեան իրենց ցաւակցութիւնը կը յայտնեն հանգուցեալի զաւակներուն եւ ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար քոյրերուն Մայրանուշ Ճէրէճեանին եւ Ագնէս Փշտիկեանին:*

*Առ այդ $100 կը նուիրէ «Մասիս»ի բարգաւաճման ֆոնտին:*

# ARMENIAN INDEPENDENCE DAY FESTIVAL

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՆ Փառատօն

Կազմակերպութեամբ Organized By

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION

OFFICIAL SPONSOR

Car Pros Kia Glendale

SPONSORS

Muse Dental Group

Mission Wine & Spirits — Your Destination for Sophisticated Taste

Vrej Pastry

Wells Fargo

Kradjian Importing Co., Inc.

Glendale West Pharmacy and Medical Supply

SunIntegration

Cedarlane

Umpqua Bank

Glendale Wholesale Electrical Supply

Cafe Bravo

Sarkis

Tamara

The Village Restaurant

Tower IV Pharmacy

MEDIA SPONSORS

Մասիս

www.massispost.com

## SUNDAY SEPTEMBER 20, 2015

## VERDUGO PARK GLENDALE

1621 Canada Blvd., Glendale, CA, 91206

Starting at 11:00 am

GENERAL SPONSOR

INNOVATIVE Designs & Manufacturing, Inc.

By TED & NORA KOROGHLIAN




Food Service Provided By:

Raffi's Market and Catering By Hovsep & Ara

FREE ADMISSION
ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ

Live Music
Dancing
Art Work Exibition
Kids Games
Armenian Food

ԵՐԳ ՈՒ ՊԱՐ
ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԵՐՈՒ
ԵՒ ԳԻՐՔԵՐՈՒ ՎԱՃԱՌՔ
ՓՈՔՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ
ՀԱՄԱԴԱՄ ՃԱՇԵՐ

To reserve your vendor booth
please call Nor Serount Cultural Association
Ձեր կրպակները ապահովելու համար
Հեռաձայնեցէք Նոր Սերունդ Մշակութային Միութեան
(818) 391-7938